



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ltn

815





ՀԱՅ ԵՐԵՐԱՆՅՈՒ

ԸՆԾԱՅ

ԳԱՐԻ ԻՍՏԻՍԵԱՆԻՅ

ՀԱՏՈՒ Ա.



1861

ՏՓԻՒՍ

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

Գ. ՄԵԼԻՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ Հ. ԷՆՑԻՍՏԵԱՆՑ



1999





## ԵՐԵՒԻ ՍՐՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԷ :

**Մ**ամառը չոլումը՝ կամ թէ հէնց քաղքումը,  
 Ի՞նչքան աղքատներ, խեղճեր եմանում.  
 Ի՞նչպէս շնորհակալ եմ՝ Քեզնից՝ իմ Աստուած,  
 Ինչ որ Գու արել ես ու անում ինձ համար:

Կարելի է ուրիշից աւելի քիչ եմ արժանի,  
 Բայց Գու ինձ վրայ էդպէս ողորմած ես էլի.  
 Ես կուշա եմ, պակաս ինձ սէինչ չէ,  
 Բայց ուրիշը կարօտ է մէկ կտոր հացի էլ:

Քուչումը աննում եմ ես ի՞նչքան երեխերը,  
 Շորերը գժտած, իրանք խեղճ, անտէր.  
 Բայց ես ունիմ ծնողք, ապրուստ ու տաք տուն,  
 Ու շրեր մէկքանի տեսակ ու սիրուն:

Շատ քամբախտ կայ, որ՝ դաղրած ժամանակը,  
 Չգիտէ խեղճը, ինչտեղ դնջանայ.  
 Բայց ինձ համար տանը պատրաստ է միշտ,  
 Փափուկ տաք գոգէնք, որ ես քնեմ հանդիստ:

Կայ երեխայ, որ անտէրութէնից,  
 Չգիտենալով՝ մեղքեր է գործում.  
 Բայց ինձ ամէն օր սովրեցնում են ասել,  
 Քո անունը ու քո պատու իրանքը կատարել:

**Ա**հա՛ էս պարզեւներըն ինձ ամէն օր  
 Տալիս ես ողորմած Հայր երկնաւոր,  
 Փնփք Քեզ, փնփք Քեզ, իմ Յտեղծող,  
 Քո ինձ տուած ամէն պարզեւներուդ համար:

Բայց էլի մէկ բանեմ խնդրում Քեզնից,  
 Ամենաբարի, ո՞վ իմ Արարիչ,  
 Ամէն բանով լեքն եմ, չէ՛ ինձ բան պակաս,  
 Միայն սիրտս է ցաւում, հոգիս չէ՛ հանդարտ :

Երբ որ տեսնումեմ ես աղքատ, կարևոր,  
 Ու ինքս եմ հարուստ բախտաւոր-  
 Թո՛ղ պակսին ինձմէն աւելորդ բաներ,  
 Բոց թո՛ղ չքաւոր չլինն աղքատներ :

Սիրտս մղկտում է, երբ որ ես տեսնումեմ,  
 Ինձ նման երեխերք, աղքատ, պատրտած .  
 Եւ ես նրանց առջևը գեղեցիկ հագած .  
 Թո՛ղ ես չունենամ էգպիսի շորեր :

Ատլաս փարջի տեղ թո՛ղ մահուդ հագնեմ,  
 Բայց որ ուրիշին ջլիս (՝) տկուր չտեսնեմ ;  
 Ուղումեմ, որ ամէն երեխայ ունենայ,  
 Ինչպէս ես՝ ապրուստ, տուն, կերակուր, շոր :

Երանի՛ կուրլի ինձ, երբ որ գիտենամ,  
 Որ ամէն աղքատ, որբ, խեղճ՝ երեխայ .  
 Ինձ նման տէր ունի, որ նրանցը պահպանէ,  
 Ու Քո պատուիրանքը նրանցը սովերցնէ :

Փառք եմ Քեզ տալիս Արարիչ, Ստեղծո՛ղ,  
 Քո ամէն ինձ տուած բարութեան համար .  
 Կատարէ՛ և էս իմ սրտիս խորհուրդը,  
 Որ ես լիովին ըլիմ բախտաւոր :

(1) Բոգրովին :

## ԶԱՏԿԻ ՇԱԲԹԻ ԻՐԻԿՈՒՆԸ

ԹԻՖԼԻՉՈՒՄԸ :



Զատիկի շաբթի իրիկունն էր: Զանգակներու « Ժա-  
մանակը մօտեցել էր :

Ա՛լս, ի՛նչպէս սիրելի է էս տօնը: Ախար էս իրի-  
կունն ամէնքը կուլսէին պատարագին մեր Աստու յա-  
րութեան համբաւը: Էնդուր համար էլ ամէնի երեսին էս  
իրիկնապահը ուրախութիւն էր երևում: Ու դորդ, ի՛նչպէս  
չինդայ մարդ էսպիսի օրին. ու մանաւանդ ի՛նչպէս քաղ-  
ցրը ու սիրելի է էս տօնը երեխանց համար, էնդուր որ  
մեր Աստուած իր յարութէնով կարմիր կարմիր ձուաներ է  
բախշում իր սիրած երեխանցը:

Քուչէքումը <sup>(1)</sup> զալմաղալը <sup>(2)</sup> կամաց կամաց <sup>(3)</sup> ըս-  
կսում էր պակսիլ. մէյդանը <sup>(4)</sup> ու փողոցները <sup>(5)</sup> կամաց  
կամաց դարդրկվիլ էին սկսում: Էնդուր, որ ով ինչ ծախե-  
լու ունէր՝ կամ ծախել էր, կամ թէ ինչ բան մնացել էր  
իրան առանց ծախելու, հաւաքում էր, որ դուքանը <sup>(6)</sup> կոխպէ  
ու գնայ տուն, նոր շորերը հագնէ, որ հասնի իրիկունն պա-  
տարագին, որ տեղ որ մեր Աստու սուրբ յարութեան համ-  
բաւը կուլսէր. Ինչպէս որ ծախողները պակսում էին, էն-  
պէս էլ առնողները, էնդուր համար որ, ով որ զատիկի հա-  
մար առնելու բան ունեցել էր, արդէն վաղուց էր իր պա-  
տրաստութիւնը տնտեսիլ-կանգնած էին միայն դեռ էլի դուք-

(1) փողոցումը (2) արձուկը. (3) փոքր. (4) վաճառատեղի հրապա-  
րակ Թիֆլիզումը. (5) վաճառատեղի փողոց. (6) շուկայ:

ներու առջևը էն մարդիկը, որնք որ միայն օրուան աշխատանքով են ապրում, ու խեղճերը էնքան փող <sup>(1)</sup> միասին չունին պատրաստ, որ մէկ կամ երկու օր առաջ իրանց պատրաստութիւնը տեսնեն: Եւ ահա՛ սրանք՝ ուրիշ օրերից յետ գցած մէկ քանի շայով <sup>(1)</sup> ու էն օրուան դադած <sup>(2)</sup> փողն էլ վրէն գրած՝ դեռ էլի դուքներու առջևն էին կանգնած, ու զատուութին համար մէկը՝ կերակրեցին, միւսը՝ իր օղլուշաղի <sup>(3)</sup> համար նոր նոր հագնելու բաներ էր առնում, որ զատիկ կիրակին իր կնիկը կամ աղջիկը կամ որդիքը մէկ քիչ էլա զուքած <sup>(4)</sup> ըլին: Եւ տես՝ մէկը՝ ձեռին աղլուխը <sup>(5)</sup> բռնած՝ մէյզնէմէն տուն էր գնում, ու էն աղլուխի մէջը ուլ գիտէ, ի՞նչ չուկար. միւսը՝ նոր նոր մաշիկներ էր առել իր պատիկ աղջկայ համար, ու թղթումը փաթթած շտապում էր տուն, որ ուրախացնէ իր Մարիամին կամ Նատոյին. մէկէն էլ նոր սիրուն գդակ էր առել իր որդու համար ու գտակը ձեռին՝ ուրախ ուրախ շտապում էր տուն. նորափեսէն էլ ալ ծուղէք <sup>(6)</sup> ու զար քօշիք էր վագեցնէում տուն իր նորահարս կնգան ընծայ: Բայց ամէնից լաւ տեսնելուն էր՝ ինչպէս պատիկ պատիկ, սիրուն սիրուն գառներուն. ու էնպէս սիրուն: որ հեռուանց կանգնած էլ պաշտնէլ էլի ուզում՝ ձեռին բռնած՝ տանում էին տուն, ու խեղճ՝ գառներն էլ կարծես թէ հասկանում էին, որ միւս օրը պէտք է մորթուին, բղղում էին ու էնպսի խղճալի ձէնով, որ ցաւ էին

(1) 5 կոպէկ արծաթ, մօտ. 1 դուրուշ. (2) աշխատած. (3) բնտանիքի. (4) զարգարած. (5) թաշկինակ. (6) կանանց տօր ամսներն են:

զցում մարդուս սրտի մէջ : Քուչէքումն էլ կամ քաղքեմէն զուրս սարերու վրայ փոքր տղերք, որոնց համար իւրանց հէրերը մէկ քանի օր առաջ էին դառները առել, սրբանց վզին գոյն գոյն թոկերը (1) գրցած՝ սրանցը ման էին ածում կամ արածել էին տալիս, ու 'ի հարկէ որ առանց չարչարելու էլ չէին թողնում էս անմեղ կենդանիներուն : Մէկը՝ իր գառնի վզին կարմիր, կանանչ կամ դեղին ու կապուտ շորի կտորտանք էր կախտուել, միւսն էլ իր սպիտակ գառնի գլուխն ու դմակը հինացով (2) դեղին էր ներկել : մէկէն էլ իր գառնի ուսին կանանչ խոտ էր կապել, որիցը ժամանակ առ ժամանակ մէ մէ բուռը դուրս էր գլուում ու գառնի առջևը բռնում, ու սա էլ 'ի հարկէ իշտահով իր պատիկ տիրոջ ձեռնեմէն խոտը խլում, ու իր պատիկ ակուքներով ջարդում ու ծամում : Մէկ խօսքով, որ կողմը մտիկ կուտայիր, թէ քուչէքումը, թէ տրներու կտուրներու վրայ, ամէն տեղ պատիկ գառներ էիր տեսնում : ամէնը բղղում ու մէկ կտուրից (3) մէկէլ կտուրը մէկ մէկու ձէն տալիս : Էնպէս՝ որ նրանց բղղուցը աշխարհք էր բռնում :

**Գանք, տեսնենք, ի՞նչ էին անում տղներումը :**

Ուրիշ օր իրիկնապահը էս ժամանակին, ո՛չ մէկի բուլսրումը (4) կամ քուրեքումը (5) կրակ չէր գտնուի, ու եթէ ճաշից մնացած էլ ըլէր, կրակացոյով ծածկած կուրէր, որ չհանդէն ու մինչև իրիկնահացի ժամանակը պահուի : բայց էս իրիկնապահը զղղում էր կրակը բուխրներումը :

(1) Զուան, (2) Լեղին ներկ, (3) հարթ հատասար տանիք, (4) հնոց  
(5) օջախ

Էս գիշեր ախար սովորականից աւելի վաղ պէտք էր իրիկնահաց կերած : Աերակուր եփողներն էլ որոնք որ էն ամբողջ օրը աշխանէն իստկել էին , աման չաման լուացել , գետինն աւելել ու նոր կէկած պղնձները թարէքի վրայ շարել ու մէկ խօսքով էս իրիկնութին համար աշխանէն գուքել (1) էին , կանգնած էին քուրերու առջևը , մէկ կըրակն էին չաղացնում , մէկ յետ շուռ գալիս ու թարխին մտիկ տալիս , որի մէջը սաղ սաղ (2) փիչխուլներն թլիլլում էին , ու նրանց ջուրը փոխում . մէկ էստեղ էս բանին կպչում , մէկ էն տեղ , ու մէկ խօսքով ամէն պատրաստութիւնը տեսնում , որ վանգակները տան թէ չէ՝ պղնձները վրէն դնեն : Էս գիշեր ամէն կերակուր եփող աշխատում է , որ ինչ որ հունար (3) ունի բանեցնէ , կերակուրները համով ու լաղաթով (4) շինէ , որ պարնին գուրդայ :

Քջերքը (5) որոնք որ էս ամբողջ օրը տունը տակնու վրայ էին արել՝ թէ դռները , թէ պատուհանները սրբել , թէ խալիչէքը թափ տուել , էլի դաստամալը ձեռին՝ վերջին թողնէին սրբում սեղաններից ու աթոռներից , որ տունն էս գիշեր գուքած ու պլպլած (6) ըլի : Քօծերն (7) էլ շապով իրանց աղջկապրոններու շոշերն էին սրբում , նրանց գլխի բոխէքը պատրաստում , կնդուր որ շուտով աղջկապրոնները պէտք է գուքուէին ու իրիկուան պատարագի գնային :

(1) Զարդարել (2) կենդանի (3) մէկ տեսակ ճուղը . (4) շնորհք , ճարտարութիւն . (5) արարժեկի . (6) ծառաները . (7) պապղուն , (8) ալպսին :

Ի՞նչ էին անում աղջիկաբոնները՝ իրանք :—

Մրանք իրանց երեխանցով բուխրի առջևը նստած կարմիր ձուաներ էին ներկում : Մէրը՝ փէտէ գգալը ձեռին՝ խառնում էր ներկի պղինձը, ու երեխի՛րքը նրա շուրջ նրտած՝ մտիկ էին (1) տալիս ներկի պղնձին, որտեղից իրանց մէրը հանում էր կարմիր ձուն թէ չէ, իսկոյն նրա ձեռիցը ձուն լսրում էին ու ամէն անգամ նոր խնդում ու նոր ուրախանում : Երեխանցմէն շատերը անհամբերութէնից տաք տաք ձուն հէնց տկուր ձեռներով էին առնում, ու 'ի հարկէ ձեռը էրում, ու շատ անգամ յանկարծ ձուն ձեռիցը վեր գցում ու կոտրում . ու քանի՞ կարմիր ձու էր պիտով էս գիշեր խորաբ է էլել, 'ի հարկ է մէրերը ուրիշ անգամ հսպիսի բաներու համար կու ջղրուէին իրանց երեխանց վրայ, բայց էս օր տօնի խաթրու (2) ոչինչ չէին ստում :

Բայց . . . ի՞նչքան տուն էլ կար, որ էս ուրախութիւններիցը ոչ մէկը չէր տեսնում . ի՞նչքան տուն կար, որի բուխրից չէ թէ մոխ չէր դուրս գալիս, այլ որի մէջը վաղուց կրակ չէր վառուել . ու էն տանու տէրը տաք կերակուր չէր կերել, քանի՞ մարդ կար, որ չէ թէ էս գիշերուան համար զարգարուում էր, այլ ասեղ ու թել էլ չունէր, որ իր հին, մաշած ու սլափափած շորերը կարկանդակ քանդուած կարը կարէր . քանի՞ երեխիք կային էս գիշեր, որոնք որ չէ թէ չլի տեղ ստլաս ու զար էին ուղում հագնել այլ շապկանց աւելի ուրիշ շոր չունէին . քանի՞ ողորմելիք ու խեղճեր կային, որոնց համար էս ի-

(1) Նայում էին . (2) խաթրու :

րիկնապահը չէ թէ զանազան կերակուրներ չէին պատրաստուում, այլ որոնք որ պատարագի դուրս գալուն էլ զեռ սպասած՝ չոր հացն էին կրծում, էնդուր որ խեղճերը էս ամբողջ օրը ոչինչ չէին կերել: . . .

Այս իմ սիրելի երեխերք, մի՛ կարծէք, որ ինչպէս դուք ոչ մէկ բանի կարօտ չէք, ու ամէն բանը պատրաստ ստանում եք, ամէնքն էլ ձեզ պէս են: Չէ, իմ սիրելիներ, կան էնպիսիներն, էլ ինչէս հիմիկ ասի, որոնք որ չէ թէ աւելորդով բաներ չունին, այլ ամենահարկաւոր բաներուն էլ կարօտ են: Էն ժամանակ որ դուք էս գիշեր փափուկ դօշակներու ու նհալներու վրայ գլորուում եք, ու ձեզ համար քնելու էլ պատրաստ է փափուկ տաք գողէնք, քանի խեղճ հիւանդ կայ, որնոր չոր տախտակի վրայ է պահած ու մինչև որ մէկ ծածկելու բան էլ չունի. Գանի խեղճ երեխայ կայ էս գիշեր, որնոր կուչէկած ու իր մօր ծնկայ վրայ գլուխը դրած, քաղցած, ծարաւ լոց է բլում ու մօրիցը ուտելու հաց է խնդրում. կարմիր ձուի հօ էլ ո՞վ կուարժանացնէ նրանցը:

Արդդալով էս շարքերը, կուտարիք դուք իմ սիրելի ու բարեսիրտ երեխերք, կուցաւի ձեր սիրտը՝ խմանալով, որ կան աշխարհքումս նեղացած մարդիկ էլ, ու որ ամէնքը չեն ուրախ ու բախտաւոր: Գիտեմ, իսկոյն և ետ կուհարցնէք դուք, թէ ինչու համար էսպէս է բլում աշխարհքումս, որ էսքան նեղացած ու քամբախտ մարդիկ կան, ինչու նրանցը չեն օգնում հարուստները. ինչու համար, ով որ շատ փող ունի, իր փողից մէկ մասը չէ տալիս էնպիսիներուն, որոնք որ խալի ոչինչ չունին. ո՞վ որ աւելորդ



դով ու տելու ունի, ուրիշին էլ ինչու համար չէ տալի, որ թող ոչ ով աշխարհքումս չսացըլի, շնեղանայ, կարօտու-  
թիւն չքաշէ: . . .

**Ա**՛խ, ի՞նչ պատասխան տամ ձեզ էս հարցմունքին. ինքս էլ ձեզ հետ միևնոյնն եմ ասում ու մտածում: Ա՛խ, երանի չէր ըլի, որ աշխարհքս էնպէս ըլեր, ինչպէս դուք հիմիկ ցանկացաք: Բայց, ի՞նչ անես, որ աշխարհքումս շատ մարդիկ կան, որոյ սիրտը սառը, քարացած է, որոցը Աստուած կարողութիւն է տվել, որ ուրիշին օգնութիւն անել կարենան, բայց նրանք իրանց համար են հոգս քաշում ու ուրիշ ոչովի վրայ չեն մտածում: Էսպիսի մարդկերանց գլխումը հէնց էն է, որ իրանք կուշտուտն, որ իրանց սուփրի (1) վրայ տեսակ տեսակ կերակուրներ մօտ զան, որ իրանք միայն հարուստ հազած ըլին, ու թող ուրիշները ուտելու հաց չունենան, թող ուրիշները պատրաստ ուտելուր ըլին մնում ու ձմեռը չքրտիցը սառչում: Ի հարկէ էսպիսի քաշասիրտ մարդիկը չեն կարող սիրելի լինիլ Աստուծուն, էնդուր որ սրանք իրանց օրումը լաւութիւն չեն արել ուրիշին, աղքատին չեն ողորմել, տալաբախտ ընկերոջը չեն օգնել, բայց Աստուծուն սիրելի է էն մարդը, որնոր սիրտը բարի ունի, խեղճին ողորմումէ ու իր ընկերոջը օգնութիւն է տալիս:

**Ա**՛խ, ինչպէս լաւ բան կուրէր, թէ ամէն մարդ բարի սիրտ ունենար ու ուրիշին օգնել ուզինար. էն ժամանակ ի՞նչքան տարաբախտ մարդ կուբախտաւ որուէր, ի՞նչքան նե-

(1) Սեղանի վրայ:

դացած մարդկերանց կեանքը կութեթեանար, ինչքան խեղճ  
կրեխանց աչքերից արտասուենք կուսրբուէր : . . .

Բայց, իմ ջհել (1) կարդացողներ, չտխրի աւելի ևս ձեր  
սիրար, կարծելով, թէ խեղճերուն զորդ ոչով օգնութիւն  
չէ տալիս : Չէ, ընդհակառակն, կան և էնպիսի մարդիկ, որոնց  
բողազումը մէկ կտոր չի դեւերգնայ, մինչև որ նա էն օրը մէկ-  
քանի քամբախտ մարդու օգնութիւն տուած չըլի, մէկքա-  
նի ախրած ունեղայած սրտէր մխիթարած չըլի : մէկքանի-  
սի աչքերից արտասուենք ցամքացրած չըլի : Երանի էգպիսի  
մարդկերանցը . Ասածու ողորմութիւնը կուրլի միշտ նը-  
րանց հետու ինչպիսի իրիկնապահ պէտք է ըլի զատկի  
իրիկունը էգպիսի մարդկերանց համար : ինչքան օրհնու-  
թիւններ կութափուին նրանց վրայ էս իրիկնապահը ա-  
մէն կողմից : ինչքան աների մէջ էգպիսի բարի մարդկերանց  
համար մեծ թէ փոքր տաք տաք աղօթք կուրլին անում  
ու Աստծանից էգպիսի բարեսիրտ ու լաւ մարդկերանց հա-  
մար երկար կեանք, առողջութիւն ու բախտաւորութիւն  
կուրլին խնդում : . . .

Էնպիսի բարեսիրտ ու ազնուահոգի մարդկերանց մէն  
էր մէկ հարուստ քաղաքացի Միքայէլ Բ . . . անունով :

Թէև քաղաքումը ամէնքը ճանչնումէին սրան իբրև լա-  
ու բարեգործ մարդ, բայց սրա բարեգործութիւնը ու սրա  
արած աղքատներուն օգնութիւնը աւելի էին քան թէ,  
ինչ որ մարդիկ գիտէին . էնդուր որ Պ . Միքայէլը իրան հա-  
մար կանոն էր շինել, որ ումն էլ որ ինչ լաւութիւն անէ  
էնպէս անէ, որ ոչով չի հանայ : Շատ քամբախտ մարդ էր

(1) Մատապահաս :

բախտաւորուել սրա ձեռիցը առանց իր բարերարին ճանչնալու, էնդուր որ Պ. Միքայէլը շատ չքաւոր և տարաբախտ մարդու օգնութիւն էր արել ուրիշի ձեռքով կամ էն կերպի որ ոչով չէ իմացել, թէ ո՞ւմիցն է գալիս բարեգործութիւնը : Վկայ էր նրա բարի գործքերուն միայն Աստուած, որնոր վերելից ամէն բանը տեսնումէ, որի առջևը ոչինչ չէ թախկենում<sup>(1)</sup> և էնդուր համար Պ. Միքայէլը Աստծու սիրեկանն էր դառել, ու Աստուած նրան աւելի բախտաւորացնում էր ու աւելի կարողութիւն էր տալի նրան ուրիշին լուութիւն անելու : Եւ էս շաբաթ գիշերը ինչքան բնտանիք օրհնում էին իրանց բարերարին, որին որ շատերը չէին էլ ճանչնում, էնդուր որ շատ խեղճ բնտանիք էս գիշերուան համար ոչինչ չէին ունենայ ուտիսացնելու, և եկեղեցին պէտք է զնային պատուտած, բայց Պ. Միքայէլի ողորմութեանով ու նրա շնորհքով նրանց դուրսումը<sup>(2)</sup> սինիի վրայ պատրաստ դրած էր կարմիր ձուաներ, ձուկ ու մէկ քանի տեսակ կերակուր, ու տախտի վրայ աղ ու խի մէջ թէ մարդու թէ կնկայ շորեր, որնոր հէնց ուրախացած խեղճերը հագնում էին, որ զանգակը տան թէ չէ՝ գնան պատարագ :—

Աստուած ուզենալով Պ. Միքայէլին բոլորովին բախտաւորացնել՝ նրան էնպիսի կնիկ էր տվել, որնոր իրանից եթէ գերագանց չէր, պակաս հօ չէր ու չէր, էնպիսի կնիկ, որնոր իր մարդու պէս խելոք ու բարեգործ էր, մէկ խօսքով էնպիսի կնիկ, որի մարդասիրութիւնը չափիցը դուրս էր : Ամբողջ քաղաքումը թէ խեղճերու թէ հարստների մէջ մէկ

(1) Թաքել, (2) պատի միջ հրած պահարաններումը :

չէր գտնուի, որ Շուշանի մէն (Պ. Միքայէլի կնկայ անունն էր) անբաւական ըլէր, կամ նրա վրայ մէկ վատ բան կարողանար ասել. ումը որ կուհարցնէիր Շուշանի վրայ, էնքան լաւ լաւ բաներ կուլսէիր, որ եթէ ողջ լսածը գրէր մարդ, մէկ մեծ գիրք գուրս կուգար :

Պ. Միքայէլը ու Շուշանը ունէին երկու տղայ՝ Յովհաննէսին ու Գրիգորին ու մէկ աղջիկ՝ Նինսօ անունով : Ել ին տսել կուզէ որ լաւ հօրն ու մօր որդիքը պէտքէ լաւ երեսերք ըլին, ու զորդ որ երանի ամէն երեսայ Յովհաննէսի ու Գրիգորի նման ըլի, ամէն աղջիկ Նինսօի բարի սիրտը, Նինսօի խելքը ունենայ :

Յովհաննէսը էր տասնուերեք տարեկան տղայ. ով որ նրա երեսին մտիկ տար, էլ չէր հարցնի, թէ սրտումըն ինչ ունի : Նրա խտակ պարզ երեսը ցոյց էր տալիս, որ նրա հօգին էլ պէտք է խտակ ըլի. նրա վառուն աչքերիցը ու բաց ճակատիցը իմացուումէր նրա խելքը. ու մանաւանդ երբ որ մարդ սկսումէր նրա հետ խօսել, էլ չէր կշտանում նրան լսելով. էնպէս համեստ քաղցր ու խելոք էր նրա խօսակցութիւնը : Ուսման մէջը հօ՛ էլ ինչ ասեմ. Յովհաննէսի աշխատասիրութիւնը ու ուսման սէրը օրինակ կարող էր ըլիլ ամէն երեսի համար : Պատկուց և ետ Յովհաննէսը իր ծընողացը հնազանդութիւնով, իրանից մեծի լեօսքը կատարելով իր ուսուցիչներու խրատները լսելով՝ գառել էր էնպիսի պատւական ու ամենին սիրելի երեսայ : Նրա փոքրիկ եղբայրը տասնումէկ տարեկան Գրիգորը Յովհաննէսիցը զորդ է փոքրը էր. բայց էնպէս նման էր նրան, որ եթէ բոյն (1) քիչ

(1) Հասակը :

կարճ չըլեր, էս երկուսին մէկ մէկից չէր կարել զանազանել. թէ սրտով, թէ խելքով, թէ ուսման մէջը փոքր եղբայրը մեծից յետ չէր ընկնում:

Բայց Նինօն. էլ ի՞նչ ասեմ. կարծես թէ հրեշտակ էր մարդու շորերով: Պանն<sup>(1)</sup> նա գիշերը աչքը կուխփէր, մինչև որ աշխարհքի համար ազօթք չանէր. գանն նա հանցի ստ սրտով աղքատ կուտեսնէր մինչև սր նրա սուպրակը հացով, մտով չէքցնէր ու ձեռին մէկ երկու շայ չդնէր. որնոր նա միշտ ստանսւ մէր իր մօրմէն բարի բաներու համար գործածելու: Արդեօք Նինօյի բերնիցը խկի մէկ սուս խօսք դուրս էր եկել կամ նրա երեսին տեսելէր մարդ բարկու թիւն: Չէ, միշտ քաղցր ամէնի հետ սիրով, ամէնին խոնարհ ու իր մեծին լսող. ահա էսպէս էր Նինօն: Երբոր մէրը տանը չէր ըլում, ո՞վ էր ամանկնութիւն անում. ի հարկէ Նինօն. ո՞վ կունենար բախչումը կնպիսի սիրուն ծաղկներ Նինօյի ծաղկներու նման, ուսման մէջը էլ խօսք չկար: . . . Եթէ կուհաւաքուէին Նինօյի մօտ աղկերը, միթէ՞ նրա զոնալները էլ հեռանալ էին ուղում նրամէն նրա քաղցր ու սիրով վարուելով չկշտացած կամ եթէ ինքը Նինօն գնում էր ուրիշ տուն միթէ՞ էլ ամանիցը ուղում էին նրան դուրս թողնել, կնպիսի սիրելի աղջիկ էր Նինօն: —

Երանի՛ կն հօրն ու մօրը, որոնք որ կնպիսի որչիք կունենան, երանի՛ երեսանցը, որոնք որ կուլսեն իրանցից մեծերուն, ու կուաշխատեն, որ ամէն բանով լաւ ըլին ու էս իմ գոված երախանցը նման, որ երբ որ մեծանան, չփոշմանեն, թէ վայ, ի՞նչու երեխութենի ժամանակը լաւ չեն էլել:

(1) Արդեօք:

չեն աշխատել. բա չեն սովորել ու չեն լսել իրանց խրատ  
տուօղներու խօսքերը :

Եստած էր բուխրի առջևը Շուշանը ու ներկի պղնձ-  
ձիցը կարմիր ձուաներն էր հանում : Աշտին էլ կանգնած  
էր Նինօն. քիչ հեռու տախտի մօտ Գրիգորը որնոր կար-  
միր ձուաներն էր համբրում, (1) ու ինչքան էլ մէրը քստի-  
կիրով ձուն հանումէր, Նինօն աղլխով ձուն վեր էր առնում  
մօր ձևիցը ու տանում Գրիգորին տալիս ու էլի յետ գալի,  
մօրիցը նոր ձուն ստանում ու էլի Գրիգորին տալիս :

Մանուէ ցովհաննէսը ու մօտ է դնում Գրիգորին ու  
կամաց ինչոր նրա հետ խօսումէ. Գրիգորի դէմքը զուար-  
թանումէ ու երկուսն և ետ մօտ են գալիս մօրը որնոր վեր-  
ջի ձուն էր հանում պղնձից :

Երկու աղբրախէր քրոջը աչքով են անում. քոյրը սրանցը  
հասկանումէ ու ինքն էլ ուրախանումէ :

ՄԵՐԸ : Գրիգոր ջան. ինչքան էր ձուն, համբրեցի՞ր :

ԳՐԻԳՈՐԸ : Չորս հարիւր ու քսան ու հինգ :

ՄԵՐԸ : Նինօ ջան, էս ձուաների կեսը վեր առ մեզ համար  
ու կէսն էլ տուր մեր դուքնի աշկերտին :—

Ին երկու հարիւր ձուն նշանակած էր էն գիշերն և ետ  
աղքատներուն բաժնելու համար :

Եւ Շուշանը դադրած յետ նստեց տախտի վրայ :

Չանգահները տուին :

(1) Համարում :

Ամէնի սիրտը մէկ նոյ ուրախութիւն զգաց էս ձէնի վրայ : Զանգի ձէնը ամէն օր ենք մենք լսում, բայց էս իրիգնապահը ուրիշ ձէն է սա : Էնդուրիցն է արդեօք, որ մենք ամբողջ օրը սպասումենք էդ ձէնին կամ թէ էդ ձէնը լսելով, մտնե՞րու է գալի, թէ զատկին արժանացանք արդէն : Ինչ պատճառից կուզէ ըլի, էս իրիկուան զանգի ձէնը զուարթացնումէ ամէնի հոգին, ամէնի երեսի վրայ ուրախութիւն է երեցնում : Էս զանգի ձէնի վրայ Շուշանը վեր կացաւ տեղիցը, երեսը խաչ արաւ, ու նրա ետեւիցըն էլ իր երկու տղէն ու աղջիկը նմանապէս երեսները խաչ արին՝ իրանց սիրուն աչքերը դէպ ՚ի երկինքը գցելով :— Շուշանը էլ շատ չմնաց էն սենեկումը (օթախումը), ըստապով դուրս գնաց, որ զուքվի պատարագ գնալու համար : Նրա երեսանց համար զոքուել էլ չէր հարձակուրդ, էնդուր որ սրանք իրանց զատկի շորերը առաջուց էին հագել ու արդէն պատրաստ էին :

Արանց մէջը դուրս գնաց թէ չէ սենեկիցը, էս երկու եղբայրն ու քոյրը մօտ եկան մէկմէկու ու կցեցին <sup>(1)</sup> տաք տաք խօսել :

ՅՈՎՀԱՏԵՆԵՍԸ : Նինօ ջան, ես արդէն ամէն պատրաստութիւնը տեսել եմ, շորերը բողջումը պատրաստել :

ԳՐԻԳՈՐԸ : Ես էլ կերակրեղէնը մէկ կալաթի <sup>(2)</sup> մէջն եմ դրել միայն կարմիր ձուաններն են պակաս :

Էս խօսքի վրայ Նինօն վեր է առնում թարխից քսան հատ ձու ու տալիս է Գրիգորին՝ ասելով : «Ահա, եղբայր, տար էս ձուաններըն էլ մէջը դիր» : Գրիգորն էլ վեր է առնում

(1) Սկսեցին : (2) Կողով :

ձուաները ու սենեկիցը դուրս գնում:

Մինօն ուրախ ուրախ վրայ է ընկնում իր եղբոր Յովհաննէսի վրայ, նրան պաշանում ու ասում: «Մ. Խ. Եթէ դիտանաս ինչպէս ուրախ եմ, որ էս բանը տեսնենք մենք, հօստոացար, եղբայր, և իմ կարած շապիկներն էլ մէջը գնել: ՅՈՎ. ՀԱՆՆԵԱՐ: Ի՞նչպէս կուժուանայի քո կարած շապիկներն էլ. քո գործած զուլբէքներն էլ, քո նոր գէրիէն (1) էլ, որնոր քեզ համար կարճ եկաւ, ամէնը մէջն եմ դրել: Ի՞նչ ուրախութիւն կուրլի Պետրոսի համար, երբ որ եկեղեցից յետ կուգայ ու յանկարծ նորնոր շորերը կուտեսնէ, նոր չուխէքը (2), նոր գդակը:

ՆԻՆՕՆ: Հա, ու խեղճ Մարիամն էլ ու նրա փոքր եղբայրը, էն խելօք Գարրիէլը—ի՞նչպէս կուխնդան ընծայի վրայ: Բայց ափսոս, որ էնք կարող էս իրիկնապահս և ետ պատարագից առաջ հասցնել նրանցը էս զատկի պարզեները, որ թեղ նրանք էս գիշեր էլ զուքած ըլին: Էս խօսքերու վրայ տուն է գալիս Գրիգորը ու ասումէ: Հիմիկ հանդստացաւ սիրաս, ամէն բանը պատրաստ է և Պողոսին էլ ասի, որ իսկոյն և ետ գայ մեզ մօտ: Էս բոպէին քուչի դռանն էի կանգնած, ու տեսայ, որ խեղճ Գէօն իր ամէն օրուան չուխէն հազած ու Պետրոսի ու Գարրիէլի ձեռիցը բռնած, չոլախ չոլախ (3) անց կացաւ մեր տան առաջ, նրանց յետեւիցն էլ իր կնիկը Մարիամի հետ: Միայն էս խեղճերը էնպէս վատ էին հազած, որ իմ սիրտը դաղուէց նրանցը էնպէս տեսնելով: Որ տեսայ նրանցը էնպէս խեղճ հազած ու ինձ էնպէս զուքած, հէնց շորերս հանել էի ու գրում ու նրանցը

(1) շոր հանգերձ. (2) աղջկայ հանգերձ. (3) կաղալով:



բաշխել. բայց մտածեցի որ թող քիչ համբերեմ, հիմիկ չէ, մէկ երկու սհաթից հօ նրանք էլ կունենան լաւ լաւ շորեր:—

ՅՈՎ. ՀԱՆՆԵՍԸ: Ուրեմն էլ չպետք է ուշացնենք, նրանք հիմիկ տանը չին, ամէնից լաւ ժամանակ է պարզեաները զըլելու նրանց տուն:

ՆԻՆՕՆ: Հա՛, հիմիկ և ետ պէտք է: նրանց քօռ մեծմէրը հօ չի ճանչնայ, թէ ո՞վ է բերում նրանց համար էն ընծաները:

Մանուկ սենեակ Պողոսը: Սա էր միջին հասակի մարդ, որինոր գեւ ջհէլու թէնի ժամանակը Պ Միքայէլը վեր էր առել իր մօտ. և էն ժամանակից սկսած Պողոսը նրա տունն էր մնացել և նրա տանը սպասաւորութիւն էր անում: Արա ձեռին մեծացել էին Պ. Միքայէլի երեք երեխերքը: Սրանք սլրու մէին Պողոսին ինչպէս բարեկամին ու իրանց բարեարին և ահա՛ էս իրիկուան համար ունեցած խորհուրդն էլ միայն նրան էին յայտնել: Պողոսը տուն եկաւ թէ չէ, նինՕն մօտ եկաւ նրան ու ասէց. «սիրելի Պողոս, դու գիտես հօ մենք ինչ ունինք մտքներումս էս գիշերուան համար. այ, Գրիգորը տեսէլ էր, որ Գէօն իր կնգով ու իր երեխանցով տանիցը դուրս էր գնացել. ուրեմն վեր ա՛ռ էն քեզ պահ տուած բօխչէն ու էն կերակրեղէնով լեքը կալաթէն ու տար Գէօնից տուն. նրանց տանը բաց ՚ի Գէօի պառաւ մէրը ոչ ով չէլլի. բօխչէն ու կալաթէն նրան կուտաս ու էլ ոչինչ չես ասի. նա էլ հօ քեզ չի ճանչնայ, էն դուր որ աչքերուամբ լուս չունի. էլ ժամանակ մի կորցնի, գնա՛ շուտով»:— Պողոսը էս իր պատիկ աղջիկ պարոնի հրամանը լսելով՝ դուրս գնաց, ու Յովհաննէսն ու Գրիգորը յետեից էլի ասու մէին:

որ էս բանը էնպէս անէ, որ ո՛ւրիշ չտեսնէ:

Ի՛մ սիրելի կարգացողներ, էս երեկանց խօսակցութեանից դուք կարծեմ հասկանում կուրլիք, թէ ի՞նչ խորհուրդ ունէին սրանք էս իրիկնապահը. միայն դուք չէք դիտի, թէ ո՞վ էր Գէօն, ո՞վ էր ինչն ընտանիքը, որին որ Պ. Միքայէլն որդիքը էս գիշեր լաւութիւն էին ուզում անել:

Գէօն էլի էր մէկ ժամանակ դարսիին: Սա իր արհեստը էնպէս լաւ է էլի գիտացել, որ քաղքումը (1) ով որ ինչ լաւ բան է ուզեցել շինել տալ, Գէօի մօտ են էլի բերում: Բայց մէկ անգամ Գէօն, երբոր չաքու չո (2) բարձրացնում է էլի, որ տաքցրած էրկաթին խփի, ձեռիցը էն ծանր չաքու չո սրլքուումէ, ու Գէօն ինքը իր ողջ զօրութենով խիտում է էն չաքու չո իր ծնկան: Ել ի՞նչ ասել կուզէ, որ ծուլի՛ր ոսկոռը փշուր փշուր է ըլում: Եւ էս ժամանակից սկսած խ՛ղճ Գէօն իր փեշակը (3) թողնումէ: Սա ունենում է էս ժամանակ կրնիկ, երկու տղայ՝ Պետրոսին ու Գարրիէլին ու մէկ այլ ջիկ՝ Մարիամ անունով ու էլի մէկ պառաւ մէր, որնոր իր որդու քամբախտութենի կսկծիցը իր աչքի լուսը կորցնումէ:

Էսպիսի քամբախտութիւն որ պատահում է Գէօին, ՚ի հարկէ սա էլ աշխատել չէ կարացել, բայց օղու շաղը (4) պահել պէտք էր ախար. բայց ինչով՝ ահա էս էր խեղճ Գէօի ամէնից մեծ փիլքը (5) ու ցաւը: Սկզբումը, ծախումէ նա իր դուքնի սարգ ու կարգը ու նշա համար ստացած փողով եօլայէ (6) գնում մէկ քանի ամիս: Բայց մարդուս կեանքը մէկ

(1) Թիֆլիզումը. (2) մուջ. (3) արհեստը. (4) ընտանիքը. (5) հողսը

(6) բաւականանումէ.

երիւս ամիս չէ: Ի հարկէ Գէօի բանը շատ դժար կուրէր ,  
 և թէ նա ուրիշ քաղաքումն ըլէր , բայց Թիֆլիզումը նա  
 քաղցած ու ջրիս<sup>1)</sup> անտէր չէր մնայ : Աստուած օրհնէ մեր  
 համբերին ու հաստատ պահէ նրանց ընկերութիւնը : Երե-  
 խերք , դուք զեռ փոքր եք ու չէք գիտի թէ ինչ բախտաւո-  
 րութիւն է մեր քաղքի համար էստեղ եղած համբերու-  
 թիւնը . երբ որ մեծանաք , էն ժամանակը կու իմանաք , թէ  
 ինչ գեղեցիկ ու օգտաւէտ միաբանութիւն կայ Թիֆլիզու-  
 մը ու մէլքանի Հայաստանի քաղաքներումը (սեղճ փէշա-  
 քարներու<sup>2)</sup> մէջ , որնոր համբերութիւն է անուանուում :  
 Նբանց զլիաւոր նպատակը էն է , որ ջհել տղերանցը փէ-  
 շաք սովեցնեն , նրանց վրայ աչք ունենան , որ նրանք ի-  
 րանց փէշաքը լաւ սովեն ու լաւ վարքի ու բարքի ըլին ,  
 խեղճ ու անդամալուծ փէշաքարին օգնեն ու չթողնեն , որ  
 նրանք աղքատութիւն անեն , որբերուն ու որբեկրի կրն-  
 գ գերանցը տէրութիւն անեն :

Ահա էս իր համբարն էր , որնոր Գէօին էլ չեթող , որ  
 նեղութիւն քաշէ , և երբ որ սրա հետ պատահեց քամ-  
 բախտութիւնը , համբարը նշնէց սրան ամսէ ամիս էնքան  
 փող որ Գէօն կարող էր սրանով իրան ու իր օղու շաղը պա-  
 հել : Ի հարկէ , էնէնց էլ աւելորդ ծախսեր չունէր Գէօն իր  
 տան մէջ . բայց հիմիկ կեանքի ամենահարկաւոր բաներու  
 վրայ միայն պ'տք է միսէր իր քիչ փողը : Եւ էս պատճառով  
 և թող էն տունը , որտեղ որ նա կենումէր , էնդուր որ իրան  
 համար թանկ էր , և եկաւ մէկ հինկէս քանդած և աւելի  
 էժան տան մէջը լնակուելու , որնոր Պ. Միքայէլէ անիցը

(1) Բոլորովին . (2) արևատականներու :

երևք տան դէնն էր : Ահա էս տան մէջը նրանցը ճանչցան Միքայէլի որդէքը : Սրանք՝ խղճալով Քէօի որդկերանցը , միշտ նրանցը օղնումէն , բայց էս իրիկնութէնի համար , որ էր զատկի շարթի իրիկունը , ուզումէին անելի մեծ պարզեւով նրանցը ուրախացնել ու մէկ ամիս առաջ էին կցել<sup>1)</sup> գործի պատրաստութիւնը , և էս իրանց խորհուրդը ոչ ովին չէին յայտնել բաց ՚ի իրանց Պողոս ծառային :

### Տուն երկրորդ զանգը :

Ամէնի տանը պատրաստ էին պատարագ գնալու : Մէկքանի աներիցը արդէն առաջի ձէնի վրայ էին եկեղեցի դրնացել , բայց էս երկրորդ ձէնի վրայ արդէն ամէնքը , ով որ գնալու էր եկեղեցի , զուրս եկան աներիցը :

Բացուեցան ամէն տան դռները , լքցուեցան քուչէքը ժողովարդով : Էլ ինչ ասել կուզէ , որ ով ինչ լաւ բան ունէր հագնելու , հագել էր էս օր , ամէնն էլ զարդարուած , ամէնը զուքուած , և ո՞ր օրուան համար պահէ մարդ իր զուքսը<sup>2)</sup> եթէ ոչ էսպսի մեծ ու հրաշալի տօնի համար : Էստեղ տեսնես , գնումէին մէկքանի կնգդիւք , առջևները իրանց երեսերքը՝ աղջկերքը հանդարտու պարկեշտ , ու տղեղը թռչոտելով ու մէկ իրանց շոշերուն մտիկ տալով , մէկ էլ ջիբիցը<sup>3)</sup> կարմիր ձուն հանելով , նրան ձեռին խաղցնելով , ու էլի ձուն յետ ջիբը դնելով : Սրանց ետեւիցը էլի մէկքանի կնգդիւք ու էլի մէկ կամ երկու հնքան երեսերք սրբանց ետեւից էլի ու էլի , ու ով կուհամբրէր ամէնին : Էստեղ էլ տղամարդիկն էին գնում զաստա զաստա<sup>4)</sup> . ա-

(1) Սխել . (2) զարթը . (3) զրպակ . (4) խումբ խումբ :

մէնքը մէկ կողմը , ամէնքը մէկ ճանապարհով , այն է դէպ  
ի Աստու տուն : . . .

Յանկարծ մէկքանի կնդգիրք ու մարդիկ կանգնեցան ու  
դէպ ՚ի մէկ կողմը նայեցին : Ի՞նչ պատհեցաւ : Էն կողմիցը  
գալիս էին Պ . Միքայէլ Բ . . իր կնգով ու նրանց առջևն էլ  
մեզ ծանօթ Հովհաննէսը , Գրիգորը ու Նինօն՝ ձեռք ձե-  
ռին տուած : Պ . Միքայէլին ամէնքն ախար ճանչնումէին  
քաղքումը . նրա կնիկըն ախար ամենին սիրելի Շուշանն էր  
ու ինչպէս Վանդնէին մարդիկ ու շմոթիկ տային նրանցը ու  
հազար անգամ էրնէկ՝ չտային էղպիօի բախտաւոր հօրն  
ու մօրը , որոնք որ էնպիսի սիրուն ու խելօք որդիք ունէին :  
Ինչպէս հէրն ու մէրը գոված էին քաղքումը , էն-  
պէս էլ նրանց որդիքը : Քէպէտ սրանք էլ զուքուած էին ,  
բայց ուրիշ երեխանց նման զարով ու թանկագին շորերով  
չէ (թէև նրանց ծնողքը կարողութիւն ունէին ոսկէ շո-  
րեր էլ հագցնէին իրանց որդկերանցը) , այլ շատ հասա-  
բակ , բայց խտակ ու սիրուն էին հազած :

Ահա մօտկացան սրանք եկեղեցուն : Էս իրիկնօպահը  
կարծես թէ եկեղեցու դռներն էլ նեղացել էին . հնքան շատ  
էր ժողովուրդը : Էդ պատճառով Պ . Միքայէլն ընտանիքը  
պէտք է սպասէր մինչև որ իրանց հերթը՝) գար եկեղեցին  
մտնելու : Էսպէս սպասելու ժամանակը Հովհաննէսը , Գր-  
րիգորը ու Նինօն շատ մեղք գալով մօտիկ էին տալիս մէկ-  
քանի մարդկերանցը , որոնք որ նմանապէս դռան առջևն  
էին կանգնած , բայց ներս մտնելու՝ կարծես , միտք չու-  
նէին : Էս մարդիկը էն զարդարուած ժողովրդի մէջ շատ էին

(1) Երանի . (2) կարդէ :

Ջոկնուում : Էս էն մարդիկն էին , որոնք որ չէ թէ զուքս չու-  
նէին , այլ միայն մէկ շապկի արով<sup>1)</sup> էին եկել , բորիկ , տո-  
պրակները ուսին : Սրանք էլ եկել էին ուրիշներու նման  
Ասածուն փաստարանութիւն տալու բայց և միեւնոյն ժա-  
մանակը իրանց ապրուստի համար հոշտ անելու . սրանք  
էն աղքատներն էին , որոնք որ միշտ եկեղեցիներու զուսն  
առջևը շարուած են ըլլում : Էս խեղճերը ամէնից վաղ էին  
եկել եկեղեցի , տուն էին մտել , երեսները խաչ արել , ա-  
ղօթք արել , ու էլի զուրս էին եկել ու զուսն առջև կանգ-  
նած կամ նստած , ձեռք դէմ արած՝ մարդկերանցմէն ո-  
ղորմութիւն էին խնդրում : Էս խեղճերը մասնակից պէտք  
է լինէին պատաշաղին դրսից : Ա՛խ , զորդ , ի՛նչ սիրտ պէտք  
է ըլի , որնոր էս մարդկերանցը տեսնելիս՝ չցաւի ու նրանցը  
ողորմութիւն ու օգնութիւն չտայ :

Շուտով եկեղեցու բաշքը<sup>2)</sup> դաշդկվեցաւ :

Իրիկուան ժամը կանգնած էր : Եկեղեցին էլ զարդարուել  
էր էս իրիկնութին համար . ձահերու մէջը աւելի մեծ մո-  
մեր էին յցած քան թէ սովորական օրերուն . մարդկերանց  
կանգնելու տեղը նոր քէչէք ու խալիչէք էր փռած . սև վա-  
ւաքուրի տեղ ալ մախմուր<sup>3)</sup> էր քաշարած<sup>4)</sup> . ժամաշապկի-  
ները ու շուրջառները նոր :

Ձահերը վառվեցան : Մէկէլ տեսնես սեղանի վրայ դը-  
րին գրքակալը , ու մէկ պստիկ երեխայ զար շապկիը հա-  
ղած , գնաց վերև ու կարգայ Գանիէ՛լիէն : . . .

Ի հարկէ միշտ սիրելի է Ասածու տունը , միշտ զեղեցիկ  
է նա . բայց էս իրիկնապահսը ուրիշ փառաւորութիւն է ըս-

(1 Յուսով , ապաւին'լով . (2 Սրանք . (3 թախ . (4 կախոտ : ած :

տանու մ եկեղեցին : Էս իրիկնապահը եկել էին ժամ ուր  
 ոտն էր ունեցել , պառաւ թէ ջջել , երիտասարդ թէ երեսայ ,  
 կնգրիք , թէ աղջկերք , ամէնքը զարդարուած , ամէնքը եկել  
 էին էն ամենաքաղցր համբաւը լսելու , թէ Քրիստոս մեր Աս-  
 տուած չարչարուելից յետոյ , թաղուելից յետոյ էլին նոր յար-  
 ութիւն արաւ : Ի՞նչու համար քաղցր է էս ձէնը մեզ համար ,  
 գիտեք արդեօք , իմ երեխերք : Էնդ ուր համար որ Քրիստոս մեր  
 Աստուած իր յարութէնով մեզ նշան տուեց , որ մենք մի-  
 այն էս կեանքի համար չենք , այլ որ ուրիշ էլի նոր ու աւելի  
 ևս գեղեցիկ կեանք կայ . որ մենք էլ մեռնելից յետոյ յա-  
 րութիւն պէտք է առնենք , էն նոր կեանքը ստանանք ու մեր  
 երկնային Հօր մօտ պէտք է գնանք ու յաւիտեանս կենանք ,  
 ու էնպէս , որ եթէ մենք էս աշխարհքումս լաւ մարդիկ ենք  
 էլել , աշխատասէր , ուսումնասէր , բարի սրտի , բարի գործ-  
 քեր արել . մենք էն նոր կեանքումս էլ յաւիտեանս բախ-  
 աւոր կուրլինք . բայց եթէ ծոյլ , չար սրտի , ու էս աշ-  
 խարհքումը մեր ձեռէցը բարի գործ չէ գուրս եկել , մեր մեռ-  
 նելից յետոյ , որ յարութիւն կուռնենք , զորթ է , յա-  
 վիտեանս կուկենանք բայց չարչարուելով ու նեղանալով . . .

Կանգնած էր ժողովուրդը վառած մամերը ձեռին : Վեր-  
 ջացաւ Գանիէիէն : Գլորաց ժողովուրդը , վարագոյրը յետ  
 քաշեցին և ձէն տուեց աւալ սարկաւաչը . « Քրիստոս յար-  
 եաւ ՚ի մեռելոց » : միաբերան պտտասխան տուեց ողջ ժողո-  
 վուրդը . « Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի » :—

Շարժեց ամէնի սիրտը էս երկնային ձէնը : Ընկան ա-  
 մէնքը ծնկայ վրայ ու երկրպաղու թիւն տուին Աստուծն :

(1) Հաճելի եղև :

Ամէնին դուր եկաւ <sup>1)</sup> էս ձէնը: Կաւ մարդը՝ լսելով էս ձէնը ուրախանումէր, որ մահից յետոյ էլ բախտաւոր ու Աստուծոն իրելի կուրլի վատ մարդն էլ էս ձէնը ընելով միան էր բերում, որ միայն էս կեանքի համար չէ կենում նա, այլ որ մահից յետոյ էլ ինքն յաւիտեան կեանք կայ և ճշնկայ վրայ ընկած՝ Աստուծանից ներողութիւն ու թողութիւն էր խնդրում իր մեղքերու համար:

Ա՛յն, պէտքէր տեսած Պ. Միքայէլը որդկերանցը - ի՞նչ պէս ջերմեռանդ չորքած ու իրանց սիրուն տղքերը դէպ ՚ի երկինքը բարձրացրած՝ Աստուծոն ազօթք էին անում: Ել մնումէր աշխարհքումը մէկ բան, որի համար Նինոն Աստուծանից շինդրէր իր ազօթքի մէջ: Յովհաննէսի ու Գրիգորի ազօթքներն էլ հէնց էն էին ինչպէս էլ միշտ սովորաբար, որ Աստուած իրանցը շատ խելք տայ, որ իրանցը իմաստուն ու մեծ մարդիկ շինէ, որ նրանք իրանց խելքով ու մեծ մարդութենով հաշարաւար մարդկերանցը օգտաւէտ կարողանան ըլիլ, իրանց ազգի ու հայրենեաց համար պիտանի որդիք դուրս գան: Եւ ՚ի հարկէ որ Աստուած կուրէ էսպիտի խնդիրքը, ու լսումէր էս պատուական երեխանց ազօթքը ուտալիս էլ էր նրանցը էն, ինչ որ նրանք խնդրում էին նրանից:

Պատարազը կանգնեց: . . . . .

Պատարազը դուրս եկաւ: Արեւոյն զոները բաց էլան, Բարեկամ՝, թէ օտար ընկան մէկմէկու ճիւղը ու մէկմէկու համբուլելով, ուրտխութենի համբաւ էին ապլի մէկմէկու՝

(1) Համեմտելու համար



Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց՝ ասելով: Ժողովուրդը սկսեց զուրս զալ, ու էսպիսով եկեղեցին կամաց կամաց զարահուեցաւ:

Էս իրիկուան տօնի մեծութունը էնդումն էր երևում, որ էս զիշեր ամէնքը ուրախ ուրախ էին եկեղեցիից զուրս գընում. մինչև որ վատ մարդն էլ, որի երեսի վրայ կարելի է մարդ խկի ծիծաղ չէր տեսել, էս զիշեր նա էլ ժպտում էր, նրա երեսն էլ զուարթացել էր: Պատուը իր պառաւութիւնն էր մոռացել, թշնամին իր թշնամուն էր պարբտում, որ նրան պաշ անի: Եւ ո՞վ էր ամենուն էսպէս ուրախացնողը. էն ձէնը՝ թէ «Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց»:

Լքցուեցան քուչէքը ուրախութենի ձէներով, ամէնքը շտապումէին տուն, որտեղ որ ամէնու համար պատրաստ էր սեղան թաթախում անելու:

Ետեղձ աղքատներն էին միայն, որ չէին շտապում տուն գնալու, որտեղ որ բաց 'ի տկուր պատերը ու զեանի վրայ փռած մէկ հին քէչէն նրանցը ոչինչ չէր սպասում աւնը: . . .

Մինչև եկեղեցիից յետ գալը սներումը արդէն զցած էր սուփրէն ու ճրագները վառած, և քօժ թէ ծառայ անհամբերութենով սպասումէին իրանց պարոններու տուն գալուն, որ շնորհաւորեն նրանցը սուրբ տօնը, խոհարարն էլ (կերակուր եփողը) կերակուրը պատրաստ ունէր:

Եկաւ Պ. Միքայէլ Բ. . . իր ընտանիքով (օղու շաղով) տուն: Երեսերքը խկոյն և ետ մօտ զնացին իրանց հօրն ու մօրը. ձեռները պաշ արին ու շնորհաւորեցին նրանցը Սուրբ Յարութեան տօնը: Հէրն ու մէրը մէկ մէկ պաշ արին նը-

րանցը և հէրը կարճ խօսքերով պատմեց նրանցը էս գիշերուան տօնի նշանակութիւնը, յետոյ վեր առաւ սեղանիցը կարմիր ձուաներ և բաժնեց մէկ մէկ իր երեխանցը: Ահա էս կարմիր ձուաներով ուտիսացրին նրանք եօթը շաբթուան պահած մեծ պասը:

**Թէ և Պ.** Միքայէլի ընտանիքը միայն հինգ հողի էին, բայց սեղանը շատ ձիգ էր փռած, էնպէս որ մինչև քսան հոգի էլ կուսնէին: Ո՞ւմ համար էր էն միւս տեղերը, կուհարցնէք ինձ, իմ սիրելի կարդացողներ: **Պ.** Միքայէլը սովորութիւն ունէր էս գիշեր և ուրիշ նման հրաշալի տօներուն իր մօտ հրաւիրել էնպիսի մարդկերանցը, որոնք որ ուրիշ երկրիցն էին և քաղքումը ոչ ազգական ունէին, ոչ բարեկամ և էս գիշեր մէնակ պէտք է անցկացնէին չորս պատեմէջ, իրանց ընտանիքից հեռու. ի՞նչքան կուզէ ուրախալի ըլի տօնը, բայց էլի կուտխրի մարդ էսպիսի տօնին մէնակ ու իր ընտանիքից հեռու մնալով: Նմանապէս ուսումնարաններումը եթէ կուրէին որք կամ օտար երկրներից երեխերք, նրանք էլ միշտ հրաւիրած էին ըլում **Պ.** Միքայէլի մօտ. բաց ՚ի սրանցը էլի մէկ երկու աղքատ պէտք է **Պ.** Միքայէլի սեղանի վրայ նստած ըլեր:

**Մէկ էլ** տեսնես մտան հինգ երեխայ՝ ուսումնարանի աշակերտներ: Սրանք շնորհաւորեցին **Պ.** Միքայէլին տօնը. և Յովհաննէսը ու Գրիգորը սրանց հետ պաշտելից յետոյ և մէկ քանի ժամանակ ընդհանուր խօսակցութէնի մէջ ըլելով՝ սրանց ձեռը բռնեցին ու տարան իրանց սենեակ (օթախ) խօսելու կամ իրանց աշխատութիւնները ու շարադրութիւնները նրանցը ցոյց աալու: Էնդուր որ, Յովհաննէսը ու Գր-

րիգորը շատ սիրումէին իրանց հասակի տղերանց հետ թէ ուսման վրայ, թէ ուրիշ խելօք բաներու վրայ խօսելու մէջ ժամանակը անցկացնել :

Մտան նմանապէս և երկու պատուելի հասակով մարդիկ ուրիշ երկրացիք . սրանցից յետոյ էլի չորս երիտասարդներ , (Չհել տղերք) որոնք որ նոր էին եկել քաղաք ուրիշ տեղերից վաճառականութենի համար և յանձնած էին իրանց ծնողքերից Պ . Միքայէլի վերատեսչութենին : Ամէնին Պ . Միքայէլը էնպիսի քաղցրութենով ու սիրով էր ընդունում , ինչպէս իր հարազատ աղբրտերանցը :

Մտան ներս նմանապէս երեք աղքատ , որոնքոր նմանապէս մեծրած <sup>1</sup> էին Պ . Միքայէլի մօտ : Սրանք զալիս էին հէնց եկեղեցու դռնէն : Իրանց տօպրակները միւս սենեկումնէին թողել ու ամաչելով ներս էին մտնում : Պ . Միքայլը նրանցը սիրտ տալու համար ինքը դնաց նրանց առաջ , ձեռիցը բռնեց ու ամէնին մէկ մէկ կարմիր ձու տալով շնորհաւորեց Քրիստոսի Սուրբ Զարութիւնը :

Ամէնքը նստեցան և սկսուեցաւ խօսակցութիւն զանազան բաներու վրայ : Պ . Միքայէլը իր զարմանալի խելքով ու բարի սրտով զիտէր ո՞ւմ հետ ի՞նչ խօսէ ու ամէնի հետ միևնոյն քաղցրութենով ու սիրով վարուելով իր զենաղների <sup>2</sup> ) մէջ ջոկել չէր գիտի :

Երս մտաւ Շուշանը , որնոր մինչև զօնաղների հաւաքուիլը գնացելէր, թէ խոհարարին (կերակուր եփողին) թէ ուրիշ սպասաւորներուն կաբգազրութիւն տալու : Ամէնքը իրանց տեղերիցը վեր կացան ու տանտիկնոջը շնորհաւորեցին

(1 Հրախրած • (2 հիւրերու :

տօնը : Սա էլ ինչպէս իր մարդը մէկ էնպիսի քաղցրութենով խօսումէր ամէնի հետ, որ ամէն մէկը կարծումէր թէ իր մէրը կամ իր քուրն է հետը խօսում :

Մէկ քիչ ժամանակից յետոյ սա ինդրէց ղոնաղներուն , որ նստին սեղանի վրայ : Մտան Միքայէլն որդիքը իրանց հասակակից (տօլ) ղոնաղներով նրանցից յետոյ մտաւ Նինօն , որնոր իր աղբրտերանց հետ միասին մօտ զնաց , ղոնաղներու մօտ և ամէնքը էնպիսի համեստութենով զլուխ վերբերին , որ ամէնու աչքը մնաց նրանց վրայ . Բայց աչքատներուն տեսնելով՝ երեքն և ետ յանկարծ փոխուեցան , կարծես նրանց սրտերը մէկ դարաւ : Հասկանում կուրլնք , կարգացողներ , թէ էն ինչ զգացմունք էր , որնոր երկու եղբայրն ու քուրը միասին զգացին : Խեղճ Գէօն , նրա որդիքը եկան նրանց մօրին : . . .

Ամէնքը բազմեցան սեղանի վրայ : Նինօն իր մօր կշտին բայց և աղքատներու մօտ , որ նրանցը սուփրի վրայ կարողանար օղնական ըլիլ թէ ջուր թէ գինի ածելու համար կամ թէ ուրիշ կերպով նրանց պետք դալու համար . Գրբիգորը ու Յովհաննէսն էլ իրանց հասակակից (տօլ) ղոնաղներու կշտին <sup>1)</sup> :

Կերակուրը մօտ բերին : Ել ինչ ասել կուզէ , որ ամէնին համով էր թուում կերակուրը :

Նինօն թէ և ինքը նստած էր սուփրի վրայ , միայն մրտքով ուրիշ տեղ էր , Չուկն էր վերառնում թէ կարմիր ձուն , միան էր բեչում թէ էսպէս էլ Մարիամը կուրլէր ձուկը բերնին մօտ բերում . Միււնայն կերպի էլ Յովհաննէսը ու Գրի-

(1 Մերձ, մօտ :

դորը Գէօրի ասանն էին մտքով և իրանց առջևը պատկերացնումէին նրա որդիերանց խնդու թիւնը, երբ որ ժամից յետ եկած՝ կուտեսնէին նոր նոր շորերը և կալաթով կերակուրը :

Մէկ էլ տեսնես միւս սենեկումը երկու երեխի ձէն եկաւ : Յովհաննէսը , որնոր աւելի դռան մօտ էր նստած , յանկարծ մնաց սառած : Տուն մտան երկու երեխերը՝ հասարակ բայց շատ խտակ հազած՝ ու մօտ եկան հէնց Պ . Միքայէլի մօտ ու սրա ոտիերքըն ընկնելով , սկսան սրա ծնկներին պաչանել : Պ . Միքայէլին չդուր եկաւ անծանօթ երեխանց էսպիսի վարքը : Զարմացան ամէնքը՝ տեսնելով էս անծանօթ երեխանցը , միայն Պ . Միքայէլի որդիքն էին , որոնք չէ թէ զարմանալով էին նայում նոր եկածներու վրայ , այլ անհամբերութէնով սպասումէին , թէ վերջը ի՞նչ կուրլի :

Պ . Միքայէլը բռնէց անծանօթ երեխանցը ձեռները և հարցրէց , թէ՛ ո՞վ են նրանք , և ի՞նչու համար են եկել , ի՞նչու համար են շորհակալութիւն անում :— « Ի՞նչպէս թէ ի՞նչու համար շորհակալ ենք » , ձէն տուին երկու նոր եկածներն և ետ միասին . « ի՞նչպէս շորհակալ չըլինք , որ մենք քեզմով ենք էս դիշեր ուրախ . ի՞նչպէս շորհակալ չըլինք , որ էս գիշերուան աօնը դու աւելի հրաշալի շենցիր մեզ համար . ի՞նչպէս շորհակալ չըլինք , որ առանց քեզ մենք էս դիշեր էսպէս հազնուած չէինք ըլի , երեք թհար<sup>2</sup> կերակուր չէինք ունենայ մեր սուփրի վրայ » :—

Պ . Միքայէլն համար անհասկանալի էին էս խօսքերը , էնդուր համար որ ոչ սրանցը ճանչնումէր , ոչ սրանցը համար

(1 տեսակ .

շոր, ո՛չ կերակուր էր ղըկել՝ և էս պատճառով ասեց նրանցը .  
 «Իմ սիրելիներ, դուք սխալուու մէք, դուք ձեր բարերարի տուն  
 չէք մտել, ես ձեզ առաջին անգամն եմ տեսնում» :— Չէ, մենք  
 չենք սխալուում, Ձեր ծառան էր, որնոր մեզ մօտ մէկ բոխ-  
 չայ շորերովու մէկ կալաթայ կերակրով բերեց . ես Ձեր ծա-  
 ռային լաւ եմ ճանչնում— ասեց էն երկուսից աւելի մեծը :  
 էս խօսքերու վրայ տուն է մանում Պողոսը : « Ա՛խ, հէնց սա էր,  
 շարունակեց խօսող անծանօթ երեխէն, Պողոսի վրայ մատով  
 նշանց տալով . « Իմ ծնողաց հետ եկեղեցի գնալուց, ճանա-  
 պարհին միտս եկաւ, որ մուսցել էի խտակ մամը . ճանապար-  
 հից յետ դառայ տուն, մոմը վեր առայ ու Ձեր տան առջևը  
 անցկենալու ժամանակը տեսայ, որ Ձեր ծառան, հէնց սա  
 Պողոսը՝ ձեռին մէկ բօխչայ ու կալաթայ ունէր . հէնց էն  
 բօխչէն ու կալաթէն, որոնց մէջը մենք գտանք Ձեր ուղար-  
 կած մեզ համար շորերը ու զանազան ուտելիքը : Չէ, ես չեմ  
 սխալուում, ես իմ բարերարի առջևն եմ կանգնած . էլի ու-  
 էլի շորհակալ ենք Ձեզնից, ու խնդրու մենք Աստծանից, որ  
 Ձեզ աւելի բախտաւորութիւն տայ ու հաստատ պահէ Ձեր  
 օջախը <sup>2</sup> » :

Իլինչ ասեմ, ո՞վ չի հասկանայ, որ էս երեխերքը էին Գէ-  
 օի երկու տղէն՝ Պետրոսն ու Գարրիէլը :

Պողոսն էլ մնաց սառած : Ո՛չ Նինօն, ո՛չ Յովհաննէսը, ոչ  
 Գրիգորը չէին զիտի, ի՛նչ ասեն. մտիկ էին տալի մէկմէկու-  
 վրայ անձէն, ու կարծես հարցնումէին մէկմէկու աչքերով,  
 թէ ի՞նչպէս է պատահել, որ Գէօի որդիքը խմացել են նը-  
 լանց արած գործը :

(1 Ուղարկել . (2 տանը .

Պ. Միքայէլը տեսնուեցր, որ էհ անծանօթ երեխանց խօսքերու միջ ճշմարտութիւն պէտք է ըլի. հարցնումէ Պողոսին, թէ զորդ են արդեօք նրանց ասած խօսքերը: Պողոսը ճշմարտացնումէ երեխանցը ու նրանց ձեռը բռնելով ցոյց է տալի նրանցը իրանց իսկ բարերարներուն:

Ինչպէս, միաբերան ձէն տուին Պ. Միքայէլը, Շուշանը ու ողջ զօնազները. ուրեմն զորդ է՞ էս բանը: Եւ վեր է կենում հէրը իր տեղիցը, մօտ է գնում իր երեխանց մօտ ու սըրանցը պաչպչելով ասումէ. «ուրեմն ձեր ձեռիցն է՞ դուրս եկել էս բարի գործը» . մէրն էլ պաչպչումէ իր կշտին նստած Նինօին: Վրայ են ընկնում Պետրոսը ու Գաբրիէլը Գրիգորի ու Յովհաննէսի վրայ ու միւսնոյն շնորհակալութիւնը նըրանցն են անում: Յովհաննէսը, Գրիգորը ու Նինօն ամօթից կարմած՝ շատ ժամանակ չէին կարողացել խօսք ասել, բայց վերջապէս Յովհաննէսը վեր է կենում տեղիցը ու ասումէ. «զորդ է, մեր ծնորդք, մենք ենք զրկել էն ամէն բանը, ինչ որ էս Ձեզ անծանօթ երեխերքը ասումեն: Ձեզ անծանօթ են սրանք. բայց մենք լաւ ենք ձանչնում սրանցը. ներեցէք, որ առանց Ձեզ յայանելու արինք էս գործը. միայն մենք ուզումէինք մեր արածը Ձեզ յետոյ յայանել»: Հէրն ու մէրը ուրախացած իրանց որդկերանց էսպիսի բարեսրտութեան գործը տեսնելով, իրանց ծնողական սիրտը շարժած՝ էլ բան չէին կարողացել ասել, միայն պաչպչումէին իրանց որդկերանցը. և յետոյ ասեց մէրը. «ներումենք ձեզ. թող առանց մեր հրամանքի անէք ուրիշ անգամ էլ էդպիսի Աստուծուն հաճելի գործքեր ու էդպիսի ազնիւ ու պատուական գործքեր»:

—«Կերթամ՝ հօրս կուխմացանեմ՝ որ զորդ Գուք եք էլ լել՝ մեր բարերարները • որ նա ինքը դայ և ձեզ շնորհակալութիւն անէ, ասեց Պետրոսը: Միայն սրա ձեռիցը բըռնեց Պ. Միքայէլը՝ ասելով: «Չէ՛, իմ որդի, հարկաւոր չէ՛, զընացէք տուն ու շարունակեցէք ձեր իրիկնահացը, բայց ես շատ կուզեմ ծանօթանալ ձեր հօր հետ • էս դիշեր թող հանդարտ քնեցէք • ու էզուց՝՝ դայ թող նա ինձ մօտ, ես նրան կուսպասեմ»:

—«Շատ շնորհակալ ենք, շատ ու շատ, կերթանք ու կը ուրախացնենք էս համբաւով մեր հօրը» • — ասին Պետրոսն ու Քարրիէլը ու ուրախ ուրախ դուրս վազեցան:—

Էլ ինչ ասել կուզէ, որ ողջ զոնաղները էլ խօսք չէին գըտնում Պ. Միքայէլն երեխանց զովասանքի համար: Աւրի՛նչպիտի մխիթարութիւն էր սրանց ծնողաց համար: . . .

Ա՞ր հէրը չէր ուզենայ էսպիտի պատուական որդիք ունենալ, ու ինչ մխիթարութիւն է ծնողաց համար տեսնել իր որդեքեանց էսպիտի անասման բարութիւնը: Էլ ինչ ուրիշ բախտաւորութիւն է հարկաւոր ծնողաց համար, եթէ ոչ իբանց որդիկեանց լաւութիւնը տեսնել: Աւրեմն, իմ խելքը կարդացողներ, իմ սիրելի երեխներ, լաւ կացէք, խելքը կացէք, սրաներդ իստակ ու բարի պահեցէք, որ ըլնք բախտաւոր ու բախտաւորացնէք ձեր ծնողացը, որոնք որ ձեզ համար միշտ հոգս են քաշում ու ձեզ համար իրանց կեանքը մաշում:

Էս իրիկնապահը՝ ի հարկէ շատ քաղցր էր Պ. Միքայէլի համար • բայց աւելի դեղեցիկացաւ էս իրիկունը նրա համար

(1 Եղեր. (2 վաղը:



երբ որ տեսաւ իր որդիներանցը էսպիսի պատուական զործը:


Իսկոյն և ետ Պ. Միքայէլը խնդրեց Յովհաննէսին, որ իրան պատմէ, թէ ո՞վքեր էին էն երեխերքը, և ո՞վ էր նրանց ծնողքը: Յովհաննէսը կալ ճ խօսքերով պատմեց Գէօի պատմութիւնը, որնոր Պ. Միքայէլի սիրտը էնպէս շարժեց, որ սա վճռեց անպատճառ միւս օրն և ետ Գէօի համար իրան յարմար պաշտօն ճարէ և նրա նեղացած զբուծիւնը թեթեւացնէ:

Ի հարկ է մտիկ էր տալիս Աստուած վերելից էս բարեպաշտ ընտանիքի վրայ, ու էս գիշեր էս տան վրայ հասաւ Ասածու օրհնութիւնը, որնոր և միշտ անպակաս մնաց Պ. Միքայէլի և նրա ընտանիքի վրայ. էնդուր որ նրա որդիքը մեծացան, շատ խմաստուն ու մեծ մարդիկ դարան, և ինչ որ նրանք երեխութենի ժամանակը անումէին, մեծացած ժամանակը աւելի մեծ մեծ չափով էին անում:—



## ԵՐ ԵՒ Ս Ա Ն Յ Ե Ր Գ

ՍԻՐՈՒ ՎՐԱՅ . .



- Օ՛յ , արի սիրենք , մենք միշտ երեխերք ,  
 Ամէն էն մարդուն , որ սիրումէ մեզ ,  
 Որնոր մեզ համար հոգս է միշտ քաշում ,  
 Ու մեզնից իր խրատը չէ պակսեցնում :
- Օ՛յ , արի սիրենք մենք միշտ երեխերք ,  
 Ամէն էն մարդուն , որ է իմաստուն .  
 Որ հոգին բարի ու ազնիւ ունի ;  
 Որնոր ողորմած է միշտ աղքատին ,
- Օ՛յ , արի սիրենք , մենք միշտ երեխերք ,  
 Ամէն որբ ու խեղճ աղքատ երեխին .  
 Զթողնենք , որ մասն նրանք անտէր , քաղցած ,  
 Ու նրանցը շինենք մեզ եղբայր , բարեկամ :
- Օ՛յ , արի սիրենք , մենք միշտ երեխերք ,  
 Ու պատուենք մեզնից մեծին պառաւին ,  
 Սիրենք աղքատին , սիրենք քամբախտին ,  
 Ու նրանցը օգնենք , ինչով որ կարնանք :
- Օ՛յ , արի սիրենք , մենք միշտ երեխերք ,  
 Բարի երեխանցը ու լաւ ընկերին .  
 Բայց թող վատերին էլ արի չճատենք ,  
 Ու միշտ աշխատենք , որ նրանցը լաւացնենք :

Օ՛յ , արի սիրևնք , մենք միշտ երեխներք ,  
 Խաղեր ու երգեր , զբօսանք , զուարճութիւն .  
 Սրտներս պահենք իստակ ու ուրախ ,  
 Ու թնղ պառաւանները քաշեն մեր դարդերը՝

Բայց պէտք է էն էլ մենք չմոռանանք ,  
 Որ աշխատանքի ու ուսման մէջն էլ  
 Մեր ջնէլ օրերը պէտք է անցկացնենք ,  
 Որ՝ երբ մեծանանք , էլ չփոշմանենք :

Ուրեմն եկէք , սիրևնք երեխներք .  
 երգեր ու ուսում , աշխատանք ու խաղ ,  
 Ամէն մարդկերանցը՝ թէ բարի թէ չար .  
 Էնդուր որ ամէնին սիրումէ Աստուած ,  
 Աստծուն հօ՛սիրումենք ու սիրում :



## ԱՍՏԾՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՔՆԵՐԸ :

Ո՞վ ձեզնից, իմ սիրելի կարգացողներ, սերելի երև-  
խե՛րք, չէ ուզում, որ ժամանակով մեծ մարդ, լաւ ու խե-  
լօք մարդ դուրս գայ, ու հնպիսի մարդ, որի վրայ ամէնքը  
մատով ըլին նշանց ապլիս, որի խելքը ու իմաստութիւնը  
ամբողջ աշխարհքը գովում ըլի, հնպիսի մարդ ասումեմ,  
որին որ հազարաւոր մարդիկ օրհնում ըլին ամէն նրա ա-  
լած բարի գործքերու համար, ու ամէն օր իրանց աղօթքի  
մէջ Աստուծոյ մօտ նրա համար երկար կեանք, առողջութիւն  
և բախտաւորութիւն ըլին խնդրում Աստուծանից :

Գիտեմ, ամէն մէկը ձեզնից ցանկանումէ, որ էրպիսի  
մարդ դառնայ, բայց հեշտ չէ էս բանը, թէ պէտեւ էնպէս  
էլ շատ դժուար չէ, ի՛նչպէս կարելի է կարծէք : Աշխարհ-  
քումս ոչինչ դժուար բան չկայ մարդու համար : Աստու-  
ած մարդու էնպէս է սակզծել, որ ինչ որ ուզենայ մարդ  
կարող է անել : Ի՛նչ բան էլ մտքումը դնէ, կարող է նրան կա-  
տարել : Եթէ միայն իր ուզածը ըլի բոլոր սրտով, և ո՛չ թէ  
միայն խօսքով կամ մտքով, ելբոր մարդը իր ցանկանալը գործ-  
քով էլ ցոյց տայ ու գործքով աշխատէ, որ իր ցանկացած  
բանին հասնի : Ուրեմն ձեզ համար էլ, երևխե՛րք, դժուար  
չէ ժամանակով լաւ ու մեծ մարդ դառնալ՝ միայն պէտք է  
երկտուց և ետ պատրաստէք ձեզ զառու ժամանակուան հա-  
մար : Ի՛նչպէս որ տղամարդ եղած ժամանակը պէտք է շատ  
ուրիշ աղամարդ ներկից ջոկվէք ու մեծ ու լաւ մարդ ըլիք, էն-  
պէս էլ երկտու թէնի ժամանակը պէտք է լաւ, խելօք ու մեծ  
հոգւով երկտայ ըլիք :—

Ի՞նչպէս պէտք է անել, որ հիմիկ լաւ երէխերը ու ժամանակով լաւ մարդիկ դուրս գաք, որն է էն ճանապարհը, որով դուք պէտք է գնաք, որ հասնէք լաւութէնին ու մեծութէնին, կուհարցնէք իմ խելօք երեխերք: Էն ճանապարհը է՝ Աստու պատուիրանքները կատարել, Նրա խօսքը լսել, Նրա կամքը ու խրատները կատարել. մէկ խօսքով ձեզ էնպէս պահել, ի՞նչպէս Նա մեզ սովորեցնումէ, ի՞նչպէս Նա ուզո՞ւմ է, որ մենք ըլինք:

Բայց դուք իմ սիրելիներ, իսկոյն և ետ կասէք, թէ ի՞նչպէս պէտք է իմանաք, թէ որն է Աստու կամքը, թէ որտեղ է Աստուած ձեզ հետ խօսում, կամ երբ է Նա ձեզ իր ճանապարհը ցոյց տուել:

Ղորդ է, Աստուած ինքը ձեզ հետ չէ խօսում. Նրա ձէնը էնպէս, ինչպէս դուք մէկմէկու կամ ձեր ծնողքի ձէնը լուսնի, չեք լսում, միայն գիտացէք, որ շատ անգամ Աստուած ինքն է երևել մարդկերանցը ու ինքն է խօսել նրանց հետ ու նրանցը իր կամքը յայտնել: Արթուն ունի իր աչքը միշտ էլ մեզ վրայ մեր ամենաբարի Ստեղծողը ու ամէն ժամանակ էլ ցոյց է տալի մեզ իր հրաշքները և մեզ խրատումէ, երբ որ մեզ նեղացած է տեսնում ու երբ որ մենք ճշմարիտ սրտով նրանից օգնութիւն ենք խնդրում: Չանաղան ժամանակ մեզ տուած Աստու պատուիրանքները, Նրա խրատները, Նրա քարոզները, Նրա կամքը, ամէնը գտնուում են Աստու շնչով ու Նրա հրամանով գրած Սուրբ Գրքի մէջ, որնոր ՚ի հարկէ դուք, իմ երեխերք, դեռ փոքր ըլլելով չեք կարդում. բայց կուգայ ժամանակ, երբ որ կուսնանաք, ձեր միտքը կուբացուի ու ձեր խելքը կուհաստատուի ինք-

հերդ կուկարդաք էն Սուրբ Գիրքը, ու ինքներդ կուխմանաք  
ամէն նրա մէջ եզածը մէ մէկ : Բայց մինչև զեռ ձեր ծնող-  
քը, ձեր ուսուցիչները, ձեզնից մեծերն են, որոնց բերնից  
պէտք է լսէք ձեր Ստեղծողի ու Երկնաւոր Հօր կամքը. հիմիկ  
Աստուած ձեզ հետ ձեր հօրն ու մօր, ձեր ուսուցչի բերնով է  
խօսում : Աւրեմն լսել ձեր ծնողքի խրատները, յետեւիլ ձեր  
ուսուցչի ու հօրն ու մօր տուած խորհուրդներուն ու նրանց  
ցոյց տուած բարի ճանապարհին, կատարել ձեր մեծի ու  
բարի կամեցողի խօսքը, կուրլի կատարել Աստծու պատ-  
ուիրանքը : Ես ձեր ոչ հէրն եմ, ոչ ձեր ուսուցիչն եմ, իմ սի-  
րելի երեխերք, միայն ես ձեզ սիրում եմ, ես ձեր բարեկամն  
եմ, ձեզ բարի ցանկացողը. ես սիրում եմ երեխերք, և ու-  
զում եմ, որ դուք ժամանակով ամէնքդ լաւ ու մեծ մարդիկ  
դուրս գաք. և էն էլ գիտեմ, որ շատը ձեզնից կամ հէր չու-  
նի կամ Աստծու պատուիրանքները ցոյց տուող չունի ու  
ինքը չգիտէ, թէ ի՞նչպէս անէ, որ Աստծու ուզած ճա-  
նապարհով գնայ : Այ կնպիսիներու համար էլ գրում եմ՝  
էս շարքերը, որ սրան կարդաք դուք, ու կարդաք ու շա-  
ղրու թէնով ու կարդացածը լաւ հասկանաք :

Ամէնից առաջ, երեխերք, պէտք է գիտենաք, որ ինչ որ  
դուք ձեր չորս կողմը տեսնում էք՝ հող թէ ջուր, սարեր թէ  
ձուր, ծառ թէ խոտ, մարդ թէ անասուն, երկինք թէ եր-  
կիր, արեգակ թէ լուսին թէ աստղեր, ամէնի ստեղծողը ու  
շինողըն է Աստուած : Աստուած է, որնոր իր անսահման զօ-  
րութեամբ էնով ու իմաստութեամբ շինել է ամէն մեր տեսածը ու  
էնպէս լաւ, էնպիսի ուստութեամբ, որ չէ թէ ամբողջը,

(1 ճարտարութենով, հմուտութենով :

այլ եթէ մէկ վարդի տերև էլ ուզենայինք մենք միասին, ինչ որ աշխարհքում մարդիկ կանք շինել, էլի չէինք կարող : Բայց Աստուած ի՞նչքան մեծ մեծ ու զեղեցիկ բաներ է շինել : Տեսնու՞մէ՞ք ուրեմն իմ երեխերը, որ Ասածու մեծութէնին, Նրա զօրութէնին ու իմաստութէնին սահման չըկայ :

Ինչպէս որ նա իր ստեղծած բաներու մէջ իր մեծութիւնը, իր զօրութիւնը ու իմաստութիւնն է ցոյց տալիս, էնպէս էլ իր սէրը մարդկերանց համար : Ա՛խ, իմ սիրելիներ, տեսէ՛ք, ի՞նչքան մեծ է Ասածու սէրը մարդու համար, որ ինչ որ ստեղծել է Նա՝ ամէնը մարդուս պէտք զալու համար, որ մարդս ոչ մէկ բանի մէջ պահասութիւն չունենայ : Վեր առնենք զորօրինակ ծառերը : Ի՞նչքան օգուտ են բերում սրանք մարդուս . ի՞նչ պէտք է անէինք մենք, եթէ ծառ կամ փետ չունենայինք . ի՞նչից մենք մեր սները կու շինէինք, կամ ի՞նչով մեր սները ցուրտ ժամանակը կուտաքցնէինք, և պտուղ ասած բանը հօ իսկի չէր ըլի, որնոր ամառ՝ այժմ մանակը մեզ էնպէս զովացնումէ (հովցնումէ) : Ել չեմ ասում, թէ շատ երկիրներ կան, որտեղ որ մարդիկ միայն պըտուղներով են կերակրուում : Եթէ ոչխար չըլէր, ո՞վ կուտար մեզ բուրբ, որից որ մահուդ ենք շինում ու նրանից մեզ համար շորեր կարում : Եթէ ձին, եզը, զոմէջը, ուղտը, էջը չըլինէին, ո՞վ կուքաշէր մեր բռները, մեր սէլերը, առանց նրանցը մարդս ինքը պէտքէ տանջուէր ու բեռը քաշէր :

Ել ի՞նչ մէկ մէկ համբրեմ . Ասածու ստեղծուածներից

որը կուզէք վեր առէք կուտանէք, որ ամէնը մեր օգտի համար են :

Ի՞նչպէս թէ ամէնքը մեզ օգտաւետ են, կարելի է շատերը ձեզնից իմ կարգացողներ, ասեն, գործօրինակ օձը, գէլը ու սրանց իման կ՛ծող կենդանիները մեզ բաց ՚ի վնաս տալը ի՞նչ օգուտ են բերում: Ղորդ է, աշխարհքումը շատ բան ենք տեսնում, որնոր մեր կարծիքով աւելորդ մինչև որ աշխարհքիս և մարդուս համար վնասակար ենք համարում. բայց էդպէս մտածելով մենք մեղանշումենք մեր Աստծու առջև, էնդուր որ Նա մեզ էնպէս սիրումէ. էնքան Նա մեզ համար հօգս է քաշում, որ չէ կարելի, որ Նա մեզ համար վնասակար բաներ ստեղծէր: Բայց եթէ մենք զորդ տեսնումենք էնպիսի վնասակար կենդանիներ, մենք նրանցը ու առհասարակ Աստծու ստեղծուածներուն ամէնին լաւ չենք ճանչում, նրանց միայն կ՛ծող ու վնաս տուող բնութիւնն ենք տեսնում, այլ նրանց բերած օգուտը չենք տեսնում ու ուզիղը չենք իմանում, թէ ի՞նչ է էլել Աստծու կամքը էն անասունները ստեղծելիս: Բայց եթէ դուք ուզենաք ամէն Աստծու ստեղծած բաներու հետ աւելի մօտիկ ծանօթանալ, նրանց ամէն բնութիւնը լաւ իմանալ, էն ժամանակը դուք էլ չէք ասի, թէ էսպիսի ստեղծուածներ Աստուած ի՞նչու է ստեղծել: Էստուր՛ց երևումէ, որ ամէն մարդու պարտաւորութիւնն է որ Աստծու շինած ու ստեղծած բաները լաւ իմանայ, որ էլ չասի առանց մտածելու, թէ ի՞նչն է հարկաւոր էսպիսի բանը կամ թէ լաւ կուրէր, որ էս ու էս բանը Աստուած չստեղծէր: Միթէ՞ Աստուած չէր դիտի, թէ ի՞նչը պիտի ստեղծէր, Աւրեմն էդպիսի խօսողը



իրան Աստծանից աւելի խելօք է կարծում, և 'ի հարկէ որ մեղք է գործում Աստու առջևը: Չէ, Աստու ամէն ստեղծած բաները մեզ օգտաւէտ են և սրանով Աստուած ցոյց է տալիս, թէ ինչպէս Նա մեզ սիրումէ: Ուրեմն ինչքան պարտական ենք մենք էլ նրան սիրելու ու նրան շնորհակալ ըլելու նրա ամէն մեզ արած լաւութիւններու համար. և ի՞նչով կարող ենք մենք ցոյց տալ նրան մեր շնորհակալութիւնը, գիտէք, իմ սիրելի երեխերք, գիտէք, Նա ի՞նչ է ուզում մեզնից—միայն էն, որ մենք կատարենք նրա պատուիրանքները, նրա կամքը: Ինչն էլ միշտ ասումէ. «ով որ իմ խօսքը կուսէ, ո՞վ իմ կամքը կուկատարէ, նա է իմ սիրելի որդին»: Ա՛խ, ի՞նչպէս քաղցր ու դուր գալու բան, ի՞նչ բախտաւորութիւն պէտք է ըլի էն մարդու համար, երբ որ Աստուած կասէ նրան «արի՛ ինձ մօտ, դո՛ւ իմ սիրելի որդին ես, ես միշտ քեզ հետ կուըլիմ»:

Եւ ի՞նչ են էս Աստու պատուիրանքները: Չկարծէ՛ք որ մէկ շատ դժուար բան է: Խելօք ու լաւ երեխերքը առանց էս գիրքը կարդալու էլ Աստու պատուիրանքնրից մէկքանիսը կատարում կուըլին. բայց երեխէն, ամէն մարդ պէտք է ջանք անէ, ո՛չ թէ մէկ երկուսը, այլ ամէն Աստու պատուիրանքները կատարէ, որ Աստու ըրողովն սիրելի դառնայ: Էս անգամ ես ձեզ հետ, իմ սիրելի երեխերք, Աստու միայն մէկ երկու պատուիրանքի վրայ կուխօսեմ:

Ամէնից առաջ մենք պարտական ենք ճանչնալ Աստու ընդ պարտական ենք գիտենալ ու հաւատալ, որ մեր աշխարհքի ստեղծողը է Աստուած և էն Աստուածը մէկ է: Դուք, իմ սիրելի կարգացողներ, կարելի է զորմանաք, ու իսկոյն և ետ ինձ


«էք. ՚ի հարկէ, որ աշխարհքի Ստեղծողը՝ Աստուածը մէկ է. էդ ո՞վ չգիտէ, և ոչ թէ երկու կամ շատ» : Էդպէս է, դուք ուղիղ էք կարծում. դուք ճանաչում էք ուղիղ Աստուծուն Բայց կան հնպիսի մարդիկ, հնպիսի ազգեր, որոնք որ ուղիղ չեն ճանչնում Աստուծուն. նրանց համար արեղակը մէկ Աստուած է, էնդուր որ նա նրանցը լոյս ու տաքու թիւն է տալի, էնպէս էլ կրակը Աստուած է, ծոփն էլ Աստուած, և առհասարակ ամէն բանը, ինչիցը որ մէկ օդուտ են ստանում կամ փնաս, նրան իբրև Աստուծուն են պաշտում. և էսպիսով էնպիսի մարդկերանց համար շատ Աստուածներ կան, և երկու թհար՝ չար և բարի Աստուածներ, նայելով՝ ումիցը փնաս կամ օդուտ են ստանում : Տեսնումէք ուլեմն, իմ երեխերք, որ ինչքան կոյր մարդիկ կան աշխարհքումս. այ, ինչու համար եմասում, թէ մէկ Աստուած կայ, և նրան մէնակ պիտի ճանչնանք : Կան ազգեր, որ էրծթից, ոսկիից ու զանազան թանկագին քարերից մարդու կերպարանքով բաներ են շինում ու նրանցը երկրպագութիւն են տալիս, ինչպէս Աստուծուն նրանցը մատաղներ են բերում, նրանցից բան են լնդրում. և ՚ի հարկէ, որ էն էրծթէ շնած մարդու կերպարանքը նրանցը ոչինչ չի տայ, և եթէ էնպիսի մարդկերանց խնդիրըը կատարվումէ, էլի մեր ճշմարիտ Հայր Աստուածն է, որնոր վերելից տեսնումէ մարդկերանց սխալուելը, էլի խղճումէ նրանցը ու կատարումէ էնպիսի մարդկերանց խնդիրըը : էսպիսի էրծթէ շնած մարդու կամ զանազան կերպարանքները կուռք են անուանուում : Աւրեմն կուռքեր շինել ու նրանցը պաշտել մեծ մեղք է և նշանակումէ Աստուած չճանչնալ, ու Աստուծուն նեղաշնել էդուրով :

Էնպիսի մարդիկ, որոնք կուռքեր են պաշտում և կուռ պաշտ են անուանուում, էլ չեն մտածում թէ իրանք են ախար էրծ թից շինել իրանց Աստուծուն, և էլ չեն իրանց իրանց հարցնում, թէ էն էրծաթը, որնոր գեանից հանում ենք, ո՞վ է նրան էն գեանի մէջը դրել ու շինել: 'Ի հարկէ, եթէ էսպէս մտած էին, էն ժամանակը իսկոյն պէտք է հասկանային, որ իրանց ձեռքով շինած Աստուածը չէ Աստուած, այլ կայ ճշմարիտ Աստուած ամէն բանի ստեղծողը, և էսպէս մտածելով էլ կուռքեր չէին պաշտի, այլ մեզ պէս մէկ ու ճրշմարիտ Աստուծուն կուռնչնային: Ահա էսպէս մէկ Աստուծուն ճանչնալ, նրան սիրել, նրան շնորհակալ ըլիլ նա արած մեզ ամէն լաւութիւններու համար ու նրան խոնարհ ու հընազանդ ըլիլ է ամէն երեւի, ամէն մարդու ամէնից գլխաւոր պարտաւորութիւնը. և սրանով կուկատարենք Աստուծու առաջին պատուիրանքները, որնոր նա ինքն տուել է մեզ՝ ասելով. «Ես եմ միայն Աստուած, և բաց 'ի ինձ ուրիշ Աստուած մի ճանչնաք: Մի՛ շինէք ձեզ համար կուռքեր, ու նրանցը իմ տեղ մի՛ պաշտէք»:



# Բ Ա Ր Ի Ս Ի Ր Տ :

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽԱՂ :



ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ :

ՆԻՆՅՆ՝ 12 տարեկան աղջիկ :

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՐ՝ 11 տարեկան տղայ, Նինոի եղբայրը :

ԱՐՇԱԿ ՈՍԿԱՆԵԱՆԸ՝ սրանց հէրը :

ԱՍՏՈՒԱԹԱՏՈՒՐԸ՝ բարձնչին՝ :

ԳՐԻԳՈՐԸ՝ մէկ խեղճ տղայ՝ 13 տարեկան :



Թէ՛ստորը պատկերացնումէ մէկ բաղչայ՝ ծաղիլուն քով լի՛ք, ալ կորմը Ոսկանեանի տունը ծառերով հովանաւորում. Աստուածատուրը բաղչի ետևումը ջրումէ ծաղիլներ:

Տանիցը դուրս է գալի՞ք

ՆԻՆՅՆ (ձեռին մէկ կալաթայ յ բռնած):

Ա՛խ, էս ի՞նչ սիրուն առաւօտ է, ինչպէ՞ս մեծ է Աստուած քո զօրութիւնը, ինչպէ՞ս մեծ է քո խնամքը մեզ վերայ. ա՛խ, էս ի՞նչ անուշ հոտեր են փչում՝ ամէն կողմից. տես, ինչպէս սիրուն բացուել են ծաղիլներս, իրիկուան թողած ողջ կոկոնները ծաղիկ են դառել. տես վարդերուս, ի՞նչպէս սիրուն են. միխակներս, ա՛խ, ինչպէ՞ս գեղեցիկ են ամէնը. և սրանց ամէնին Գ՛նւ ես մեզ տալիս, Ամենակարող Արարիչ, (դէպի երկինքը նայելով). ի՞նչ ասեմ, ինչպէ՞ս յայտնեմ քեզ իմ Աստուած, իմ շնորհակալութիւնը: Ա՛խ, երանի՛ մէկ

(1 Պարտեզպան • (2 պարտեզ (3 կողով.

քեզ տեննէի, ընկնէի ոտքերքիդ, պաշաննէի, ու հարիւր ու հազար անգամ շնորհակալ ըլէի, որ իմ ծաղկներուն ծաղկել ես տալի, որ էսպիսի անուշ հոտով լքցնուամես պարտեզըս, որ՝ զարթեամ թէ չէ, ուրախանայ սիրտս, կշտանան անքերս էսպիսի գոյն գոյն ծաղկներով (Մանուշակ տեսնելիս) Ա՛խ, իմ սիրեկան մանուշակ, դ՞ու էլ ես բացուել, դ՞ու էլ զարդարուելես մաւի ու սպիտակ շորերով, դ՞ու էլ ինձ համար ուրախութիւն ես պատրաստել, էս ի՞նչ է քո հալդ. էս ի՞նչ խոտ է դուրս եկել քո կշտին ու քեզ թաքցնումէ. արի՛ ես քո գոյէնքդ լաւ խտրիեմ՝ (կոսնումէ և մանուշակի չորս կողմը խտկումէ): Քեզ համար, մանուշակ ջան, ոսկէ հող պէտք է, և ո՛չ թէ էսպիսի սև հող: Հա՛, էսպէս, հիմիկ ո՞վ որ գայ էս բաղչէն, էլ դու չես թախկենայ նրանից, բայց քեզ դեռ ջուր չեն խմացրել, խնդձս, գնամ, իսկոյն՝ և ետ բերեմ քեզ խմելու, խնդձս, ծարաւի կուրլիս: (Վեր է կենում որ դնայ, բայց մինչև էն ժամանակը բաղնչին ծաղկները ջրերով մոտենումէ Նինօին, և նրան տեսնելով ասումէ Նինօն): Ա՛ր, Աստուածատու՛ր, էստեղ կ՛ես, բարի լոյս քեզ, ես առաջ Աստծուն շնորհակալութիւն արի, որ էսպէս սիրուն ծաղկներըս բաց է անել տալիս. և յետոյ քեզնիցն եմ շնորհակալ, որ էսպէս լաւ մտիկ ես տալի սրանցը: Ախար սրանք էլ մեզպէս կեանք ունին, մեզպէս սրանք էլ ծարաւումեն ու քաղցումեն. ապա՛, սրանցն էլ ջուր չէ՞ հարկաւոր. սրանցն էլ կեարկուր չէ՞ հարկաւոր: Հա՛, շուտով արի՛, քիչ խմացրու իմ սիրեկան մանուշակին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ:

Ճմարիտ ես ասում, աղջիս, սրանցն էլ պէտք է կերակրած ու ջուր խմացրած: (սկսումէ ջրել):

ՆԻՆՕՆ :

Ա՛յն, եթէ դու էլ լսէիր, ի՞նչպէս երեկ հէրս մեզ պատմու մէր ծաղկնեբու վրայ, նրանց կեանքի վրայ. բայց ամսն, որ հօրս ասածը ողջը չկարողացայ հասկանալ: Բայց «ոչինչ» ասէց հէրս, երբ որ ես կուժեճանամ, էն ժամանակը ամէնը լաւ կուհասկանամ. մինչև դեռ, ասու մէր նա, էնքանրն էլ բաւական կուրլի, եթէ խմանամ, որ ծաղկնեբն էլ կեանք ունին, որ նրանք էլ մեզպէս կենու մեն ու մեռնու մեն, և որ մեր պարտաւորութիւնն է նրանցը լաւ մտիկ տալ և նրանց համար հոգս քաշել, որ նրանք շատ սպրին:

Բայց, իմ սիրելի Աստուածատուր, հօ՛ շնօ տեսել սպիտակ զամբախնեբուս, կարծեմ որ բացուած պէտք է ըլին. զնամ տեսնեմ նրանցը:

(վաղումէ պարտեպի դէպի ետեի կողմը):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ: (վաղը Նինօին նայլով):

Դու, իմ պատուական աղջկ. էս ի՞նչ հոգի է, ի՞նչ սիրտ, փառք քե՛զ, Աստուած, որ դու իմ վերջին օրերուս համար էսպիսի մխիթարութիւն ես պատրաստել՝ էս հրեշտակին միշտ աչքի առաջիս ունենալով, սրա անուշ ու քաղցր ձէնը լսելով: Աստուած, Դու ողորմած ամէնի վրայ, Դու պահպանիր սրա մէջ միշտ էս իստակ ու բարի սիրտը, էս մեծ ու ազնիւ հոգին: (Տան սանդխտից վրէ գալիս Յովհաննէսը): Ահա՛ գալիս է և միւս հրեշտակը:

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ:

Բարի լոյս քե՛զ, իմ սիրելի՛ Աստուածատուր:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ:

Աստու բարին քե՛զ, իմ աչքի լոյս:—

ՅՆՎՀԱՆՆԵՍԸ :

Ինչպէս վաղ եւ վերկայել զու , որ աշդէն ողջ բաղէն ջրեկես : Ինչպէս սիրուն զարդարուել է բաղէն ծաղկունքով : Ծնորհակալ եմ քեզնից , որ էսպէս լաւ հոշս եւ քաշում արանց համար . տես էնտեղ , ի՞նչ գոյն գոյն ծաղկներ են . մէկքանի ծառերն էլ պտուղներով լքցուել են : Բայց ո՞ր է Նինոն :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻՐԸ :

Նա գնաց իր սիրեկան զամբասններու մօտ :

ՅՆՎՀԱՆՆԵՍԸ :

Զամբասնէրը , հա՛ , իմն էլ են նրանք սիրեկան :

(վաղումէ էն կողմը , որ կողմը որ Նինոն վաղեց) :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻՐԸ : (նրան ետեից մտիկ տալով) :

Աստուած թո՛ղ ձեզ միշտ էղպէս անբաժան պահէ մէկմէկից , եւ ձեզ էղպէս սիրով ծէրացնէ : (Նստումէ աթոռի վրայ , եւ ձեռը ճակտին դրած , մտածմունքի մէջն է մտնում , եւ մէկքանի ժամանակից յետոյ ասումէ) : Հիմիկ մէկը **ՉՅ** տարեկան , միւսը **20** տարեկան կուրէիք : Ելի փառք քեզ՝ Աստուած - կամքը քունն էր . ի՞նչ կարող եմ մեղաւորս ասել քո արածին : (Էսպէս սրա վրէժրտու եղած ժամանակը մօտենումեն Նինոն եւ Յովհաննէսը , եւ զարմացած մտիկ են տալիս պատասխն , եւ կողքի են գնում հասումէ) :

ՅՆՎՀԱՆՆԵՍԸ (իր քրոջը) :

Քոյր իմ , տեսնումես , ինչպէս տխրել է մեր Աստուածատուրը :—

ՆԻՆՈՆ (Աստուածատուրից աչքը չհեռացնելով) :

Հա՛ , տես , ինչպէս խեղճը ուզումէ կարծես թէ լաց ըլի :

ՅԵՂԷՍՅԱՆԻՍԸ:

Պէտքէ սրան մէկ վատ համբաւ հասած ըլի. բայց զարմանքէ, հիմիկ չէ՞ր որ ուրախ ուրախ մեզ հետ խօսուամէր:

ՆԻՆՅՆ:

Չէ, էլ չեմ համբերի, սրան էսպէս տեսնելով. կերթամ հոս հարցնեմ, թէ ի՞նչ է պատահել. (մտանումէ Աստուածատուրն ե կամաց նրան ձեռը տալով ասումէ). չէրիկ, ասա՛ ինձ խընդրեմ, ինչո՞ւ է դպիսի մտածմունքի մէջն ես մտել:

ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒԲԸ:

Է՛նպէս, որդեակ իմ. անցկացած ժամանակի վրայ եմ մտածում:

ՆԻՆՅՆ:

Միթէ՞ անցկացած ժամանակդ էնպէս տխուր է էլել, որ նրա վրայ մտածելով, ամենայն ուրախութիւնը ու պարզութիւնը երեսիցդ կորչումէ:

ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒԲԸ:

Չէ, ի՛նչպէս կարելի է ասել, որ անցկացած ժամանակը ամէնը վատ է էլել, միայն ինձ էն ժամանակներումը մեկփքանի բան է պատահել, որնոր չեմ կարող առանց տրամելու միտս բերել:

ՆԻՆՅՆ:

Ի՞նչ պէտք է ըլի էդ քո ցաւը, ասա՛ մեզ. չե՞նք կարող քեզ արդեօք մենք օգնել, կամ եթէ մենք չէ, կարելի է մեր հէրն ու մերը քեզ օգնական կարողանան ըլել:

ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒԲԸ:

Ինչո՞ւ չէ, էլ ի՛նչ կուզեմ օգնութիւն. դուք առանց



իմ ասելու արդէն անումէք ինձ, ինչ որ ես ձեզնից պէտք է խնդրէի, Գիտէք, իմ աղուճակներ, ես էլ, ինչպէս ձեր հէրը, ունէի ձեզպէս մէկ տղայ ու մէկ աղջիկ, և նրանց վերայ միշտ յոյս ունէի, որ երբ որ կուպառվիմ, նրանք կուրին իմ մխիթարութիւնը, իմ օգնականները, բայց էն երեխանցը ինձնից աւելի Աստուած սիրեց և իր մօտ տարաւ, և ես մնացի առանց որդիերանցը, Հիմիկ ձեզ որ տեսնումեմ, նրանք են միշտ իմ միտս գալի. ահա՛ էնդուր համար հիմիկ տխրեց սիրաս :

ՆԻՆՕՆ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՐ :

**Ա՛խ**, մեր սիրելի Աստուածատուր, ղըշդ որ քո խօսքերը տխրեցրին և մեր սրտերը :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

Բայց չէ՛ մի՛ էդպէս տխրիք ինձ համար, տարաւ ինձնից ամենաբարին Աստուած իմ Մարգարտիս ու Գրիգորին, բայց բախշեց ինձ նրանց տեղ ձեզ, որ ձեզմով մխիթարվի սիրտս, ձեզմով փառաւորվի հոգիս. ուրեմն, տխրելու տեղ ուրախ պէտք է ըլիք, որ ինձ էլ ուրախացնէք :

ՆԵՆՕՆ :

Էդպէս, իմ պատուական հէրիկ, էդպէս միշտ ուրախ խօսէ՛. ինչ կուղես ինձնից, ասա՛, հրամայէ՛, որպէս թէ ես քո Մարգրիտն եմ, ես ամէն քո ուզածդ, քո ամէն կամքդ կուկատարեմ :

ՅՈՎՀԱՆՆԵՍԸ :

**Ես էլ քո Գրիգորը կուրլիմ** :—

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

**Ա՛խ**, Աստուած ձեզ պահէ, էս քանը ինձ բառական էր :

Եկէք, որ ժամանակ չկորչի, ձեզ համար ծաղիկներ քաղեմ, որ դնաք ու ձեր ծնողաց սենեակը զարդարէք: (Էս խօսքերը ասելիս Աստուածատուրը ու քորն ու եղբայրը կոանումեն ու ծաղիկնք են քաղում ու կօնէք: շինում, և էսպէս քաղելով՝ հեռանումեն պարտեզի ետևի կողմը, Մէկքանի ժամանակից յետոյ յետեն դալիս քորն ու եղբայրը ձեռք ձեռքով աված ու կողովը ծաղիկներով լիք):

ՆԻՆՕՆ:

Գնանք, զարդարենք ծաղիկներով մեր ծնողաց սենեակները:

ՅՈՎՀԱՆՆԷՍ:

Հա՛, շտապենք, մինչև որ նրանք չեն զարդել:—

(Երկուսն և ետ դնումեն, մտա՛մէ մշնակ)

ԱՌՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ:

Երանի՛ քեզ Ոսկանեան, հազար երանի՛ քեզ, որ էսպէս բախտաւոր ես երեխանցով, սրանից էլ աւելի բախտաւորու թիւն ի՞նչ կարելի է խնդրած Աստծանից:—

ՄԷԿ ԶԷՆ Է ԳԱԼԻ:

Հէրիկ, իմ սիրելի հէրիկ:

ԱՌՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ (սկանջ զնելով):

Էս ի՞նչ ձէն է զալիս, էս մի՛ է ինձ կանչում:

(Գէս ու դէն մտիկ է տալիս, և բազմի ծէրին մէկ փոքրիկ աղի զրուս տեսնելով, ասումէ):

Ո՞վ ես, իմ սիրելի՛ ինձ չե՞ս կանչում:

ԱՆԾԱՆՕԹ ԶԷՆԸ:

Հա՛, քեզ էի ձէն տալիս, լսէ՛ ձէնիս, ողորմու թիւն արա՛ աղքատիս:

1 Ծաղիկներու փունջ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ : (Տեղիցը վեր է կենում, գնում է  
բաղչի պատի մօտ, բաղչի դուռը բաց է  
անում և տուն է բերում մէկ խեղճ երեխայ) :

Ո՞վ ես դու, իմ որդեակ, և ինչպէ՞ս էսպէս վաղ տանիցը  
դուրս ես եկել թէ չէ, ողորմութէնի ես մանգալի :—

Ա.Գ.ՔԱՏ ԵՐԵՒԵՆ :

Ա՛խ, ի՛նչ տուն, ի՛նչ տեղ. ո՞վ է տուել ինձ տուն :  
Իրիկուան ամբողջ գիշերը՞ քու չումն եմ անցկացրել անձրևի  
տակը. ամբողջ գիշերը սառել, իրիկուան կէսօրից դէսը  
մէկ կտոր հաց բերանս չեմ գրել :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

Խեղճս, ինչպէ՞ս է կարելի. տաս ինձ ախար, ո՞վ է հէ-  
րըդ, կամ ունիս արդեօք հէր կամ մէր, կամ մէկ ուրիշ բա-  
րեկամ :— Արի՛, արի՛ առաջ :

Ա.Գ.ՔԱՏ ԵՐԵՒԵՆ :

Է՛հ, հէր ու մէր որ ունենայի, էլ ի՛նչ դարդ կանէի :  
Հինգ տարեկան էի, որ մէքս վախճանեց. ու երկու տարի ա-  
ռաջ էլ հօրմէս զոհուեցայ. մնացի մէնակ չփլախ՝ տղայ :  
Ծնողիցս ոչ մէկ զբօշ չմնաց ինձ, էնդուր որ իրանք էլ մէկ  
խեղճ փեշաքարներ էին, և իրանց օրուան հացն էին աշ-  
խատում. մէնակ մէկ հարստութիւն մնաց ինձ հօրմէս—  
խաղ ասելու շնորհք ու նրա հին չօնգուրը : Ահա՛ էս սաղը  
ձեռիս մանէի դալի քու չաքու չա ու խաղ ասելով մէկ կտոր  
հաց էի ճարում ինձ համար :—

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ

Բնա էդ քո փէշակդ ինչու թողեր, և ո՞ւր է սագդ :

## ԱՂՔԱՏ ԵՐԵՒԷՆ:

Երեկ ճաշի ժամանակը գնումէի ինձ համար . պատահեցան ինձ հարբած մարդիկ , խլեցին ինձմէն սաղս , ծեծեցին ինձ , ու ես մնացի հսպէս ողորմելի : Ա՛խ , շուտով մէկ կտոր հաց տո՛ւր ինձ Աստծ ու խաթրու :

(Էս խօսքի վրայ տուն է վազում բաղչէն Նինօն, որինոր պակսկ էին ծաղկները) :

## ԱՂՔԱՏ ԵՐԵՒԷՆ (Նինօն)

Իմ սիրուն պատիկ աղջիկպարոն ջան , խղճայ որբիս վըրայ . մէկքիչ ողորմութիւն տո՛ւր ինձ :—

ՆԻՆՕՆ (ղարմացած աղքատ երեկի վրայ ցաւով նայումէ) :

Ո՞վ ես դու , եղբայր իմ , ի՛նչ ես ուզում :

## ԱՂՔԱՏ ԵՐԵՒԷՆ :

Ողորմութիւն տո՛ւր ինձ :

ՆԻՆՕՆ (ղարմանալով) :

Ողորմութիւն , Աստուածատուր ջան , էս ի՛նչ է ասում էս տղէն :

## ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

Ասումէ , որ մէկ կտոր հաց տաս սրան :

## ԱՂՔԱՏ ԵՐԵՒԷՆ :

Հա՛ , աղջիկպարոն ջան , մէկ կտոր հաց , ու մէկքիչ ջուր լամելու :

ՆԻՆՕՆ :

Ինչպէ՛ս—մէկ կտոր հաց էլ չտանին . հէրն ու մէրդ քեզ հաց չեն աւլի :

ԱՂՔԱՏ ԵՐԵՒԵՆՆԻ :

Ա՛խ, ի՞նչ հէրն ու մէր. ես հէրն ու մէր չունիմ, ու ես  
բեկուանից դէսը կտոր հաց չեմ գրել բերանս:—

ՆԻՆՕՆ (աչքերին արոսսունքը):

Ա՛խ, խեղճս, բաս կնից էստեղ, հիմիկ և ետ ես քեզ հա-  
մար ուտելու կուբերեմ, (դալիսէ Յովաննէսը) Վանձ Զան, տես  
էս խղճին. ամբողջ օր մէկ կտոր հաց չէ ունեցել ուտելու,  
գնումեմ սրա համար կերակուր բերելու: (Վազումէ):

ՅՈՎՀԱՆՆԵՒՄԸ:

Ես էլ կերդամ պտուղներ կուքաղեմ. թե՛ղ մենակ հաց  
չունենայ ուտելու: (Գնումէ բաղնի մէջ):

ԱՂՔԱՏ ԵՐԵՒԵՆՆԻ :

Շնորհակալ եմ ձեզնից, իմ բաեսիրտ պարոններ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ: (Որնոր էս ողջ լսօսակցութիւնի  
ժամանակը կողքի էր կանգնած ու մտածմունքի  
մէջնէր մտել, սկսումէ ինքն իրան համար լսուել):

Հա՛, լու կուրլի, ինքն Աստուած է ինձ սրան զրկել:  
Մէկ երկու շայ ետ դցած փողս սրա համար կումնայ. մինչև  
դեռ ինձ հետ կուկենայ, բաղմնչու թիւն կուսովրի. Պ. Սր-  
շակն էլ չի նեղանայ, եթէ նրա ճաշին մէկն էլ աւելնայ.  
Հա՛, կուշնեմ սրան իմ որդի, ու կումխիթարու իմ սրանով:  
(Աղբատ երեսին): Իմ որդի, ինչպէ՞ս է անունդ:

ԱՂՔԱՏ ԵՐԵՒԵՆՆԻ :

Ա՛նունս է Գրիգոր:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ: (Իր մեծած որդու անունը միտք բերելով):

Գրիգոր, ա՛խ: Սիրելիք իմ Գրիգոր, ասու մես, որ էս

աշխարհքումը ոչով չունիս՝ ոչ բարեկամ՝ ոչ տէր . քեզ որ մէկ մարդ իր մօտ վերառնէր , կերթայիր նրա մօտ :

ԳՐԻԳՈՐԸ (կամ աղքատ երեխն):

**Ա՛խ** , ո՞վ կուարժանացնէր ինձ էդ բախտին :

ԱՍՏԻԱԾԱՏՈՒՐԸ :

Բաս լսէ՛ ինձ . տեսնու՞մես ինձ , ես պառաւ մարդ եմ՝ , մէնակ եմ . որդի չունիմ , էնդուր համար ես շատ կուզէի . քեզ պէս մէկ լաւ տղայ ունենայի մօտս , որնոր ինձ . քիչ օգնական ըլէր , ու ինձ ընկերութիւն անէր , ու կարծես , ահա Աստուած ինքն է բախշում քեզ ինձ . արի՛ ինձ մօտ , ես քեզ ինձ մօտ կու վերառնեմ , ու իմ բաղմնըութէնի փէշակը քեզ կուսովընցնեմ , ու ինձնից յետոյ ինչ որ ես ունիմ , ամէնը քեզ կու մնայ : Մեր աղէն էլ շատ պաաուական մարդ է , նա էլ քեզ կու օգնէ :—

ԳՐԻԳՈՐԸ : (Աստուածատրի ոտքի բըր ընկնելով ու սրբա ձեռները պաշանելով):

**Ա՛խ** իմ բարերար , ինչպէ՞ս շնորհակալ ըլլեմ քեզնից , կու ըլլիմ միշտ քեզ հաւատարիմ որդի . ու միշտ քեզ համար մինչև մահըս Ասածուն աղօթող .—

ԱՍՏԻԱԾԱՏՈՒՐԸ : (Գրեգորին վերկացնելով):

**Վ**եր կաց , իմ որդի՛ Գրեգոր . Ասածանից կաց միշտ շնորհակալ և ինդրիր Նլանից միշտ , որ Նա քեզ շնորհք տայ , խելք , լաւ սիրտ ու կեանք :

ԳՐԻԳՈՐԸ :

**Ու** Քե՛զ էլ շատ կեանք , իմ բարերար :

ՆԻՆՕՆ : (Վարելով գայիս է , բերումէ հաց ու մէկ ամանով մէկքանի կտոր միս ու ջուր):

**Եղբայր** , ահա՛ քեզ հաց , կեր շուտով , կշտացիր . ահա՛

էս էլ քեզ միս սրանից աւելի բան չունէինք պատրաստ, թէ չէ՛ աւելի՛ կուբերէի քեզ համար:

ԳՐԻԳՈՐԸ :

Ծնորհակալ եմ, աղջիկ պարոն Ջան, (սկսումէ ուտել շտապով):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԲԸ :

Չէ՛, իմ որդի՛ Գրիգոր մի՛ էդպէս շտապիր, զիտեմ քաղցած ես, և հէնց էնդուր համար պէտք է հանդարտ ուտես, էնդուր որ պէտք է զիտենաս, որ քաղցած մարդը երբ որ կերակուր է ճարում, պէտք է քիչ քիչ ու հանդարդ ուտէ:

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԸ: (զալիս է միտ կողմից և պտուղ է բերում)

Ահա՛ եղբայր, մեր բաղչի պտուղներն էլ սրանք էլ քեզ ուժ կուտան:

ԳՐԻԳՈՐԸ: (պտուղը վեր առնելով):

Ծնորհակալ եմ քեզնից, իմ պարոն:—

(Բաղչի ծէրին, տան կողմից երևումէ Արշաիր, երեխերքը վաղումնն նրա մօտ, և նրա ձեռից բռնած զալիս են առաջ և առումէ)

ՆԻՆՕՆ:

Այ իմ սիրելի հէր. էս էն խեղճ աղէն է, որի վրայ ես քեզ ասի:

ԱՐՇԱԻՐ:

Տեսնումեմ, Նինո Ջան. (Յովհաննէսին) Գ՛ն քիչ բանով օգնեցիր սրան:

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԸ:

Ես էլ մեր բաղչի պտուղները քաղեցի սրա համար:

ԱՐՇԱԻՐ:

Շատ լավ, վան՛ Ջան. (Աստուածատուրին տեսնելով), Ա՛յ, բա՞ ըրի ըյս քե՛զ, իմ սիրելի Աստուածատուր, ինչպէ՞ս ես:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԲԸ:

Քո սաղու թիւնը, աղա Ջան:



ԳՐԻԳՈՐԸ :

Փակօք քեզ Աստուած . անջախ կշտօցայ , շնորհակալ  
եմ մէկէլի ձեզնից , իմ պարոններ :

ԱՐՇԱԿԸ (ԳՐԻԳՐԻՆ) :

Ուրեմն ասումես դու , թէ հէրն ու մէր չունիս :

ԳՐԻԳՈՐԸ :

Հա՛ , չունիմ , աղա՛ բայց Աստուած բախշեց ինձ մէկ հէր :

ԱՐՇԱԿԸ :

Ինչպէս . ո՞վ է քո հէրդ :

ԳՐԻԳՈՐԸ :

Ա՛յ , էս պատուական բարի պառաւը :

ԱՐՇԱԿԸ :

Ինչպէս . մեր սիրելի Աստուածատուրը :

ԳՐԻԳՈՐԸ :

Հա՛ , հէնց դա :

ԱՍՏՈՒՍԻՍՏՈՒՐԸ :

Գո՛հ եմ Աստծանից ամէն բանով . գո՛հ եմ քեզնից ,  
աղա՛ . միայն էս իմ մէնակութիւնըն է ինձ տանջում . և էս  
խեղճ տղին տեսնելով՝ հաւնեցայ սրան և իմ որդեգիր շինեցի ,  
որ ինձ ընկերութիւն անէ , և ինձ իմ ծերութէնի ժամանակը  
օգնական ըլի : Մինչև դեռ կարողութիւն ունիմ սրան բաղ-  
մնչութիւն կուտոլրեցնեմ . ու ինձ մօտ կուպահեմ . և քեզ  
վրայ էլ յոյս ունենալով՝ հաւաստի եմ , որ դու էլ սրանից  
քո օգնութիւնը չես պակսեցնի :—



ԱՐՇԱԿԸ :

Շատ ու շատ ուրախ եմ, իմ սիրելի պառաւ . թէև քո արածդ ես ունէի մտքովս կատարելու, բայց աւելի ուրախ եմ, որ դու արիր : Աստուած քեզ աւելի զօրութիւն ու կեանք տայ . իմ կողմանէ ես պատրաստ եմ դրան ամէն բանով օգնելու :

ԳՐԻԳՈՐԸ (ուրախացած) :

Ա՛խ, իմ բարերարներ :

ԱՐՇԱԿԸ (իր որդիներանցը) :

Երեխներք . ահա՛ աւելցաւ ձեզ մէկ եղբայր . դուք գիտէք, ինչպէս սրան կուպահէք ու կուսիրէք :—

ՆԻՆՕՆ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍԸ :

Ի՞նչպէս, սա ուրեմն մեզ մօտ կումնայ ու էլ մեզնից չի հեռանայ :

ԱՐՇԱԿԸ :

Չէ՛ :

ՆԻՆՕՆ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍԸ :

Ա՛խ, ինչպէ՛ս ուրախ ենք . կուսիրենք, ու էնպէս կուսիրենք սրան ինչպէս մենք մէկմէկու սիրուանք . (Գրիգորի ձեռը բռնելով) . բան արի, գնանք ստուն . քեզ մեր մօրը ցոյց տանք : (Նինօն, Յովհաննէսը ու Գրիգորը գնումն) :

ԱՐՇԱԿԸ :

Աստուածատուր, էսօր և ետ կարգադրութիւն սէտք է տեսած . որ էն տղի համար նոր շորեր կարվի :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

Հա՛, աղա՛, խեղճը շատ աղքատ է հագած :

ԱՐՇԱԿԸ :

Ուրեմն զու նրան քեզ մօտ կուպահես :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

Հա՛, աղա՛, ինձ մօտ իմ սենեակումը :

ԱՐՇԱԿԸ :

Շատ լաւ թող էդպէս ըլի : Ինչպէս զեղեցիկ բացուել են ծաղիկները : Ի՞նչպէս են էն նոր տնկած ծառերը, փէյ՝ վանները՝ լաւ բռնեցի՞ն :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՍԸ :

Մէկ քանիսը շատ լաւ, բայց միւսները չորցան. չղիտեմ, ի՛նչեց պէտք է ըլի. թէ հո՞ղն ասնե՞ք՝ հողը լաւ է, պէտք է որ մէկ քանիսը իրանք ճճուառ էլած ըլէին :

ԱՐՇԱԿԸ :

Գնանք. աբա տեսնե՛նք :

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԸ :

Գնանք, աղա՛ :

(Ատուածատուրը ու Արշակը զընումեն բողչի ետեի կողմը :

(Փոքր ժամանակից յետոյ զալիս է վազելով)

ՆԻՆՕՆ :

Ա՛լիս, ո՞ւր է հէրս, (զէս ու զէն մօտիկ տալով). հա՛, հօրէն էն տեղ է, նոր տնկած ծառերու մօտ. դնամ :—Բայց ահա՛ ինքն է դալիս : (Չնումէ քիչ առաջ ու յետոյ հօր հետ միասին յետ է գալիս) :

ԱՐՇԱԿԸ (Նիւսին) :

Դու ո՞ւր թողըր քո նոր եղբօրդ, կամ ի՞նչու թողիլ :

(1 Պատուաստները)

ՆԻՆՕՆ :

Ես նրան մէնակ չթողի . վանօն նրա մօտն է . ես եկայ ,  
որ քեզ իմ հէր , մէկ բան խնդրեմ :

ԱՐՇԱԿԸ :

Ի՞նչ ես ուզում , հողիս . առա՛ : (Դալիս է և Յովաննէսը) :  
(Յովաննէսին) Գու էլ եկար , ու Գրիգորին մէնակ թողէք :

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ :

Չէ՛ . ես նրան մօրս մօտ թողի . էնտեղ նրանք միասին  
խօսումեն . բայց ես եկայ իմ հէր , քեզնից մէկ բան խնդրելու :

ԱՐՇԱԿԸ :

Ասա՛ ինձ , իմ աչքի լոյս , ի՞նչ է ձեր խնդիրքը :

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ ՈՒ ՆԻՆՕՆ :

Խեղճ՝ Գրիգորի շրերը շատ կեղտոտ են ու պատուտած .  
մենք եկել ենք քեզ խնդրելու , որ նրա համար նոր շրեր  
կարել տաս , կամ մեզ հրաման աաս , որ մենք մեր շրերիցը  
նրան տանք :

ԱՐՇԱԿԸ (իր որդիկրանցը սիրով աչքերուն պաշանելով) :

Ա՛խ , իմ աչքի լոյսներ . էդ է՛ր ձեր խնդիրքը . շատ ու-  
րախ եմ կատարելու . էդպէ՛ս պէտք է , իմ սիրելիներ . էդ-  
պէս պէտք է միշտ խղճին օգնէք , որ Աստուած էլ միշտ ձեր  
օգնականը ըլի , որ Նա ձեզ աւելի խելք , լաւ միտք ու շատ  
կէանք տայ : Գնանք , ես էլ ձեզ հետ գալիս եմ , որ ձեր խըն-  
դիրքը կատարեմ :

(էբբը եր որդիկրանցով գնումէ զէպ  
ի տուն , բայց նրանցից յետ է մնում)

ՆԻՆՈՆ (որնոր առջ է գալիս ու չորումէ) :


Ա՛յն , իմ Ամենակարող Աստուած . ի՛նչպէս շնորհա-  
կալ եմ՝ Քեզնից , որ Դու ինձ կարողութիւն տուիր էսօր  
ուրիշին լաւութիւն անելու : Ես մինչև էսօր կարծումէի,  
թէ ինչպէս ես ոչինչ պակասութիւն չունիմ , ո՛չ մէկ բանի  
կարօտ չեմ , ամէնքն էլ ինձպէս են : Բայց , ա՛յն , ի՛նչպիսի  
խեղճեր են էլել աշխարհքումս : Ի՛նչպէս ուրախ եմ , որ ի-  
մացայ էս բանը , և սրանից դէնը իմ հոգսը ու մտածմունքը  
էն կուրծի , որ պարտեմ խեղճերուն ու կարօտողներուն ու նը-  
րանցը օգնեմ : Իս օրուան օրը անմոռանալի կումնայ ինձ հա-  
մար իմ կեանքիս մէջ , էնդուր համար որ ես էսօր իմացայ ,  
թէ՛ աշխարհքումս ամէն երեխայ ինձ նման բախտաւ որ չէ ,  
և որ էնպիսիներուն օգնել պէտք է :

(Շտապով վեր է կենում ու գնումէ էն կողմը  
որ կողմը իր հերն ու եզրայրը գնացին) : —



## Հ Ա Ր ՈՒ Ս Տ Ն ՈՒ Խ Ա Ր Ա Ջ Ը :

Ա Ռ Ա Կ :



Մէկ քաղաքումը մէկ մարդ էր կենում .  
 Բայց էնպէս շէն , որ ողջ աշխարհքումը  
 Նրա նման ուրիշ էլ չէր գտնուում :  
 Եթէ ոչ մէկ մարդ սրա տունը մտնէր ,  
 Ողջ աշխարհքի փառքըն էնտեղ կուգտնէր :  
 Ինչ որ ուրիշի տանը փէտիցն էր շինած ,  
 Սրա մօտ ողջը խտտակ ոսկիիցն էր ածած ,

Ուրիշի էրկաթը

Սրա մօտ էր էրծաթ ,

Կաւի ու շուշի տեղ

էր բրօշն ու չինուրը .

Պատերը ողջ փարչերով կպցրած ,  
 Գետինը ողջ մախմուրով<sup>2</sup> ծածկած .  
 Մէկ օթախն էլ սիրուն բաղայ էր շինած ,  
 Գոյն գոյն ծաղկներով սիրուն զարդարած .  
 Բիւլբիւլն<sup>3</sup> ու թուլթակն էլ չէին դաղրում ,

Ծաղկներու էշտով

Իրանց քաղցր ձէնով

Խաղեր ասելով :

Շարթէնը մէկ անգամ սրա մօտ էր կանչած ,  
 Քաղքի մէկ ծէրիցը միւս ծէրը սկսած ,

(1 Կախով՝ Ռուս բանաստեղծի առակներից . (2 Թախիշ . (3 ստիակ .

Թէ շէն , Թէ տղքատ , Թէ ջՏէԼ , Թէ պտուաւ ,

Որ Թո՛ղ զան ուսնն  
Խմնն , քէՖ աննն ,

Ու նրա հօրն ու մօրը ողորմի՛ ասնն :

Թէ և շարԹու մը հէնց մէկ օրն էր էսպէս .

Բայց սրանից պակաս չէին միւս օրերն էլ :

Թէ հազար չէ՛ , հարիւրն անպատճառ .

Սրա մօտ ամէն օր ճաշի էին նստած ,

Աշխարհքումն չունէր մէկ խօսքով էս մարդը

Ոչ կսկիծ , ոչ ցաւ , ոչ մէկ սրտի դարդ .

Ու պէտք էր կարծած , որ մեր փողաւորը

Պէտք էր լիովին ըւեր բախտաւոր :

Բայց էս աշխարհքումըս ո՞վ է կատարեալ .—

Մէկ կողմիցն էլա մէկ բան է պակաս : . . .

Էսպէս էլ մեր մեծ ու հարուստ իշխանը

Թէ և աւելորդով ունէր ամէն բան ,

Բայց մէկ շատ մեծ բան էր պակաս նրան՝

Ո՛չ ցերեկը , ո՛չ գիշերը քուն չունէր իր համար :

Ասած ու դատաստանիցն Թէ էր նա վախենում ,

կամ Թէ , «վայ չկուտրանամ» — էր նա մտածում .

Մէկ խօսքով հարուստի քունն իսկի չէր տանում :

Հէրիք՝ չէր հարուստին էսպիսի ցաւը .

Մէկ էլն ունէր սրբանից բէթարը՝

Նրա մեծ պալատի հէնց դէմուղէմը

Մէկ պատիկ , տղքատ ու հին քօլու՝ մէջ

Կէնու մէր մէկ խեղճ խարազ փէշաքար :

(1 Բաական. (2 աւելի վառ. (3 իրճիքի.

Բայ մէկ էնպիսի քէֆով, ուրախ մարդ  
 Որ ծէգիցը սկսած մինչև հէնց կէս օրը,  
 Կէսօրից սկսած մինչև ուշ գիշերը,  
 Իսկի չէր դադրում նրա զօրեղ բերանը.  
 Միշտ խաղ ու բայաթի՛ էր կլկլացնում,  
 Էնպէս, որ եթէ հարուստն ուզենար  
 Քուն էկած վաստին՝ աչքը քիչ խփի,  
 Ուրախ խորագը կուսկսէր բայաթին,  
 Ու քունը կուփախցնէր մեր մեծ իշխանին :

Ի՞նչ անէ, ի՞նչպէս անէ,

Որ էս բանին մէկ ճար անէ .

Ու հարենին իր խաղ ասելից

Մէկ կերպով էլս յետ կանդնեցնէ .

**Չ**թողնել, որ նա խաղ ասէր,

Իրաւունք չունէր .

Խնդրելով խնդրեց,

Բայց խնդիրքը չներգործեց .

Շատ միտք անելից յետոյ կանչել տուեց

Մէկ օր իրան մօտ խարազ հարենին .

Հարեանն եկաւ :

**Փ**առքով ու պատուով մեր հարուստ իշխանը

Հարենի առաջ գնաց ու հարցրեց,

Նրա քէֆի ամալը՞ :

«Շատ շնորհակալ եմ քաղցր խօսքերուդ» .

Պատասխան տուեց խեղճ փէշաքարը :

— Ի՞նչպէս են, եղբայր, գործքերդ գնում . —

(1 Արևելեան երգի եղանակ . (2 ժամանակը . (3 որպիսութիւնը .

Հարցրեց մեծատունը : «Ոչնչե՛ր, լաւ են գնում» :

— Բաս էնդուր էզպէ՛ս ուրախ ես կենում :

Պէտք է որ դու , հը՛ , բախտաւոր ըլլիս :—

«Մէղք է Աստծու վրայ տրանջալ :

Գործքեր , է՛հ , ունիմ ես շատ բաւական» :

Մէկ կնիկ ունիմ ջհել ու սիրուն :

Ու լաւ կնգայ հետ ո՞վ լաւ չէ ապրում» :

— Բաս փող էլ ունի՞ս դու շատ բաւական :—

«Չէ՛ , աղա՛ , թէպէտ ես շատ փող չունիմ :

Հարկաւորութիւն էլ էնդուր քիչ ունիմ» :

— Ուրեմն , եղբայր , հարուստ լինել դու չէիր ուզել :

«Ես էդ հո՛շիմ ասում :

Գո՛հ եմ Աստծանից էնդուր համար էլ :

Ինչ որ ես ունիմ իմ աղքատ տեղովս :

Բայց ինքը զիտես , աղա պատուելի՛ ,

Որ մարդս հողին մինչ բերնումն ունի ,

Միշտ կուզէ որ ունենայ աւելի ու աւելի :

Ի՞նչ կուզես անել , աշխարհքս էսպէս է :

Աւելի շահը ո՞ւմ փորը կուծակէ» :

— Ղորդ ես ասում , եղբայր խելացի :

Հարստութենի հետ թէպէտ կան ցաւեր էլ :

Թէկուզ ասումեն , թէ աղքատ լինելը

Չէ՛ մէկ ամօթ բան :

Բայց իմ կարծիքով :

Լաւ է հարուստ ըլիլ քան աղքատ :

Բան վեր առ , ահա՛ , մէկ քիսայ ոսկի :

Պէտք է ղորդն ասեմ , ես շատ սիրեցի



Քեզ քո շատ խելօք խօսքերուդ համար :  
 Գնա՛ , Աստուած տայ , աւելի խելուխ ,  
 Ու թող աւելի բախտաւոր ըլիս :  
**Մէկ** խորհուրդ կուտամ՝ միայն քեզ հիմիկ էլի՝  
 Որ դու անհետաք՝ փողըդ չխարջես .  
 Ու պէտք է միշտ ղայրաթով ըլիս ,  
 Սև օրուան համար մէկ բան յետ գցես :—

**Էլ** ի՞նչ էր ուզում մեր ուրախ խարազը .  
 Հինգ հարիւր ոսկին իսկոյն ջեբը դրեց ,  
 Հարուստին հազար անգամ գլուխ տուեց ,  
 Գլաւիը վեր առաւ ու իր տուն վաղեց :

Հիմիկ խարազի հէնց էն էր դարդը ,  
 Թէ ի՞նչ տեղ պահէ նա ոսկերու պարկը :

**Էլ** չարա՞ չկար , փոքրիկ հոր փորեց ,  
 Ու նրա մէջն է ետ իր փողը թաղեց .

**Էն** դուր որ քանց սրան անվտանգ , լաւ տեղ .  
 Չգտաւ նա իր խեղճ դարդակ քօխու մէջ :

Հիմիկ դուք տեսէք մեր խարազի հալը՝ :

**Էլ** ի՞նչ խաղ , էլ ի՞նչ զօղ ,  
 Կարծես , նա հէնց ամէնը թաղեց փողի հետ :

**Ա** մբողջ օրը նրա բերնից էլ չստուեցաւ  
 Իսկի ել ո՛չ մէկ ուրախութենի ,

Ո՛չ մէկ ձէն , ո՛չ խաղ , ո՛չ մէկ բայաթի :

**Ի**րիկունն եկաւ ,

Կնիկը մօտ բերեց .

Ինչ որ ունէին ուտելու համար :

(1 Ասանց հաշուի • (2 հնար • (3 Կրութիւնը •

Մէկքիչ վեր առաւ ,

Քիչ համը տեսաւ ,

Ու սուս յետ նստեց սուփրից մեր խարազը՝

Շուտով մտկայացաւ քնելու սհաթն էլ

Բայց մեր խարաղի քունն էլ փախել էր .

Քիչ էլա աչքը խփել էր ուզում ,

Մէկ էլ կուտեսնես , շուտ վեր էր թռչում ,

Ու իր փողը պարկն էր իսկոյն հարցնում :

Հէնց էն էր նրան ամէն վախտ թուում ,

Թէ գողերը նրա փողը տանել են ուզում :

Էսպէս ողջ գիշերը մեծ տանջանքի մէջ ,

Քունն էլ կոտրած , միտքն էլ շվարած ,

Անցկայրուց , մինչև լուսը որ ծագեց :

Էլ շատ չմտածեց ,

Ոսկու պարկը վեր առաւ ու դնաց հարուստի մօտ :

« Ասածու խաթրու , աղս , պատուելի ,

Քս տուած ոսկին յետ վեր սու էլի .

Ես մինչև հիմիկ խփի չէի գիտի ,

Թէ քուն կոտրելը ի՞նչ է նշանակում .

Հիմիկ հէնց տեսայ , թէ փող ունենալը

Ինչպէս շատ դժուար մէկ բան է էլի :

Չէ , իմ պարոն ջան , իմ գօղս ու խաղս ,


Իմ ուրախութիւնը , իմ հանգստութիւնը :

Թէ կուզ որ հէնց միլիօն էլ ըլի ,

Նրա վրայ չեմ փոխի » :

# ԲՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ :



Ա. ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ :



ՀԱՅՐԸ (իր 10 տարեկան աղջկան) : Մարիամ ջան. ուր է եղբայրդ .  
 դնա՛, կանչէ՛ նրան . ես ուզումեմ սկսել էսօր ձեզ հետ  
 ձեր վաղուց ուղած բաներու վրայ խօսել :

ՄԱՐԻԵՄԸ : Հա՛, իմացայ , իմ հէր մեր երկրի վրայ , Աստու-  
 ստեղծած բաներու վրայ կուր լի : Ա՛խ , եթէ գիտե-  
 նաս ի՞նչպէս ուրախ եմ , որ պէտք է իմանամ , թէ  
 ի՞նչպէս է Աստուած մեր երկիրը շինել , ու էն ամէն բա-  
 ները , ինչ որ մենք ամէն օր մեր չորս կողմը տեսնումենք :  
 Իսկոյն և ետ կերթամ , կուկանչեմ եղբորս : Ի՞նչպէս  
 նա էլ կըուրախանայ , երբ որ կուիմանայ , թէ ինչո՞ւ  
 համար եմ ես նրան կանչում : (Ուղումէ գնալ , բայց դաներու-  
 մը հանդիպումէ իր եղբորը և ասումէ) . Վարդան ջան , արի՛ շո-  
 տով , մեր հէրը ուզում է մեզ մեր երկրի վրայ բաներ  
 պատմել :

ՀԱՅՐԸ : Հա՛ , իմ որդիք , եկէ՛ք , լսէ՛ք , ես ձեզ հետ խօսել եմ  
 ուզում մեր երկրի վրայ , և էն ամէն բաներու վրայ ,  
 ինչ որ դուք տեսնումէք ձեր գլխի վերև , երկրիս երե-  
 սին , կա՛մ ինչ որ կայ նրա մէջը , որնոր մէկ խօսքով մենք  
 բնութիւն ենք անուանում :

ՎԱՐԴԱՆԸ: Ա՛հ . ի՞նչ լաւ կուրլի , իմ հէր , էնքան բան  
ունիմ ես քեզ հարցնլու , որ կարծեմ կուբեզրեցնեմ՝  
քեզ իմ հարցմունքներով :

ՎՅՐԸ: Զէ՛ որդի , դու ինձ չես բեզրեցնի . ի՞նչքան շատ  
բան կուհարցնես ինձ , էնքան ես աւելի կըուրախա-  
նամ . էնգուր համար որ էդ կուենշանակէ , թէ՛ դու  
ուշադրութեամբ կուրլիս ինձ լսում . կամ թէ՛ մինչև  
հիմիկ տեսած ու լսած բաներու վրայ միտք ես արել :

ՎԱՐԴԱՆԸ: Հա՛ , իմ հէր , շատ անգամ մէնակ նստած ինձ  
ուինձ միտք եմ արել , թէ ի՞նչպէս է , որ արեգակը ա-  
մէն օր առաւօտը սարերու ետեւից դուրս է գալիս , ու  
իրիկունները էլի սարերու ետեւը թախ է կենում , ու  
ողջ գիշերը էլ չէ երևում , ու միւս առաւօտը էլի  
դուս է գալիս առաջուան տեղեցը : Գիշերը ակնար  
մը բ մնում արեգակը . կամ երկնքին մօտիկ տալով  
հարցնումեմ ինձ , թէ ի՞նչ պէտք է ըլի նա , կամ  
թէ չէ՛ բաղմնչին սերմը որ դրումէ հողի մէջ , ի՞նչպէս  
մէկ պատիկ սերմից մեծ ծառ է դուրս գալի : Ա՛խ , էս-  
պիսի ու հազար ուրիշ տեսակ բաներ որ տեսնումեմ ,  
ուզումեմ իմանալ թէ ի՞նչպէս են ըլում , բայց ինչ-  
քան էլ միտք եմ անում , էլի ոչինչ չեմ կարողացել ի-  
մանալ : Ս՛ո՛հ լաւ կուրլի . ինչ որ ինձ համար մին-  
չև հիմիկ մութն էր , հիմիկ ողջը կուբացվի ու յայտ-  
նի կուրլի :—

ՄԱՐԻԱՄԸ: Եղբայր , մեր հէրը մեզ մեր տեսած բաներու  
վրայ որ կուպատմէ , մենք էլ էնպէս քորքոր չենք մը-

տիկ տայ ամէն բանին , այլ ամէն մեր տեսածը մեկնել  
կուկարողանանք :

ՀԱՅՐԸ: Էդպէս է , իմ որդի՛ք , բախտաւոր է էն մարդը , էն  
երեխէն , որնոր ամէն բանի վրայ բաց աչքով մտիկ  
կուտայ , այսինքն ամէն իր տեսած բանը կուհասկանայ ,  
լաւ կուճանչնայ , կուխմանայ , թէ ինչու էս բանը էս-  
պէս է ըլում , կամ թէ էս բանից ինչ է դուրս դալիս :

ՎԱՐԴԱՆԸ: Ղորդ , էդպէս է , իմ հէր , էդ բանը ես ինձ վրայ  
եմ փորձել , երբ որ մէկ բան եմ տեսնում , ու չեմ գի-  
տի , թէ էն ինչ է , էնպէս մէկ նեղանումեմ ու փքրոտ-  
վումեմ , ու միտքս ողջ էն բանի վրայ է , որ եթէ էն իմ  
տեսած անձանօթ բանը թողնեմ ու ուրիշ ինձ ծա-  
նօթ բանով էլ պարապեմ , էլի հանգիստ չեմ ըլում ,  
ու ուշք միտքս չգիտցած բանի հետ է . բայց երբ որ մէկ  
մարդ , կամ ընկերներս կամ դուք էն իմ չգիտցած  
բանը մեկնումէք , էնպէս մէկ ուրախանումեմ , որ կար-  
ծումեմ , թէ ինձնից բախտաւոր երեխայ էլ չկայ ,  
ու սկսումեմ էն բանը սիրել :

ՀԱՅՐԸ: Ուրեմն , եթէ մէկ չգիտացած բանը իմանալիս քեզ  
բախտաւոր ես կարծում , ինչքան անգամ աւելի բախ-  
տաւոր ու ուրախ պէտք է ըլիս , երբ որ մեկնել կուկարո-  
ղանաս ամպերու գոռուցքը , անձրևի դալը , արեգակի  
մանգալը :

ՎԱՐԴԱՆԸ: Ա՛խ , երանի՛ կուրլի ինձ էն օրը , որ ես էս բա-  
ները ամէնը լաւ գիտենամ :

ՄԱՐԻԱՄԸ: Ղորդ , ինչպէս լաւ բան պէտք է ըլի ամէն էդ  
բաներու գիտենալը :

ՀԱՅՐԸ: Իմ սիրելիներ, ձեզնիցն է կախուած. եթէ կուզե-  
նաք, ողջը կուխմանաք, միայն եթէ միշտ էդպիսի  
ցանկութիւն կունենաք բան խմանալու համար, եթէ  
ծոյլ չէք բրի, եթէ միշտ աշխատանք կուսիրէք:

ՎԱՐԴԱՆԸ ՈՒ ՄԱՐԻԱՄԸ (Միասին): Կուրլինք, կուրլինք միշտ  
էսպէս մեր հէր, միայն պատմէ՛ դու մեզ:

ՀԱՅՐԸ: Քիտեմ, որ կուրիք, էնդուր համար, որ դուք ուզու-  
մէք, որ ժամանա՛ով լաւ ու բախտաւոր մարդիկ դառ-  
նաք: Աւ բաց ՚ի էդ պարտաւորութիւն էլ է ամէն մար-  
դու, որ երկրիս վրայ էլած բաները խմանայ, հաս-  
կանայ. էնդուր որ Աստուած էս բաները որ շինել է,  
ո՛ւմ համար, եթէ ոչ մարդուս համար: Աւրեմն Աս-  
տուած որ մեզ էնպէս սիրել է ու սիրումէ, որ մեզ հա-  
մար էսքան զանազան բաներ է ստեղծել, որով մենք  
մեր ամէն հարկաւորութիւնները բաւականացնել կա-  
րող ենք, ինչպէս մենք չպէտք է մտածենք էն Ասածու-  
տուած բաներու վրայ. ի՞նչպէս կարելի է, որ մենք  
չուզենանք էն բաներու հետ մտիկ ծանօթանալ ու  
նրանցը լաւ հասկանալ:—

ՄԱՐԻԱՄԸ: Ես քո աւածը, իմ հէր, էնպէս լաւ չհասկացայ:  
ՀԱՅՐԸ: Իմ ասածս հասկանալու համար քեզ մէկ օրինակ  
կուբերեմ, իմ աղջիկ: Ասենք թէ մէկ մարդ քեզ մէկ  
դուրթի՛ է բախշել. դու իսկոյն էն դուրթին բաց ես ա-  
նում, ուզումես տեսնել թէ մէջը ի՞նչ կայ. մէջը՝ հու-  
ջութք՝ ես գտնում. հուջութքը դուրս ես քաշում, ու  
ուզումես խմանալ. թէ նրանց մէջն էլ ի՞նչ կայ, նը-

(1 Սր՛գ՛ի (3 պահարան) բ.

բանց մէջը զանազան շարքերդէն կամ խաղաղք, կամ  
ասեղներ, մկրատ ու զանազան բաներ եւ գտնում. վեր  
ես առնում նրանցը, մէկ մէկ հանում, շուռ ու մուռ  
տալիս, ու ամէն նոր բան գտնելիս, նոր շնորհակալու-  
թիւն եւ անում էն զութի բաղշողն, ամէն անգամ  
նրա մէջը նոր բան ատնելիս՝ նոր ուրախանումես:

ՎԱՐԳԱՆԸ: (Երբորջը) Հասկանումե՞ս, Մարիամ ջան, թէ  
էս օշինակը ո՞ւմ վրայ է: Էն զութի բաղշողը՝ Աստուած  
է. ու զութին նրա ստեղծած բաներն են՝ ողջ բնու-  
թիւնը:

ՀԱՅՐԸ: Հէնց էդպէս է, ի՞նչպէս Վարդանը ասեց: Էն զու-  
թին են Աստու ստեղծած բաները՝ երկինքն ու երկիրը  
ու բաղշողն է ինքը մեր Ստեղծողը: Եթէ մենք նրա  
մեղ համար շնած բաները չենք սիրի, վրէն չենք  
մտիկ տայ, մէ մէկ չենք քրքրի, էն ժամանակը կունշա-  
նակէ, որ մենք Աստու մեղ բաշխած բաները այնումը  
չենք զցում՝ ու իրան էլ չենք սիրում: Ուրեմն, էլ  
կրկնումեմ ձեզ, իմ երեխերք. Աստուած որ էնպէս  
մեղ սիրել է ու սիրումէ. որ մեղ համար էսբան զանազան  
բաներ է ստեղծել. մենք էլ պարտական ենք էն բանե-  
րու վրայ մտածելու, նրանց սիրելու ու ամէն մէկը նը-  
րանցից լաւ ճանչնալ ու իմանալ ու զենալու:

ՄԱՐԻԱՄԸ: Հիմիկ ես լաւ հասկացայ ասածդ, ու հիմիկ ա-  
ւելի ու շարքութեանով կուլսեմ ասածդ, իմ հէր, էն-  
դուր ո՞ր ես իմ Աստուծուն սիրումեմ, ու նրա ինձ բախ-

շած բաներըն էլ կուզենամ որ մէկ մէկ՝ քրքրեմ, ու լաւ ճանչնամ:

**ՀԱՅԲԸ:** Ես սենեակումը քիչ շոգ է. գնանք դուրս սարքէնի (բալկոն) վրայ, էնտեղ ես ձեզ կուպատմեմ:  
(Եւ հայրը իր տղով ու ազջկով դուրս գնացին սարքէնի վրայ ու հայրը սկսեց):

**ՀԱՅԲԸ:** Դուք որ ձեր քաղաքիցը չէք դուրս դնացել հեռու, ի՞նչ էք կարծում. մեր երկիրը ի՞նչ քան մեծ պէտք է ըլի:

**ՎԱՐԴԱՆԸ:** Թէև զորդ է, բացի մեր քաղաքը ուրիշ ոչինչ քաղաք չեմ տեսել, բայց գիտեմ, որ կան ուրիշ քաղաքներ ու զո՞նազան երկիրներ էլ, ու մեզ նից հեռու:

**ՄԱՐԻԱՄԸ:** Ես մէկ քանի քաղաքներու անուններն էլ գիտեմ. զորօրինակ Երևան, Մոսկվա, ուր որ իմ մօրեղբայրս ամէն տարի գնումէ:

**ՎԱՐԴԱՆԸ:** Էլի՛ Պետերբուրգ, Փարիժ, Լոնդոն և այլն: Բայց ասան ինձ, իմ հէ՛ր, շատ հեռու են և քաղաքները մեզնից:

**ՀԱՅԲԸ:** Կան քաղաքներ, որ էստեղից մօտ են, կան՝ որ հեռու են. ուրի՛մն նրանց հեռաւորութիւնը զանազան է:

**ՎԱՐԴԱՆԸ:** Լա՛ւ. բայց ուզումեմ իմանալ, զորօրինակ, թէ Պետերբուրգը կամ Փարիժը ինչքան հեռու են մեզնից,

**ՄԱՐԻԱՄԸ:** Առաւօտը որ գնանք, իրիկնութէնին էնտեղ կուհասնինք:

**ՀԱՅԲԸ:** Չէ՛, Մարիամ ջան. էգպէս շուտ չես հասնի և քաղաքները, եթէ էգպէս մօտիկ ըլէին նրանք, ես



ձեզ էնտեղ վաղուց տաքած կուրէի, ու նրանցը ձեզ  
ցոյց տուած :

**ՄԱՐԻԱՄԱՐ :** Ուրեմն մէկ օրումը չէ կարելի հասնել էն քա-  
ղաքները :

**ՀԱՅՐԸ :** Ո՛չ թէ մէկ օր՝ երկու, երեք, հինգ տասը օրն էլ  
քիչ է. երկու շաբթուամբ անջախ (հազիւ) կուհասնիք  
էն քաղաքները :

**ՄԱՐԻԱՄԱՐ :** Յետոյ, գիշերները, ի՞նչտեղ պէտք է մնան էն  
ճանապարհորդները :

**ՎԱՐԳԱՆԸ :** Ես գիտեմ, իմ հէր . դու չասի՛ր հիմիկ, թէ  
կան քաղաքներ, որ մեզնից մօտ են, կան՝ որ հեռու են :  
Ճանապարհորդները մօտիկ քաղաքներումը կուանց-  
կայնեն գիշերները :

**ՀԱՅՐԸ :** Էդպէս է՞, իմ որդի՛, մօտիկ քաղաքներումը, և  
եթէ քաղաքները մէկմէկից հեռու ըլին, էն ժամանակը  
զեղերումը, որոնք ճանապարհին փռուած են ըլլամ,  
կամ թէ չէ իջեաններումը (ստանցիւն) :

**ՎԱՐԳԱՆԸ :** Էդ ի՞նչ բաներ են, իջեաններ :

**ՀԱՅՐԸ :** Իջեանները էնպիսի տներ են ճանապարհի վրայ  
շինած, որտեղ որ ամէն մարդ կարող է մօտիկ կերակուր  
ստանայ, ու գիշերը անցկացնի, ինքն ու իր ձկաները  
հանդստանան :

**ՎԱՐԳԱՆԸ :** Ա՛ն, ի՞նչ լաւ բան պէտք է ըլի ճանապար-  
հորդութիւն անելը, ու զանազան քաղաքներ տես-  
նելը :

**ՀԱՅՐԸ :** Դուք զեռ փոքր էք, բայց երբ որ կումեծանաք՝  
միշտ էստեղ տանը չէք նստիլ, այլ կերթաք զանա-

ղան երկիրներ հումանզանք, զանազան մերդիկ կուտեսնէք, զանազան տեղեր, զանազան քաղաքներ :

**ՄԱՐԻԱՄԱՐ :** Այն ինչքան հեռու պէտք է ըլին էն քաղաքները, ես մեր ասնիցը մինչև որ մեր բաղըն եմ գնում, էնպէս դադրումեմ, ու ի՞նչքան էլ ժամանակ է քաշում, բայց Պետերբուրգ կամ Փարիս գնալու համար երեք շաբաթ է հարկաւոր :

**ՀԱՅՐԸ :** Երեք շաբաթ կամ աւել, եթէ ձիով կամ սէլով գնաս, այլ ոտով գնալու համար երեք ամիս էլ հէրիք չէ :

**ՄԱՐԻԱՄԱՐ :** Իմ հէր, էս ի՞նչ ես ասում. էս ի՞նչպիսի հեռաւորութիւն պէտք է ըլի, կարծեմ, որ աշխարքի ծէրին ըլին էն քաղաքները :—

**ՀԱՅՐԸ :** Մարիամ, էդ ի՞նչ խօսք էր, որ ասիր, ի՞նչ է նըշանակում աշխարքի ծէր, աշխարհքը ծէր չունի :

**ՄԱՐԻԱՄԱՐ :** Ի՞նչպէս թէ ծէր չունի. կայ մէկ էնպիսի բան, որնոր ծէր չունենայ. ես իմ ծծմէրիցը լսել եմ որ Փլրանգըստունը (Ֆրանցլա) աշխարհքի ծէրին է, ու Փարիս էլ հօ՛ ֆրանգըստունմն է :

**ՀԱՅՐԸ :** Չէ, իմ աղջիկ, էդ ծուռը մտքեր են, վաղ էին էդպէս կարծում, երբ որ մարդիկ լաւ չէին ճանչնում մեր երկիրը, ու էդպէս մտածոյներ հիմիկ էլ կան՝ անկիրթ մարդիկ, որոնք շատ հեռու եղած երկիրներ ասումեն թէ, աշխարհքի ծէրին են, բայց, ինչպէս ասի, էդ ծուռը մտքեր են, ու դու էդպիսի մտքերը գլխիցդ պէտք է հանես :

**ՎԱՐԴԱՆԸ :** Ե՛ս հաւատումեմ ձեր տաածին, բայց էլի չեմ

Հասկանում թէ ի՞նչպէս է կարելի որ երկիրը ծէր չու-  
նենայ: Ախար գնալով գնալով, վերջապէս մէկ տեղ է-  
լա պէտք է կանգնես, ու երկիրը էստեղ պէտք է վեր-  
ջանայ:

ՀԱՅԵՐԸ: Չէ, ի՛մ որդի, ի՞նչքան կուզես մեր երկրի վրայ  
առաջ գնա՛, նրա ծէրը էլի չես տեսի:

ՎԱՐԴԱՆԸ: Ի՛նչ չեմ կարողացել հասկանալ: Կայց, ի՛մ հէր,  
ասենք թէ եկանք Փարիժ, ու էնտեղից ուղու մենք ա-  
ւելի հեռու գնալ. ո՞ւր կերթանք:

ՀԱՅԵՐԸ: Կերթաք ուրիշ քաղաքներ:

ՄԱՐԻԱՄԸ: Ի՛նտեղից էլի հեռու որ առաջ գնանք:

ՀԱՅԵՐԸ: Կուգայք մէկ էնպիսի մեծ ջրի ափը, որի մէկէլ ափը  
է՛ երևում, ու էնպիսի ջրի, որ կարծես թէ էլ ծէր  
չունի:

ՄԱՐԻԱՄԸ: Ուրեմն է՛նտեղ է աշխարհքը վերջանում:

ՀԱՅԵՐԸ: Չէ, է՛նդուր համար, որ եթէ կուստես նաւի մէջ  
ու կուզենաս առաջ գնալ, կերթաս ու դուրս կուգաս  
էլի ցամաքի վրայ. է՛ն երկրի անունը է Ամերիկայ:

ՎԱՐԴԱՆԸ: Ի՛ն մեծ ջուրը անուն չունի:

ՀԱՅԵՐԸ: Ունի, նրան Ատլանտան Ովկիանոս են անուանում:

ՄԱՐԻԱՄԸ: Ովկիանոս ասած բանը ի՞նչ է նշանակում:

ՀԱՅԵՐԸ: Ովկիանոս անուանու մենք մէկ էնպիսի մեծ կանգ-  
նած ջուր, որի մէկ ծէրիցը եթէ ուզենաս մի՛նչէ մէկէլ  
ծէրը հասնիլ, պէտք է մի՛նչէ մէկ ամիս նստով գնաս,  
ու ճանապարհիւ էլ բացի ջուր ու երկիրք ոչինչ չես  
տեսի:—

ՎԱՐԴԱՆԸ: Ծով էլ հօ էրպիսի ջր ն ենք ասում:

ՀԱՅՐԸ: Ղորդ է, ծոփն ու Ովկիանոս մէկ են, միայն Ովկիանոսը ծովից շատ մեծ է. էնպէս որ ծովը Ովկիանոսի միայն մէկ մասն է կազմում:

ՄԱՐԻԱՄԸ: Ես կու վտխենայի էնպիսի մեծ ջրի վրայ ըլիլ:

ՀԱՅՐԸ: Ուրիշ անգամ ես ձեզ ծովերու ու Ովկիանոսներու վրայ աւելի կու խօսեմ, ու յետոյ դուք կու իմանաք, որ մարդիկ ի՞նչպիսի բաներ են հնարել (մեղոնել), որ ծովի վրայ էլ մարդս էնպէս առանց՞ վտխենալու ճանապարհորդութիւն կարող է աւել, ինչպէս ցամաքի վրայ:

ՎԱՐԳԱՆԸ: Լաւ, իմ հէր, Ամերիկայ որ դուս դանք Ատլանտեան Ովկիանոսից, յետոյ եթէ էլի միշտ առաջ դնանք, ո՞ւր դուրս կու գանք:

ՀԱՅՐԸ: Կու գանք էլի մէկ մեծ Ովկիանոսի ափը, որնոր Ատլանտեան Ովկիանոսից չորս անգամ աւելի մեծ է, ու անուանուումէ մեծ Ովկիանոս:

ՄԱՐԻԱՄԸ: Ո՛ւհ, չէ՛, ի՞նչ կու գէ ըլի, ես կարծեմ, որ խիլի չեմ կարողանայ էդպիսի Ովկիանոսի վրայ դնալ. բայց ասնք, թէ էդ Ովկիանոսն էլ անցկացանք. էնտեղից ո՞ւր կու գանք:

ՀԱՅՐԸ: Դուրս կու գանք մէկ երկիր, որնոր Ասիա ենք անուանում, որտեղ որ զանազան ազգեր<sup>1</sup> են կենում, որոնց վրայ դուք լրած էք, զորօրինակ Չինմաչին<sup>1</sup> ու մմէն էլ մենք չայ ենք<sup>2</sup> ստանում, Մլթոններ<sup>2</sup>, Գզլբաշ<sup>3</sup> ու էլի զանազան ազգեր:

(1) Չինացիք, (2) Հնդկացիք, (3) Պարսիկ:

ՄԱՐԻԱՄԸ: ՄԼԹ ոնր էն ազգը չէ՞, որնոր իր մեռելներուն կը-  
բակի վրայ էրումէ:

ՀԱՅՐԸ: Հ էնց էն ազգն է:

ՎԱՐԴԱՆԸ: Էդ էլ էդպէս . եթէ էս երկիրներինցն էլ էլի ա-  
ռաջ գնանք, ո՞ւր կուղնանք:

ՀԱՅՐԸ: Հը՛ . ի՞նչ էք կարծում . այ կուզարմանաք իմ՛ խօս-  
քիս վրայ . կուզաք յետ էլի մեր քաղաք . ո՞յն է Թիֆլիզ:

ՎԱՐԴԱՆԸ: Է՛դ ի՞նչպէս էլաւ:

ՀԱՅՐԸ: Էնպէս, ինչպէս որ մեր երկրի վրայ ըլումէ: Ամէն  
ղոչաղ ճանապարհորդները, որոնք որ իրանց երկրից  
դուրս են գնացել ու ոչինչ դժուարութէնին չեն մտիկ  
տվել, ու միշտ առաջ են վնացել, վերջապէս եկել են  
էլի յետ իրանց քաղաքը միայն հակառակ կողմիցը:

ՎԱՐԴԱՆԸ ՈՒ ՄԱՐԻԱՄԸ: Է՛դ ի՞նչ է նշանակում, հակա-  
ռակ կողմիցը:

ՀԱՅՐԸ: Ա՛յ, զորօրինակ տեսնումէ՞ք առջևներուս էն պըս-  
տիկ սարերը, որնոր մէնք Մախաթ՛ ենք անուանում .  
էս կողմումը ի՞նչ է պատահում ամէն օր:

ՎԱՐԴԱՆԸ: Արեգակը դուրս է դալիս:

ՀԱՅՐԸ: Ուրեմն Թիֆլիզի մէկ կողմումը Մախաթի սարե-  
րն են, և էս կողմիցը ամէն օր արեգակը դուրս է դա-  
լիս: Հիմիկ ասէք ինձ, իրիկունները արեգակը որ կող-  
մըն է մէր մտնում:

ՄԱՐԻԱՄԸ: Ես գիտեմ, ՄԹածմինդի ետևը:

ՀԱՅՐԸ: Լաւ, էդ երկու սարերը ի՞նչպէս են մէկմէկու առաջ:

(1) Թիֆլիզ քաղաքը՝ պատած է երեք կողմից սարերով, արեւելեան կողմից՝  
Մախաթի, արևմտեան Մթածմինդի և հարսապիս կողմից՝ Սօղրակի սարերով:

ՎԱՐԴԱՆԸ: Մէկմէկու դէմու դէմն են:

ՀԱՅՐԸ: Այամ թիֆլիզու երկու հակառակ կողմերու մն են:

ՄԱՐԻԱՄԸ: Ուրեմն հակառակ է՞ր էնշանակում:

ՎԱՐԴԱՆԸ: Այսինքն երկու հնարիսի կողմեր, որոնք մէկ-  
մէկու դէմու դէմն են: Ուրեմն, իմ հէր, եթէ ես Մը-  
թածմինդի սարի վրայ վերև գնամ, ու էնտեղից միշտ  
առաջ գնամ, ու էլ յետ չըուզամ, մէկ կամ երկու  
տարիից յետոյ էլի կ'ուզամ հասեղ՝ միայն Մախաթի  
կողմից:—

ՀԱՅՐԸ: Հա՛, Վարդան. և էդպէս որ կերդաս, կուզաս էն  
երկիրը, որը որ եւ բուպայ են անուանում, ինչտեղ էլ որ  
Փարթի քաղաքը ու Փրանդըստունն է, յետոյ կրանց-  
կենաս Աշխատեան Ովկիանոսը, Ամերկան, մեծ Ով-  
կիանոսը, կուզաս Ասիայ, որի մէկէլ ծէրի վրայ էլ մեր  
Թիֆլիզ քաղաքն է և կուսունես էլի հասեղ միայն  
Մախաթի կողմից:

ՄԱՐԻԱՄԸ: Էս ի՞նչպիսի զարմանալի բան է:

ՎԱՐԴԱՆԸ: Ի՞նչեցն է էս հասկէս ըլում, իմ հէր:


ՀԱՅՐԸ: Էս հնդուրեցն է հասկէս ըլում, իմ երեխերք, որ մեր  
երկիրը կուլ՛ է:

ՄԱՐԻԱՄԸ: Ի՞նչպէ՛ս թէ կուլը:

ՎԱՐԴԱՆԸ: Խնձորի ձև ունի՞, կամ բուրթ ունի՞նքն է:

ՀԱՅՐԸ: Հէնց կ'զպիսի մէկ մեծ կուլը բուրթի է մեր երկիրը:  
Էս բանը զիտենալ ձեզ շատ հարկաւոր է, լմորդիք:  
Վարդան, տներ արա ինձ քո խողալու բուրթին:  
(Վարդանը ջիբիցը հանու մէ բուրթ ին ու տալիս է հօ-

րը) : Հիմիկ լաւ մտիկ տուէք էստեղ : Ինչպէս իսկոյն և ետ ասի ձեզ, սրանման, բայց 'ի հարկէ սրանից խիստ շատ մեծ ու սինչ բուրթի է մեր երկիրը, որի երեսի վրայ կան զանազան աշխարհքներ, քաղաքներ, ծովերը, Ովկիանոսներ, գետեր, որի երեսի վրայ կենումեն մարդիկ անասուններ, ու էն ամէն բաները, ինչ որ մենք մեր երկրի վրայ մեր աչքով տեսնումենք :



Հիմիկ ասենք թէ էս բուրթու վրայ մէկ տեղը՝ զորօրինակ էս պուտը - թող մեր քաղաքըն ըլիւ եթէ էս տեղեցը սկըսենք ու միշտ առաջ գնանք, ու ոչ ճանապարհին պատահած սարերուն մտիկ տանք, ոչ մեծ Ովկիանոսներուն, ոչ մեծ մեծ գետերուն, ու միշտ առաջ գնանք, վերջապէս ո՞ւր կուգանք :

ՄԱՐԻԱՄԸ : (շուտով) Հա՛, զորչ իմ հէր, էլն մեր քաղաքը յետ կուգանք :

ՎԱՐԴԱՆԸ : (իր քրոջը) Ու տեսնումես Մարիամ • հակառակ կողմիցը :

ՄԱՐԻԱՄԸ : Հա՛, հա՛, հիմիկ հասկացայ • բայց էլն զարմանումեմ, թէ ի՞նչպէս է կարելի, որ մեր երկիրը բուրթի ըլի :

ՀԱՅՐԸ : Ինչո՞ւ չէ կարելի, կամ ինչո՞ւ ես զարմանում :

ՎԱՐԴԱՆԸ : Ինչպէ՞ս զորչ չզարմանամ • մեր երկրի կողովները իսկի չէ երևում, էնդուր որ դատեր եմ տեսնում թէ ջրեր՝ ամէնը գրուստ՝ են :

(1 Հարթ հաւասար են :

**ՄԱՐԻՍԱՐ:** Ես էլ հէնց էջ էի ուզում ասել որ ինչ որ մենք  
 մեր աչքով տեսնում ենք, կամ ծուռու մառն են, կամ  
 դրուսա են, բայց դուք ասում էք, թէ երկիրս կոչու է,  
**ՀԱՅՐԸ:** Ձեր ասածը զորդ է. միայն պէտք է զիտենաք որ  
 էն ձեր անսած գաշտերը կամ սարերը ամբողջ երկրիս  
 հետ համեմատելով էնքան են, ինչպէս մէկ աւազի հա-  
 տիկ էս քո բուրդու վրայ, ուրեմն էդ ձեր անսած գաշ-  
 տերով ու սարերով դուք չէք կարող անանել ու իմանալ  
 մեր երկրի ձևը: Նմանապէս հասկէս սարբիւնի վրայ նրս-  
 տած սւ մեր առաջ մտիկ տալով մենք չենք կարող եր-  
 կրիս կոչու լինելը իմանալ, այլ էս բանի համար հար-  
 կաւոր է, որ դուք մէկ քանի ուրիշ գիտութիւններ ու-  
 նենաք, երկրիս վրայ ճանապարհորդութիւններ անէք:  
 Գուք որ դեռ էդպէս փոքր էք, դուք որ դեռ քիչ էք  
 սովորելու քիչ բան գիտէք, կարծում էք, թէ էս բանը  
 իմանալը շատ դժուար է, կամ չէ՞ կարելի: Ապա՞ գի-  
 տացէք, որդիք, որ Աստուած մարդուս էնպիսի խելք  
 է տուել էնքան միտք, որ եթէ ուզենայ մարդս իր  
 միտքը բանեցնէ, իր կենսաբան աշխատանքի մէջ անց-  
 կացնէ, պարապ չմնայ, այլ շատ բան սովորի. չէ՞ թէ  
 էսպիսի բաներ, այլ սրանից հազար անգամ դժուար  
 բաներ կարող է իմանալ: Ենպէս էլ մեր երկրիս ձևը ի-  
 մանալը չէ՞ էնպէս շատ դժուար, ինչպէս դուք կար-  
 ծում էք, միայն, ինչպէս իսկոյն և ետ ասի, հարկաւոր  
 է ուսում ու գիտութիւն: Այ, իմ որդիք, վաղ ժա-  
 մանակներում էլ, երբ որ մարդիկ իրանց քաղաքնե-  
 ընց դուրս չէին գնում, ու եթէ զալիս էին մէկ ծովի



ափր ու վախէնու մէին նաւի մէջ նստել ու առաջ դը-  
 նալ, երկրիս կալու լինելն էլ չ'ին գիտի, ու կարծում  
 էին, որ էն ծովերու ափին վերջանու մէ մեր երկիրը, ու  
 մեր երկիրը տափակ էին կարծում. և ինչ շատ ժամա-  
 նակ էլ չէ, ոչ մարդիկ էսպէս էին կարծում, մօտ 300  
 տարի առաջ: Քայց մէկէ լաւեսնեսս դուս եկան նրանց մե-  
 ջնմէն մարդիկ և սկսեցին իրանց իրանց մտածել, ինչ-  
 պէս էլ գուք հիմիկ հարցնու մէիք: Թէ թէ մէկ տեղի-  
 ցը մեր երկրիս վրայ միշտ առաջ գնանք, վերջապէս ո՞ր  
 կերթանք, եթէ ծովերն էլ, մեծ մեծ սարերն էլ անցիկե-  
 նանք: Ղոչաղ լինելով, ու էդ բանը անպատճառ իմանալ  
 ուզենալով չվախեցան ճանապարհից, ծովերն էլ կարե-  
 ցին, սարերն էլ անցիկացան ու միշտ առաջ գնացին,  
 ու մէկ էլ աւանեսս, էլի իրանց քաղաքը յետ եկան:

ՎԱՐԴԱՆԸ: Ի՞նչպէս էն առաջին անգամ էսպէս ճանապար-  
 հորդու թիւն անողը կարծեմ՝ զարմացաւ, երբ որ էլի  
 իր քաղաք յետ եկաւ:

ՀԱՅՐԸ: Ի հարկէ՞ ինքն էլ ու միւսներն էլ զարմացան. բայց  
 էն ժամանակուան մտածող ու խելօք մարդիկը էս  
 բանը իմացան թէ չէ, խիոյն և ետ մտածեցին, որ մեր  
 երկիրը պէտքէ ուրեմն իրան համար մէկ առանձին մար-  
 մին ըլի, ու ուրիշ բաներու հետ կապուած չըլի:

ՎԱՐԴԱՆԸ: Ի հարկէ էդպէս է. եթէ մեր երկիրը ուրիշի  
 հետ կապուած ըլեր, էն ժամանակը ճանապարհորդն  
 էլ յետ չէր գայ իր քաղաքը հակառակ կողմից, այլ ա-  
 ւելի ու աւելի կու հեռանար իր դուրս եկած տեղիցը:

ՀԱՅՐԸ: Ուզեղ ևս ասում, իմ խելօք Վարդան, էդպէս է:

ՎԱՐԴԱՆԸ : Ետ լաւ , մարդիկ իմացան , որ մեր երկիրը  
իրան համար մէկ առանձին մարմին պէտք է ըլի . բայց  
նրայ բոլորակ ըլիլ ինչպէս իմացան :

ՀԱՅՐԸ : Ի հարկէ , շատ դժուար էր էս բանը էնպէս մտք-  
անկողով իմանալ . այլ սրա համար ուրիշ զիտութիւն-  
ներ ու ուսումներ էր հարկաւոր , որնոր դուք դեռ չու-  
նիք , և որնոր դուք կուսովիւք , երբ որ կու մեծանաք ,  
և էն ժամանակը ինքներդ լաւ կուհասկանաք , թէ  
ինչպէս իմացան մարդիկ երկրիս բոլորակ լինելը : Հի-  
միկ դեռ էնքանով բաւականացէք , որ զիտենաք , թէ  
մեր երկիրը ինքն իրան համար մէկ առանձին մարմին  
է , ու ո՞չովն հետ չէ կապուած , ու բուրթու պէս բո-  
լորակ է :

ՄԱՐԻԱՄԸ : Ետ լաւ իմ հէր , ես էդ հաւատումեմ , միայն  
խիոյն մէկ բան մտքս'եկաւ : Նթէ մեր երկիրը ուրիշէ  
հետ կապուած չէ , կամ մէկ բանի վրայ դրած չէ . բաս  
ինչտեղ է նա կանգնած , ինչպէս , և ո՞վ է նրան բռնում :

ՀԱՅՐԸ : Ետ խելօք է հարցմաւնքդ , իմ աղջիկ , ես խիոյն և  
կաքեզ պատասխանը կուտամ , թէ և մէկք'չ դժուար  
է հաւատալ : Պէտք է զիտենաք , իմ որդիք , որ մեր  
երկիրը ուրիշ աստղերու նման երկնքումն է , թէ և  
մեզ էնպէս է երեւում որպէս թէ երկինքը մեզ վրայ է ,  
և մենք երկնքումը չենք , և որ ամէն զիշեր երկնքումը  
տեսած աստղերը , ու ինքը արեգակը ամէն մէկը մեր  
երկրի պէս առանձին ու մեծ մեծ աշխարհքներ են :

ՎԱՐԴԱՆԸ : Ինչպէս իմ հէր , էն փոքր փոքր աստղերը միթէ  
մեր երկրի չափ են :

**ՀԱՅՐԸ:** Չէ թէ մեր երկրի չափ, այլ նրանցմէն մեծ մասը մեր երկրի վրայ հազար ու հարիւր հազար անգամ աւելի մեծ է:

**ՄԱՐԴԱՄԸ:** Այ գարմանալի բան, էդ ի՞նչպէս է կարելի, բնա ինչո՞ւ են նրանք էնպէս փոքր:

**ՀԱՅՐԸ:** Էնդ ուր համար, որ նրանք մեզնից շատ հեռու են ու նրանք չէ թէ զորդ էնպէս փոքր են, այլ էդպէս միայն մեզ կ'ըլեւմեն. ու պէտք է գիտենաք, իմ որդիք, որ ամէն բանը, ինչոր մեր աչքիցը հեռանու մէ մեզ միշտ փոքր է թուում:

**ՎԱՐԴԱՆԸ:** Ղորդ է, իմ հէր, այ, շատ անգամ որ գնու մենք սարի վրայ և հասեղից քաղքի մէջ մտիկ ենք տալիս հեռու քու չէքումը, մարդիկ թէ ձ'աները ճանաչելու նման փոքր են երևում ինձ:

**ՀԱՅՐԸ:** Էնդ ուր համար էլ են մեծ աշխարհքները շատ հեռու ըլելով մեզնից, փոքր աստղերու նման են երևում:

**ՎԱՐԴԱՆԸ:** Ուրեմն ի՞նչքան մեծ պէտք է ըլի աստղերու հեռաւորութիւնը, որ էնպիսի մեծ աշխարհքները էդպէս փոքր են երևում:

**ՀԱՅՐԸ:** Հա՛, իմ որդի, շատ հեռու են, ու էնպէս հեռու, որ էդպիսի հեռաւորութիւնը դուք չէք կարող հասկանալ ու ձեզ երեւակայել. զորօրինակ՝ արեղակը մեզնից 140 միլիօն վերստ հեռու է, ու ուրիշ աստղերը 200 միլիօն, 1000 միլիօն, 100000 միլիօն վերստ ու աւելի էլի հեռու:

**ՎԱՐԴԱՆԸ:** Այ, այ, այ, ի՞նչպիսի հեռաւորութիւնն'ը: Էս են թիւերը ևս միտս կու պահեմ:

**ՄԱՐԻԱՄԸ:** Ա՛խ, ի՛նչպէս ուրախ եմ, որ ես էս բաները իմացայ. ինձ միշտ թուումէր, թէ էն աստղերը է՛նպէս պատիկ են, ինչպէս էլ երևումեն:

**ՎԱՐԴԱՆԸ:** Եթէ ամէն մէկ աստղը էգպիսի մեծ մեծ աշխարհքներ են, ու երկնքի վրայ էնքան շատ ու անթիւ աստղեր կան, ու ամէն մէկ աստղը հազարաւոր միլիոն վերստ հեռու է մեզնից, ուրեմն ինքը երկնքը ի՛նչպէս մեծ պետք է ըլի, սէհ:

**ՀԱՅՐԸ:** Դատ մեծ է, ու սահման չկայ նրա տարածութէնին: Ահա էսօր առաջին անգամ խօսեցի ձեզ հետ Աստու գործքերու վրայ. և էսօր և ետ անսպք նրա գորութիւնը ու նրա մեծութիւնը. սրանից դէնը ինչքան որ աւելի կուխօսենք նրա շինած բաներու վրայ, էնքան աւելի կուտեսնէք մեր Ստեղծողի ամենակարողութիւնը ու ամենախմաստութիւնը:

**ՎԱՐԴԱՆԸ:** Ա՛խ, ի՛նչլաւ բան է էլիլ ուսումը, երանի՛ միշտ մեզ հետ էսպիսի բաներու վրայ խօսէք:

**ՀԱՅՐԸ:** Կուխօսենք, ու շատ կուխօսենք: Հիմիկ ես ձեզ ուղումեմ ասել թէ ի՛նչպէս է մեր երկիրը ուրիշ աստղերու նման երկնքումը կանգնած. Ա՛յ, իմ որդիք, էն աստղերը որ տեսնումէք գիշերը երկնքումը, և որոնք ամէն մէկը, ինչպէս դուք հիմիկ իմացաք, մեծ մեծ աշխարհքներ են, ամէն մէկը մէկ գորութիւն ունի, որնոր մէնք ձգողական գորութիւն ենք անուանում: Կս էն գորութիւնն է, որով ամէն մէկ աստղը միւսին իր մօտ է քսշում. էս գորութիւնը կայ և մեր երկրի մէջ:

ՎԱՐԴԱՆԸ: Էդ ի՞նչ զօրութիւն է, և մենք աչգեօք չենք  
կարող տեսնել:

ՀԱՅՐԸ: Չէ՛ իմ որդի, զօրութիւնը ինքը չէ երևում, այնրա  
գործողութիւնը միայն: Զորօրինակ՝ եթէ մէկ բուրթի  
վերև գցես, կամ ծառից մէկ տանձ որ կարվի, կամ  
ձեռիցդ դանակ վեր ընկնի՝ ամէնը դէպ ՚ի ներքև են  
ընկնում, այսինքն դէպ ՚ի երկիրը. Էնպէս Համար որ  
երկիրս ունի ձգողական զօրութիւն, որովնա ամէն բա-  
նը իր մօտ է քաշում:

ՎԱՐԴԱՆԸ: Ամէն բանի երկրի վրայ վերընկնելը ես ուզում էի  
վաղուց քեզ հարցնել, իմ հէր. թէ ի՞նչու ամէն բանը  
դէպ ՚ի երկիրն է ընկնում, և ո՞ւր է թէ երկրից հեռանում է,  
Հիմիկ շատ ուրախեմ, որ սրա պատճառը իմացայ:

ՀԱՅՐԸ: Ուրեմն հիմիկ իմացար, որ երկիրը իր զօրութիւնով,  
որնոր մենք ձգողական զօրութիւն ենք անուանում, իր  
մօտ է քաշում իր վրայ էլա՞ծ մարմինները: Իս ձգողա-  
կան զօրութիւնը ինչպէս որ մեր երկիրը ունի, էնպէս  
էլ արեգակը, լուսինը ու ողջ աստղերը ունին. էնպէս  
որ արեգակի վրայիցն էլ որ մէկ բան վերև գցես, էլի յետ  
արեգակի վրայ կուրնկնի. էնպէս էլ աստղերու վրայ:  
Ինչպէս որ մեր երկիրը կամ արեգակը կամ աստղերը ի-  
րանց վրայ էլա՞ծ բաները իրանց մօտ են քաշում, էն-  
պէս էլ մէկմէկու են իրանց մօտ քաշում: Ինչպէս որ ա-  
րեգակը մեր երկրին է իր մօտ քաշում ու ուրիշ աստղե-  
րուն, մեր երկիրն էլ արեգակին ու աստղերուն իր մօտ.  
աստղերն էլ մեր երկրին ու արեգակին են իրանց մօտ  
քաշում: Ինչպէս որ սրանք ամէնքը մէկմէկու են քաշ-

քշում, և էսպիսով մէկմէկու բռնումեն: Երկնակի համար ասենք թէ, դու Մարիամ ջան, աթոռի վրայ կանգնես, ու մէկը քեզ օճոռքիցը վերև քոշէ, միւսը քո աջ ձեռիցը, մէկէն էլ մէկէլ ձեռիցը, մէկն էլ ներքեւիցը • մէկը առջևից, միւսն էլ ետևիցդ, ու քո ոտի տակիցդ աթոռը վերառնենք • դու կուսնաս օդի մէջ արդեօք կախ ընկած:


**ՄԱՐԻԱՄ:** Կուսնամ, իմ հէր • էս օրինակով ես լաւ հասկացայ, ինչպէս մեր երկիրը ինքն իրան համար դրած պէտք է ըլի երկնքումը:

**ՎԱՐԳԱՆ:** Ուրեմն էն ուրիշ ասողերն ու արեգակն են, որոնք որ մեր երկիրը ամէն կողմից քաշքշումեն, բռնումեն, ու մեր երկիրն էլ մնումէ էնպէս օդի մէջ կախ ընկած: Ա՛խ, ի՞նչ լաւ բան է, որ ես էս բանըն իմացայ:

**ՀԱՅՐ:** Հա՛, իմ որդի, ուրեմն մեր երկիրը ո՛չ ուրիշին է կրպած, կամ մէկ բանի վրայ կախ ընկած, այլ ինքն իրան համար կայ. և աստղերու ու արեգակի ձգողական զօրութիւնն է, որնոր սբան ամէն կողմը քաշքշելով բռնած ունի օդի մէջ, կամ երկնքումը: Ան աստղերուն էլ, որոնք մեր երկրին իրանց ձգողական զօրութիւնով ամէն կողմից քաշքշումեն, ուրիշ աստղերն են միւսինոյն կերպի բռնում, սբանցն էլ էլի միւսները, ու էսպիսով ողջ աստղերը մէկմէկու քաշքշելով, կազմումեն էն անսահման տարածութիւնը, որնոր մենք երկիրք ենք անուանաւ: Ի՞նչ անթիւ աստղերով, արեգակով, լուսնով, և որտեղ էլ որ մեր երկիրն է զանուում ինչպէս մէկ փոքրը աստղ:



է : Ասենք թէ էս բուրթին մեր երկիրն  
 ըլի , ու - նրա մշտեղը : Եթէ ք տե-  
 ղիցը ուղիղ ճանապարհ կողենք եր-  
 կրի միջով ու - մշտեղովը անցկենանք  
 մինչև որ էլի ք տեղումը երկրի երեսին  
 դուրս գանք՝ կու ըլի **12000** վերստ



ՎԱՐԴԱՆԸ : Այսինքն , ուրիշ խօսքերով **12000** վերստ  
 է երկրիս հաստու թիւնք :

ՀԱՅՐԸ : Կամ ինչպէս աստուուսմէ **12000** վերստ է երկրիս  
 արամագիծը : Հակ երկրիս շրջանակը կու ըլի **37800**  
 վերստ, այսինքն, եթէ ք տեղիցը դուրս գնանք ու գնանք  
 միշտ առաջ ուղիղ գծով երկրի երեսով, մինչև որ էլի յետ  
 գանք ք տեղը՝ կու ըլի **37800** վերստ: Բաց 'ի էս էլի մէկ  
 բան զիտացէք, որ մեր երկիրը թէև ասի բոլորակ է,  
 միայն կանոնաւոր գունդ չէ, այլ երկու կողմիցը քիչ  
 սկսմուած է ու միւս երկու կողմիցը քիչ վերուած :

ՎԱՐԴԱՆԸ : Եւ էս բաները ո՞վ է իմացել և ի՞նչպէս են իմա-  
 ցել իմ հէր :

ՀԱՅՐԸ : Իհարկէ ամէն մարդ չէ կարող իմանալ, այլ նա՝  
 որնոր լսելօք է ու էս բաները իմանալու համար հար-  
 կաւոր զխտու թիւնները լաւ զխտէ : Էս զխտու թիւն-  
 ները են՝ Բնագիտու թիւն, Աստղաբաշխու թիւն, Մա-  
 թէ մամթիկայ, Երկրաչափու թիւն, և էլի մէկ քանի ու-  
 ըրիշ զխտու թիւններ, որնոր մէկ խօսքով՝ Բնական Գի-  
 տու թիւններ ենք անուանում :

ՎԱՐԴԱՆԸ : Այս, էն ի՞նչ լաւ զխտու թիւններ պէտք է ըլ-



ին , որով էս ամէն բաները իմացուումեն

**ՀԱՅՐԸ :** Հ ա՛ , իմ որդի , շատ լաւ գիտութիւններ են , ու ժամանակ կուգայ : դուք նրանցը կուսովէք , էնպէս , որ ի՞նչ որ ես ձեզ հիմիկ ասուամեմ , ինքներդ էլ կարող էք իմանալ :

**ՎԱՐԳԱՆԸ :** Ա՛խ , երանի՛ շուտով սովորեմ ես էս գիտութիւնները .

**ՄԱՐԻԱՄԸ :** Իմ հէր , եթէ գիտենաս , ինչպէս ուրախ եմ , որ էսօր էսքան նոր նոր ու հարկաւոր բաներ սովլեցայ : Բայց էն ի՞նչ բաներ են , որ իմ ծծմէրն ինձ ասումէր : Վա՛ւ , հիմիկ ես գիտեմ . նա ինձ շատ շուտ շուտ է զանազան առակներ ու պատմութիւններ պատմում , ու շատ անգամ էլ ասումէ աշխարհքի ծէր : Սպա՛ , եթէ մէկէլ կ'ասէ էն ժամանակը ես նրան կուհասկացնեմ , որ աշխարհքը ծէր չունի , որ նրա կարծիքը սխալ է և որ էսպիսի խօսքեր նա ուրիշ անգամ էլ չըասէ .

**ՎԱՐԳԱՆԸ :** Հ ա՛ , իմ ընկերներու մէջն էլ շատերը կան , որ ասումեն « աշխարհքի ծէր . երանի՛ աշխարհքի ծէրը մէկ անգամ տեսնեմ » . ուրեմն ինչ կուտեսնեն . կամ մեր երկրի վրայ զանազան սխալ կարծիքներ ունին , ա՛խ , երանի՛ մէկ էլի ասեն իմ առջևը , էն ժամանակը ես նրանցը կումեկնեմ ամէն բանը , ու ձեր պատմածը նրանցն էլ կուպատմեմ .

**ՀԱՅՐԸ :** Եստ լա՛ւ , իմ խելօք որդիք . ՚ի հարկէ միշտ բանը պէտք է էնպէս սովլէք , որ կարողանաք ձեր գիտութիւնը պէտք ածէք , և ձեր գիտացածը ուրիշին էլ ասէք . էսպիսով դուք երկու օգուտ էք ստանում . մէկ

էն , որ ուրիշին բան էք սովընցնում , միւսը էն , որ ուրիշին պատմելով , ձեր գիտացած բանը կրկնումէք , և ինքներդ էլ ձեր գիտութենի մէջ սւեշի էք հաստատուում : Հիմիկ ուզումեմ որ դուք մէկ քանի անուաններ էլի սովըէք , որնոր մենք շատ գործ ենք ածում , մանաւանդ բնութեան վրայ խօսելու ժամանակը : Էս անուանները են՝ արեւելք , արեմուտ , հիւսիս ու հարաւ : (Վարդանին) Կրկնէ արա :

ՎԱՐԴԱՆԸ : Արեւելք , արեմուտ , հիւսիս , հարաւ :

ՀԱՅՐԸ (Մարիամին) : Աբա՛ դու կրկնէ՛ հիմիկ :

ՄԱՐԻԱՄԸ : Արեւելք , արեմուտ , հիւսիս , հարաւ : Բայց էս ի՞նչ բանի անուաներ ե՞ն սրանք ,

ՀԱՅՐԸ : Սրանք են ամէն մէկ տեղի չորս կողմերու անուաները :

ՄԱՐԻԱՄԸ : Ի՞նչպէս . ես չեմ հասկանում , ի՞նչ ես ուզում ասել :

ՀԱՅՐԸ : Ես էն եմ ասում , որ ամէն մէկ տեղը՝ թէ տուն , թէ բաղ , թէ քաղաք հօ չորս կողմ ունի՞ :

ՎԱՐԴԱՆԸ : Ճշմարիտ է :

ՄԱՐԻԱՄԸ (մտածելով) : Հա՛ , էդպէս է :

ՀԱՅՐԸ : Էս տեղերու ամէն չորս կողմերուն մարդիկ զանազան անուաններ են դրել , ինչպէս արեւելք , արեմուտ , հիւսիս ու հարաւ :

ՄԱՐԻԱՄԸ : Հա՛ , հասկացայ . բայց ասա՛ ինձ , իմ հէր , որ կողմն է արեւլքը :

ՀԱՅՐԸ : Մէկ երկրի , կամ քաղաքի , կամ գուղի , կամ տան էն կողմը , որտեղից որ արեգակը առաւօտները դուրս

է գալիս, անուանու մենք արեւելք: Հասկացա՞ք, իմ երեխե՛րք:

ՎԱՐԴԱՆԸ ՈՒ ՄԱՐԻԱՄԸ: Հասկացանք, հասկացանք. զորօրինակ մեր Թիֆլիզ քաղաքի համար Մախաթի սարերու կողմն է արեւելքը: Հիմիկ ասա՛ մեզ, ո՞ր կողմն է արեւմուտը:

ՀԱՅՐԸ: Էն կողմը, որ կողմից որ արեգակը իրիկունները մէր է մանուս. ինչպէս մեր քաղքի համար Մթածմինդի կողմը:

ՎԱՐԴԱՆԸ: Ուրեմն էս երկու կողմերը, այսինքն արեւելքը ու արեւմուտը մէկմէկու դէմուդէմն են:

ՀԱՅՐԸ: Է՞զպէս է: Ուրեմն եթէ դուք ուզենաք իմանալ մէկ տան կամ գիւղի կամ բաղն արեւելքի ու արեւմտի կողմը, ինչպէս պէք է անէք:

ՎԱՐԴԱՆԸ: Պէտք է դեռ գիտենամ. թէ մէկ տան կամ գիւղի կամ բաղն որ կողմիցն է արեգակը դուրս գալի, և էն կողմը կուրի արեւելքի կողմը, և էն կողմը, որտեղ որ արեգակը մէր է մանուս՝ արեւմտի կողմը:

ՄԱՐԻԱՄԸ: Արեւմտի կողմը ես ուրիշ կերպի կու իմոնամ: Այ ինչպէս եթէ արեւելեան կողմը իմացայ, իսկոյն մտիկ եմ տալիս նրա դէմուդէմ էլած կողմը, և էն կողմը կուրի արեւմտի կողմը:

ՀԱՅՐԸ: Շատ լա՛ւ. հիմիկ ես ձեզ կասեմ միւս Զ կողմերը:

ՄԱՐԻԱՄԸ: Հիւսիս ու հարաւ:

ՀԱՅՐԸ: Է՞զպէս է. բայց էդ երկու կողմիցը ո՞րն է հիւսիս, ո՞րն է հարաւ: Լաւ լսէ՛ք ինձ: Մարիամ, վեր կաց տեղիցդ ու կանգնիր էնպէս, որ երեսդ դէպ ՚ի արեւելք

քը ըլի : (Մարիամը կանգնումէ երեսը դէպ 'ի արևելքը \*) : Հիմիկ  
աստ ինձ : քո առջևի կողմը ինչպէս է անուանուուում :

ՄԱՐԻԱՄԸ : Արևելք :

ՀԱՅՐԸ : Քո ետեխցդ :

ՄԱՐԻԱՄԸ : Արևմուտ :

ՀԱՅՐԸ : Մնումէ էլի երկու կողմը : Էն կողմը , որնոր քո  
աջու ձեռի կողմն է , անուանուումէ հարաւ , իսկ քո  
ձախու ձեռի կողմը՝ հիւսիս :

ՎԱՐԴԱՆԸ : Հը՛ . հիմիկ լաւ հասկացայ :

ՄԱՐԻԱՄԸ : Իմ հէր , թողես մէկ էլի ինքս ասեմ . հիւսիս  
ու հարաւ կողմերը դանելու համար պետք է կանգ-  
նեմ երեսս դէպ 'ի արևելքը . էն ժամանակը ձախ ձեռիս  
վրայ կուրլի հիւսիսը , աջ կողմիս վրայ հարաւը :

ՎԱՐԴԱՆԸ : Իմ հէր , ես էլի ուրիշ կերպիւ կարող եմ գրտ-  
նել հիւսիս ու հարաւ : Արևելքին երեսս դէմ անելու  
տեղ էնպէս կուկանգնեմ , որ արևմտին մտիկ տամ .  
էն ժամանակը աջ կողմիս վրայ կուրլի հիւսիսը , ձախ  
կողմիս վրայ հարաւը :

ՄԱՐԻԱՄԸ : Ուրեմն ինչպէս արևելքը ու արևմուտը մէկ-  
մէկու դէմուդէմն են , էնպէս էլ հիւսիսն ու հարաւը :

ՀԱՅՐԸ : Շատ լաւ , իմ սիրելիներ , էդպէս էլ կարելի է մեկ-  
նել : Երևումէ , որ դուք ինձ լսելիս շատ ուշադիր էք  
և լսած բանի վրայ մտածումէք :

ՎԱՐԴԱՆԸ ՈՒ ՄԱՐԻԱՄԸ : Հիմիկ մենք լաւ դիտենք , որ

---

Ով որ իմ ջհէլ կարգացողներիցը չդիտենայ աշխարհքի էս չորս կողմերը ,  
թող ինքն էլ միկնոյնը անէ ինչ որ Մարիամը արաւ , որ լաւ իմանայ , թէ որ  
կողմն է հիւսիսը և որ կողմը հարաւը :

կողմն է արեւելք , որ կողմը արեւմուտը , որը հիւսիս և  
որը հարաւ :

ՀԱՅՐԸ: Մէկ բան ուզումեմ էլի ձեզ հարցնել, եթէ էս չորս  
կողմերիցը մէկը յայտնի ըլի , մէկ էլ երեք կողմերը  
դուք կարողէք իմանալ . զորօրինակ եթէ միայն ար-  
եւելքը գիտենք :

ՎԱՐԴԱՆԸ: Հ ա , իմ հէր , լաւ : եթէ մէկ տեղի արեւելքի  
կողմը գիտեմ , էն ժամանակը նրա դէմուդէմ էլաժ  
կողմը կուրլի արեւմուտու ելք որ ես էնպէս կուկանդ-  
նեմ , որ արեւելքին մտիկ ըլիմ տալիս՝ ձախ ձեռիս  
վրայ կուրլի հիւսիսը , աջ ձեռիս վրայ հարաւը :

ՀԱՅՐԸ: Եստ լաւ , բայց ասենք թէ միայն հիւսիսը գիտեա-  
ՄԱՐԻԱՄԸ: Էշ էլ ես կ'ասեմ : Էն ժամանակը հիւսիսի դէ-  
մուդէմ էլաժ կողմը կուրլի հարաւ . յետոյ արեւելքը  
ու արեւմուտը դանելու համար կուկանդնեմ երեսս դէպ  
ի հիւսիս , աջ ձեռիս վրայ կուրլի արեւելքը և նրա  
դէմուդէմը , կամ իմ ձախ կողմը կուրլի արեւմուտը :

ՀԱՅՐԸ: Հ իմիկ տեսնումեմ , որ ասածս լաւ հասկացաք ,  
Թող սրանով վերջացնենք մենք մեր էսօրուան խօսակ-  
ցու թիւնը երկրիս վրայ . Հիմիկ ինձ մէկ էնպէս կարձ  
խօսքով կրկնեցէք ինչ բաներու վրայ որ խօսեցիք էսօր :

ՎԱՐԴԱՆԸ: Ես կուպատեմ , իմ հէր :

ՄԱՐԻԱՄԸ: Չէ , չէ , իմ հէր , ես կասեմ :

ՀԱՅՐԸ: Լ աւ , իմ աղջիկ , դու ասա :

ՎԱՐԴԱՆԸ: Չէ , չէ ես կասեմ , թող քուրս ինձ , եթէ սը-  
խալուեմ , ուղղէ :

ՄԱՐԻԱՄԸ: Լ աւ , թող էդպէս ըլի :

ՎԱՐԴԱՆԸ: Մենք սովորեցանք էսօր, տռաջներ՝ որ մեզ շատ հարկաւոր է Աստու ստեղծած բաները լաւ ճանչնալ. էնդուր որ Նա ողջ աշխարհքը մեզ համար է ստեղծել, և եթէ մենք մեր Աստուան սիրումենք, պէտք է լաւ ճանչնանք Նրա մեզ բաշխած բաները: Երկրորդ՝ որ մեր երկիրը իրան համար առանձին մարմին է, ուրիշ ոչ մէկ աշխարհքներու հետ չէ կապուած, կամ ոչխարի պոչի կամ ձկան մէջքի վրայ չէ դրած, և ուրեմն ծէր չունի: այլ բուրթու պէս բոլորակ է: Երրորդ՝ թէ էն ինչ զօրութէնով է մեր երկիրը երկնքումը բռնուում, այն է ձգողական զօրութէնով, որնոր մեր երկիրը ու ողջ աստղերը ու արեգակը իրանց մէջը ունին. որ արեգակը, աստղերը ամէն մէկը առանձին աշխարհքներ են, և մեր երկրիցն էլ մեծ. և որ մեր երկիրն էլ երկնքումն է ու մէկ աստղի պէս է. չորրորդ՝ մեր երկրի մեծութէնի վրայ, և հինգերորդ՝ աշխարհքի և ամէն տեղի չորս կողմերու անուսները իմացանք: Բայց իմ հէր, մեր երկրի մեծութէնի թիւերը միտս չեն:

ՀԱՅՐԸ: Երկրիս հաստութիւնն է 12000 վերստ. ու շրջանակը 57800 վերստ:

ՎԱՐԴԱՆԸ: Լաւ իմ հէր, 12000, ու 57800, էլ չեմ մոռանալ:

ՄԱՐԻԱՄԸ: Վարդանը ողջ ասէց, և ինձ բան չմնաց ասել ու:

ՎԱՐԴԱՆԸ: Բան, Մարիամ ջան, դու կարծումէիր, թէ ես կուսխալուեմ:

ՀԱՅՐԸ: Շատ լաւ իմ որդիք, այ, էգպէս խելօք որ կուրիք, դուք շատ կարճ ժամանակումը լաւ կուճան-

չնաք Աստու ստեղծած բաները և էստորով դուք  
ցոյց կուտաք Աստունն ձեր սէրը :

ՄԱՐԻԱՄԸ . Էլ ինչ կուպատմես մեզ էլ ինչ էսպիսի բաներ .  
ՎԱՐԴԱՆԸ : Հ ա , ի մ հ էր , խօսք տաւր , որ էլ շուտով մն զ  
էս օրվան պէս ուրախացնես :

ՀԱՅՐԸ . Հ իմիկ գնացէք , խաղացէք ու ուրիշ բան շինեցէք  
ու ասած բաներուս վրայ էլ միտք արէք . շուտով շու-  
տով կուշարունակեմ էս օրուան խօսակցութիւնը :

Ո . ԽՕՍԱԿՑՈՒԹԻՆԻ ՎԵՐՁԸ :



## ԶԱՆԱԶԱՆ ԱՌԱԿՆԵՐ ԵՒ ՄԱՆՐԱՎԷՊՆԵՐ :



### 1.

Մէկ աշակերտ մէկ օր ուշացաւ վարժատուն զնալ, և գիտէր որ վարժապետը չար էր և ուշանալու համար նրան կուպատէր . մտածումէր, թէ ի՞նչպէս իր գլուխը արդարացնէ . և զորդ գտաւ մէկ պատճառ . երբ որ վարժապետը նրան հարցրեց թէ «ի՞նչու ուշ եկար», աշակերտը պատասխանեց : — Ա՛խ, իմ վարժապետ, էս գիշեր գետինը էնպէս սառել էր, որ վարժատուն գալուց եթէ մէկ քայլ առաջ էի դնում՝ երկու քայլ յետ էի սլքուում : — Ապա եթէ էդպէս էր, ի՞նչպէս եկար վարժատուն, հարցրեց վարժապետը . — Ես սկսայ տուն զնալ, — պատասխանեց խելօք աշակերտը :

### 2.

Մէկ գեղըցի տղայ ձուաներ էր բերում քաղաք ծախելու : ձանապարհին պատահումէ նա մէկ ուրիշ տղին ուսումէ սրան : «Եթէ կուիմանաս, թէ կալաթիս մէջ ի՞նչքան ձուաներ ունիմ, էն ժամանակը որջ հարիւրն և ետ քեզ կուբաշխեմ :

### 3.

Մէկ մարդ ասումէ մէկ անգամ մէկ երեսին : Եթէ դու



ինձ կըսես, թէ սրտեղ է Աստուած, ես քեզ մէկ խըն-  
 ձոր կուբաշխեմ»: Երևի էն պատասխանումէ. — ես ձեզ երկու  
 խնձոր կուբաշխեմ, եթէ դուք ինձ կըսուէք, թէ սրտեղ  
 չէ Աստուած —:

## 4.

Քսանտուս՝ մէկ հարուստ Հոյն (Բեյձէն) ունէր մէկ  
 շատ խելօք ծառայ՝ Եզոպոս անունով՝: Սրան իր պարոնը  
 մէկ օր ղրկումէ փողոց բան առնելու: Ճանապարհին պա-  
 տահումէ սրան քաղաքապետը (պօլիցմէյստորը), որնոր սրա  
 պարոնի հետ շատ բարեկամ է ըլլում, և հարցնումէ Եզոպո-  
 սին, թէ պարոնը տանն է: Եզոպոսը պատասխանումէ, թէ  
 տանն է: Յետոյ հարցնումէ քաղաքապետը, թէ դու ո՞ր  
 ես գնում: Եզոպոսը պատասխանումէ. «չեմ գիտի»: Քաղա-  
 քապետը էլ ի հարցնումէ նեղանալով. «ի՞նչպէս չես գիտի գը-  
 նումես, ու չես գիտի, թէ ուր ես գնում»: Եզոպոսը էլ ի  
 ասում է, թէ չեմ գիտի: Քաղաքապետը շատ նեղանումէ  
 սրա համարձակու թէնի ու յանդուկն պատասխանի վրայ ու  
 խկոյն հրամայումէ որ Եզոպոսին բանդը գցեն: Եզոպոսը  
 շուտ է գալիս դէպ ՚ի քաղաքապետը ու ասումէ. «Այո՛, ա-  
 բա որ ասումէի քեզ, թէ չեմ գիտի ո՞ր եմ գնում, զորդ  
 չէր ես գիտէի՞, որ բանտը կերթամ»: Քաղաքապետին էն-  
 պէս դուր եկաւ էս խելօք խօսքը, որ հրամայեց բաց թողնեն  
 Եզոպոսին, ու էրնէկ էր տալիս նրա պարոնին, սր կնպիսի  
 խելօք ծառայ ունէր:

[1 Սա էն Եզոպոսն է, որնոր շատ առաջներ է ղրկու

## 5.

Մէկ կնիկ իշաները քշելով անց էր կենում մէկ վարժատան առջևը ու հէնց էն ժամանակը, որ աշակերտները վարժատանից դուրս եին գալիս : Արանք սկսեցին՝ կնիկայ վրայ ծաղըր անել ու մէկ ձէնով ասել. «բարով՝ իշաներու մէր» :— Բարով, բարով, իմ որդիք, պատասխանեց պառաւը կնիկը :

## 6.

Մէկ մարդ, որնոր վաղուց թողել էր իր քաղաքը ու ուրիշ երկրումն էր կենում, պատահումէ մէկօր իր քաղքի մարդուն, ու զանազան բաներու վրայ հարց ու փորձ անելից յետոյ, հարցնումէ. «էլի էնտեղ էնքան գժեր կան. ինչպէս վաղ» :— Չէ, պատասխանեց մէկէլը. հիմիկ էնքան չէ, ինչքան քո էնտեղ էլա՞ծ ժամանակը :

## 7.

Մէկ քոս՝ մարդ թաղել էր իր բաղչի մէջ հինգ հարիւր մանէթ : Բայց նրա հարեանը տեսել էր էդ բանը ու մէկ օր գնացել էր ու հանել էր էն փողը : Քօռը մէկ օր գալիս է տեսնելու, թէ իր փողը տեղն է թէ չէ : Մէկ էլ ինչ տեսնէ. փողը հանած է : Իսկոյն հարեանի վրայ է կասկածում ու զնումէ նրա մօտ ու ասում. «Ա՛խ, իմ սիրելի հարեան, դու պէտք է ինձ օգնես. ես հազար մանէթ ունիմ, սրա կէսը բաղչումն թաղել էի, և մէկէլ կէսը, որնոր ինձ մօտ է, ուղումեմ՝ նրա հետ միասին դնել, բայց թաղած փողիս տեղը չեմ գտնում, արի՛ ինձ օգնէ, ու միասին պտըր-

տենք»։ Հարեանք յուսալով, որ էն հինգ հարիւր մանէթն էլ կուվերառնէ, համաձայնեց, գնաց շուտով գողցած փողըն էլ դրեց իր տեղը։ Բայց քօռը ՚իր փողը գաննելով, վերառաւ ու ասեց հարեանին. «քօռը աւելի լաւ սեսաւ քան թէ էն մարդը, որնոր երկու աչքն և ետ բաց ունէր»։

## 8.

Մէկ ինքնահաւան ու հպարտ կնիկ ասումէր մէկ օր մարդկերանց մէջը, թէ երբ որ մէկ յիմար բան է ուզում ասել, դեռ առաջ ինքն է ծիծաղում, «Աւրեմն դուք ձեր կեանքը շատ ուրախ պէտք է անցկացնում ըլիք»․ ասեց մարդկերանցից մէկը։

## 9.

Մէկ հարբած մարդ օրը կէսօրին զինետունից (միկիտանխանից) դուրս եկած՝ հարցնումէ մէկ անցկենողին երկնքի վրայ նշանց ասլով. «Ասա՛, խնդրեմ ինձ, սիրելի՛, էն բանը երկնքի վրայ ի՞նչ է, լուսին թէ արեգակ»։ Անձանօթը՝ սեսնելով նրա հայը, պատասխանումէ. — Չգիտեմ, հաւատա՛ ինձ, ես էստեղի մարդ չեմ, ճանապորդ եմ։—

## 10

Յովսէփ Բ՝ Ավստրայի կայսրը՝ մէկ օր հասարակ շորերը հագած քուչումը ման էր գալիս<sup>1</sup>։ Մէկէլ սեսնումէ, որ մէկ խեղճ պատիկ տղայ վազումէ նրա առաջ ու ձեռք դէմ անելով, ողբում թիւն է խնդրում։ Թաղաւորը, որպէս թէ

(1) Յովսէփ Բ՝ որնոր Ավստրայի թագաւորն էր, երեկի էր իր բարեսրտութենով, ազնուութենով ու խմատութենով։ (2) յճումէր․

չէ լսում երեխի լնչիլքը, առաջ է գնում: Երեխէն ետեից վազելով առումէ. «Պարն, ողորմութիւն արա՛, մէկ տասը շայ էլա տուր»: Յանկարծ թագաւորը կանգնումէ ու հարցնումէ, թէ ինչի՞ք է հարկաւոր 10 շայն:—«Մերս հիւանդ է. էդ փողով ուզումեմ բժիշկ բերել, ասումէ երեխէն: Թագաւորը տալիս է տասը շայն և հարցնումէ երեխին, թէ սրտեղ է նրանց տունը: Երեխէն նշնով նշանց է տալիս տունը ու վազումէ: Թագաւորը գտնումէ էն տունը, մանումէ ներս ու սեսնումէ, որ զորք մէկ կնիկ մեծ խեղճութէնի մէջ պառկած էր գողննքումը: Երան իբրև բժիշկ յայտնելով, հարցնումէ հիւանդին նրա ցաւը: Յիւանդը յայտնումէ իր ցաւը և թագաւորը նստումէ ու մէկ կտոր թղթի վրայ որպէս թէ դեղ է գրում, գրումէ որ իրան սեպհական խազենից՝ հաղար մանէթ տան էս թուղթը բերողին: Թուղթը գրումէ ու գուրս է գնում: Մէկ քանի ժամանակից յետոյ գալիս է տուն հիւանդի տղէն մէկ մարդու հետ և ասումէ մօրը: «Ա՛յ, խմէ՛ր, հիմիկ լաւ կուրլիս, ես բժիշկ եմ բերել քեզ համար»: Մէրը զարմացած՝ ասումէ.—Որդի՛, մէկ բժիշկը հէրէք՝ չէ՛ր, որ երկուսին ես բերում: Սրանից առաջ մէկը կտեղ էր, ասումէր, թէ դու ես նրան ինձ մօտ դրկել. այ, տես էն սեղանի վրայ թուղթը, դեւըն էլ գրեց: Բժիշկը վեր է առնում թուղթը, կարգումէ ու զարմացած ասումէ. «էս դեղը իմ դեղեց աւելի լաւ է, սրա գրողը է մեր թագաւոր՝ Յովսէփը Բ. սա գրումէ, որ իր խազնից քեզ հաղար մանէթ տան:—Մէրը ու բրդին ու բախտութէնից էլ չեն գիտի ի՞նչ անեն: Տղէն վեր է առնում թուղթը ու բժշկին

խնդրելով, որ իր մօրը լաւ տէրութիւն անէ, ինքը վազուով փողը ստանալու :

## 11

Մէկ ջճէլ տղայ խնդրումէ մէկ փիլիսոփից, որ նա նրան էն դրքի անուեր տայ, որտեղից որ նա իմաստութիւն կարող էր սովորել: «Վեր ան մէկ թարգախ<sup>1</sup> իստակ թուղթ, պատասխանումէ փիլիսոփէն, ու գրէ՝ նրա մէջը ինչ որ դու աշխարհքումը ինքդ լաւ Երևելի բան կուտեսնես. աշխարհքըս . ամէնից լաւ ուսուցիչ է խելօք ու բան իմանալ ու զեցող մարդու համար»:

## 12.

1586 թուին Ֆիլիպ Բ՝ Իսպանացուց թագաւորը զըրկումէ մէկ ջճէլ ազնուական Սիկստ Եի մօտ սրան պատուութիւնը շնորհաւորելու: Բայց սա շատ տնքաւական է ըլում թագաւորից, որ էնպիսի ջճէլ տղայ էր զովել իր մօտ, ու չէ համբերում, ու ասումէ վերջապէս. «միթէ՞ ձեր թագաւորը մարդիկ չունէ, որ ինձ մօտ առանց միրուքի՞ մարդ է զովում»: — «Եթէ իմ թագաւորը գիտենար, պատասխանեց ջճէլ տղէն, որ տրժանաւորութիւնը միրուքի մէջն է, էն ժամանակ նա ձեզ մէկ է՞ծ կուզրկէր ու ո՛չ թէ ինձ»:

## 13.

Մէկ անգամ վէննայումը (Ավստրիայի տէրութեան մայրաքաղաքումը<sup>3</sup>) ինչ որ ազնուական իշխան ու նշանաւոր ու մեծ մարդիկ կային՝ հաւաքուեցան իրանց թագաւորի՝ Յով-

(1 Թելթ. (2 մորուք. (3 այսինքն թագաւորի նստելու քաղաք.


ուէփ Բ՝<sup>1</sup> մտաք զանգատ տրին, որ ինչ որ սէյր անելու՝ տեղեր կան ա մէն ի ի մար բաց են՝ մեծ թէ հասարակ մարդկերաց համար • ին նդրեցին թագաւորին, որ նա հրաման տայ, որ քաղաքի գ. աւոր սէյր անելու տեղերու մը հասարակ մարդկերանցը չթողնեն: Յովսէփ Բ՝ պատասխանեց նըրանց: «Ուրեմն եթէ ես էլ ուզենայի միշտ ինձ հաւատարմարդկերանց հետ ըլիլ, պէտք է զնայի ու թագաւորներու գերեզմաններու մէջ բնակուէի, և էնտեղ իմ օրերս անցկացնէի: Ես սիրումեմ ողջ իմ մարդկերանցը մէկ թհար՝ և առանց զանազանելու, և նա է ինձ համար մեծ մարդ, որն որ խօսքով ու գործքով ճշմարիտ է և ոչ թէ նա որնոր ազնուական ցեղիցն է»: —

## 14.

Մէկ մարդ քուչումը անցկենալիս տեսնումէ, որ մէկ երեխայ նստած լաց է ըլում: «Ինչու ես լաց ըլում», հարցնումէ էն մարդը երեխին:—Մէրս փող՝ էր տուել ինձ, և ես էն փողը կորցրի,—պատասխանեց լացը լըով երեխէն:

Ահա՛ քեզ քո կորցրած փողը «ասեց մարդը և տուեց երեխին փող: Երեխէն փողը վերառաւ ու աւելի բարձր սկսեց լաց ըլիլ: «Ել ինչու ես լալի, հարցրեց մարդը:—«Ենդուր եմ լալիս, պատասխանեց երեխէն, որ եթէ իմ մէկ աբասին չէի կորցրել, հիմիկ երկու կունենայի»:—

Ինչքան մարդիկ էլ կան աշխարհքումս, որ կգ աղին են նման . . .



(1 Ես միմեյն թագաւորն է, որի վրայ 10 պատմութեան մէջ խօսուեցաւ.  
(2 սրտանքի. (3 կերպի. (4 դրաս.

## Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Բ. Գ. :



Ա. փսոս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,  
 Յ՛ր ու ցան ելաք անմեղ, անխորհուրդ,  
 Գերի դնամանաք՝ դէպ ՚ի Խորասան՝,  
 Քաղցած ու ծարաւ, տկլոր, թշուառական :

Խարիւր ու խաղար՝ ցաւի դիմացաք,  
 Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չըղրաք,  
 Խիմի՛ ձեր փօր մօր՝՝ գերեզման թողաք,  
 Տներն ու ժամերն ուրիշի տուաք :

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,  
 Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,  
 Ու մն աք թողմանն՝, որ գնամանաք,  
 Էսպէս կուրչինի որ մոռանումաք :

Վախումամ՝ կնպէս մտքերնուցդ բնկնի,  
 Ինչքան որ ողջ աք՝ մտքներուդ չընկնի,  
 Բարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէ՛ք,  
 Էսպէս խայրենիք՝ քանդած թողեցիք :

Մասիսի անունն, Նոյսյ տապանի,  
 Արարատ դաշտին, Սուրբ Էջմիածնի,  
 Մեր խոր վիրապի, Սուրբ Գեղարդ Մուղնի,  
 Չըմոռանաք մինչ ՚ի օրն դատաստանի :

(1 Գնումէք • (2 Ղլլրաշի երկիր (Պարսկաստան) մէկ մասն է • (3 հարիւ  
 ու հաղար • (4 հիմի • (5 ումն էք թողնում • (7 վախենում եմ • (8 հայրենիք :

Աւքբա կուրանար, շէնքս կտորուէր :

Խեղճ Հայաստան , քեզ հազէս չըտեսնէր :

Թէ մեռած էի , ինձ երանի՛ էր :

Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր :

Սիրելի երեխերք , կարդագեցէ՛ք . էս խաղը շտտ ան-  
զամ , սովը՛ք սրան աւանց գիր ու երգեցէ՛ք : Ղորդ է , ու-  
րախ խաղ չէ սա , ձեր փափուկ ու նազ սիրտը կուցաւի սրա  
տխուր խօսքերը , ասելիս . բայց ի՞նչ անես . աւելի տխրել են  
էն հայերու սրտերը , որոնք որ իրանց ազգակիցներու տա-  
րաբախտ դրու թիւնը իրանց աչքով տեսել են ու լաց էլել :

Հայոց ազգը ունեցել է բախտաւոր ու ուրախ ժամանակ-  
ներ , ունեցել է բայց և շտտ քամբախտ ու տխուր ժամանակ-  
ներ . և ամէն ճշմարիտ հայն , մեր մօր Հայաստանի սմէն հա-  
ւատարիմ՝ որդին պարտական է իր աղբի ուրախութէնի հետ  
միասին ուրախանայ , ու նրա ցաւի ու տխրութէնի հետ միա-  
սին տխրի :

Իմ խելօք , իմ պատուական հայ երեխերք . կու մեծանաք ,  
ուրիշ գիտութիւններու ու սուսումներու հետ կուսովիք և  
ձեր ազգի պատմութիւնը ու էն ժամանակ կու իմանաք , որ  
մեր ազգըն էլ հին ազգերիցը մէկն է , որ ժամանակ է էլել երբ  
հայու ազգըն էլ մեծ ու գօրեղ ազգ է էլել , իր թաղաւոր-  
ներ է ունեցել , մեծ մեծ քաղաքներ թաղաւորախան պա-  
լատներով , հրաշալի վանքերով ու եկեղեցիներով . ունեցել  
է մեծ ուսում ու գիտութիւն , ու ուրիշ սզգեր մեղ մօտ են  
եկել ուսում ստանալու ու մեզկից բարի օրինակներ առնե-  
լու : Բայց մեր քամբախտութէնից չար հարեւաններ ենք ու-  
նեցել . որոնք որ մեզ միշտ նեղացրել ու վնաս են տուել , ու



վերջապէս իրանք էլ շատ զօրանալով՝ մեզ յազթել են ու մեր քաղաքները, վանքերը ու եկեղեցիները քանդել, ժողովրդին չարչարել, գերի առել : Ղորդ է, կորցրել ենք մեր թագաւորութիւնը, բայց պահել ենք հաստատ մեր հաւատը, մեր եկեղեցին, մեր լեզուն : Չնայելով, որ մեր հաւատի համար մեր անհաւատ զօրեղ թշնամիները մեզ սաստիկ ձեւերով չարչարել ու հալածել են, բայց մենք յանձն ենք առել ամէն նեղութիւնները ու հաւատարիմ ենք մընացել մեր հաւատին, մեր եկեղեցուն, մեր լեզուին . և էսպիսով Հայու ազգը պահպանուել է մինչև էսօր, էն ժամանակ որ մէկէլ մեզնից աւելի զօրեղ ազգերը բոլորովին ոչնչացել ու ջնջուել են աշխարհքի երեսից :

**Ա.** հայ ո՞րտեղ է երևում Հայու ազգի մեծութիւնը, և կարելի է ասել, որ չկայ ուրիշ ազգ, որնոր իր հաւատը ու եկեղեցին էնպէս սիրէ, էնչպէս Հայն է սիրում : . . .

**Ա.** ինչ էն երևելի քաղաքները ու վանքերը քարուքանդ են էլել՝ և ամէն ճանապարհորդ, որնոր հիմիկ գնումէ նրանց աւերակները սեսնելու, չի ըլի, որ հին Հայերու ճարտարութէնի (ուստութէն), գիտութէնի վրայ զարմանալով, մէկ սրտասունք չթափէ, որ էնպիսի գեղեցիկ ու մեծ աշխարհքը քարուքանդ է էլած հիմիկ : . . .

Հայաստանի միջով Սուրբ Արարատի տակով վազումէ մէկ մեծ գետ Երասխ՝ անունով : Սրա ափին՝ հին Նախիջևանից մօտ ՅԾ վերստ հեռու դէպ ՚ի հարաւ կողմը կայ հիմիկ մէկ գիւղ՝ նոր Զուղայ անունով : Սրա կշտին, հէնց Երասխ գետի ափին, քարափներու (ապառաժներու) մէջ կան աւերակներ : Ու ի՞նչ զարմանալի աւերակներ :

(1) Աւերակ են դարձել (2) և դեռ անուանումն են Արաքս, Երազ, Արազ :

Եւ էս էն տեղն է, ինչտեղ հին ժամանակ՝ 200 տարի առաջ, Հայու մէկ երևելի քաղաք մեծ մեծ ու շէն գեղերով էլել էս էն տեղն է, ինչտեղ էլել է մէկ ժամանակ երևելի Զուղան՝ :

Հիմիկ իմ սիրելի երեսներք, էն մեծ քաղաք՝ ու գեղերու տեղ, ինչպէս ասի, միայն աւերակներ էք տեսնում, քանդուած ու փուլելիած եկեղեցիներ, ահաբէն քարեր մէկմէկու վըայ դիզած՝ դաղաններու ու կարիճներու բնակարան դառած . . .

Բայց հիմիկ դեռ էլ էն աւերակների մէջ մանգալով շատ զարմանալի բաներ է տեսնում մարդ, որոց մէջը, զորորինակ երևելին է հին Զուղայի գերեզմանատունը, որնոր մինչև հիմիկ սաղսալամաթ<sup>2</sup> պահպանուել է : Ա՛խ ի՛նչ զարմանալի ու տեսնելու արժանի բան : Ամէն գերեզմանաքար էնպէս ս՛րուն նխշերով փորած, որ կարծես զալամով քաշած ըլի, մէկ տեղ տեսնու մես քարէ ղօջ<sup>3</sup> է կանգնած, մէկէլ տեղ գերեզմանաքարըը մարդու պատկերով կամ ձիու կամ մէկ կենդանիի կերպով կտրած ու շինած . և զրէ թէ (թիթքմիս) ամէն մէկ քար մէկ նշանակու թիւն ունի : . . .

1603 թուին, այն է 253 տարի սրանից առաջ Եաս Ապագ՝ Ղլբաշներու (Պարսից) թագաւորը, որնոր Օամանլուի (Տաճիկներ) հետ կուլ ունէր, եկաւ Զուղայի վրայ, որնոր էն ժամանակը Օամանլուի ձեռի տակն էր, տիրեց նրան ու ժողովը չին գերի առաւ ու տարաւ Իսպահան՝ էնտեղ բնակեցնելու : Խեղճ Հայերը, թ շնամիկց յաղթուած պէտք է թողնէին իրանց տուն ու տեղը, իրանց սերելի հողը, էն սուրբ տեղերը, որոնք որ ամէն օր միտն էին բերում Հայերուն նրանց փառքը ու ունեցած մեծ ու թիւնը, ու պիտի գնային անհա-

(1) հին Զուղայ, (2) ամբողջ, (3) ոչխար

ւատներու երկիր, զիտի հեռանային իրանց սուրբ հողից :

Եւ հա՛ն իր ազգակիցներու էս քամբախտողրու թիւնը աեսնելով՝ ասեց էն ժամանակ էս «Ափս՛ս քեզ Հայոց ժողովուրդ» խաղը կամ աւելի լաւ է ասել էս լացը մէկ Ստեփաննոս անունով վարդապետ, որնոր հէնց Զուղայի Սուրբ Նախավկայի վանքիցն էր :

Էս խաղի մէջ սրա ատողը մէ մէկ յայտնուեց իւեղճ՝ Հայերու դրու թիւնը, սրանց խաբահան գերի գնալը, մէկէններու գէտ ու գէն ցրու լըր իրանց մեծ մեծ եկեղեցիներու ու շէն գեղերու թողնելը, ու անհաւատներու մօտ դնալը ինդրու մէ, յորդորու մէ գերի գնացողներուն, որ ինչ տեղ էլ ըլին, հաստատ մնան նրանք իրանց հաւատին, չմոռանան իրանց հայրենիքը, Հայու սուրբ տեղերը, ու որ իրանց տեսածը իրանց որդիներանցը ու թոռներուն պատմեն, որ թող նրանք հեռուանց էլ սիրեն իրանց երկիրը, իրանց հողն ու ջուրը, որ թէև հեռու իրանց հայրենիքից, բայց էլ ի նրանց մտքի ու սրտի մէջ թող սուրբ մնան Հոյաստանի անունը, Հայոց էն սուրբ տեղերը, որոնք որ փառք ու պարծանք են ամէն Հայու համար : . . . .



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ :

	Երես
1. Երեխի սրտի խորհուրդը (ոտանաւոր) : . . . . .	1
2. Չատկի շաբթի իրիկունը ՔիՖլիզումը : . . . . .	5.
3. Երեխանց երգ սլրու վրայ (ոտանաւոր) : . . . . .	54.
4. Աստծու պատուիրանքները : . . . . .	56.
5. Բարի սիրտ (Թատրոնական խաղ) : . . . . .	44.
6. Հարուստն ու Խարաղը (առակ) : . . . . .	61.
7. Բնութեան վրայ խօսակցութիւններ . . . . .	.
Ա. խօսակցութիւն : . . . . .	67.
8. Չանաղան առակներ և մանրավէպներ . . . . .	96.
9. Ազգային երգ : . . . . .	103.







